



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Книжка Огюста

Бюджет Группы

891.99

№-79



ԱՊ  
ԿԱՓԷ  
ՆԿԱ  
Ն. 4 № 12

Մ. Զ. Զարմաթի  
Ամ. 290

ՈՒՍՈՒՐ ՕՂԷԻ

ԸՍԷ 7. 06 6.38.

# ԷՆՉԱՐԻ

## ՔՆԱՐԸ



891. 99  
ՈԼ - 79

ԲԱԳՈՒ  
ՊԱՐԱՆ "ԱՐՐՈՒ"  
1894

Am-290

Արմ.

3-4013a

ԲԿ

891.99

ՈՒՍՈՒՔ ՕՂԼԻ


ՈԼ-79

3-4013a

# Է Հ Ձ Ա Ր Ի

## ՔՆԱԲԸ

ՈՐՏԵ



ՄԻՅ. № 22384

ԲԱԳՈՒ  
ՏՊԱՐԱՆ «ԱՐՕՐ»  
1894

27.08.2013

59.600

10 NOV 2011

ԵՐԱԽՏԱԳԷՑ ՄՐՑՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Պ. ՍԻՄԵՕՆ ԱՐԶՈՒՄԵԱՆՑԻՆ

ՀԵՂԻՆԱԿԸ:

Дозволено цензурою Тифлисъ, 23-го Апрелья 1894 г.



40662-63



Յ Ե Ռ Ե Ջ Ե Բ Ե Ն Ի Տ Ե Ղ :



Ընթերցող հայ դասակարգին  
Շնորհում եմ ես մի տետրակ,  
Որ ինքն է ճիշտ իմ սեփական  
Մտքի ուժից բուսած վաստակ:

Երբ առաջին այս իմ երկով  
Ընդունելութիւն կը գտնեմ,  
Այնուհետև ոգևորւած  
Սրտով ասպարէզ կը մտնեմ:

Ու կսկսեմ մտքերիս նեղ  
Ստպարէզը լայնացնել,  
Գաղափարիս անշամանդալ  
Լոյսը պայծառ փայլեցնել:

Բայց շատերը չը կարծեն թէ  
 Իրանց նման կրթւած եմ ես,  
 Ուսման կողմից, հաւատացէք,  
 Բուժ զանակով մորթւած եմ ես:

Կան մարդիկներ այս տետրակը  
 ձիշտ քննութեան կը ենթարկեն,  
 Երգ կայ՝ կարգան, կը գոհանան,  
 Երգ կայ՝ կարգան, ինձ կը զարկեն:

Խնդրեմ ընթերցողներիցը  
 Որ ներեն պակաս պաատը.  
 Այս տետրակը մի այգի է,  
 Ունի պողին լաւն ու վատը:

Էհզար

Վաշնչոյթիւնս սով ե դառեալ,  
 Յարեալ խոր ծով ե դառեալ:

Ամենահաս Տէր իմ, հասիր, չուտով նեղութեանս հասիր.  
 Տեսնում ես որ նեղ տեղի դէմ է առել բանս, հասիր,  
 Անտակ ծովի մէջ եմ ընկել, մարառում եմ ափ չեմ գտնում,  
 Յուսահատւած մահամերձիս Գու Նոյեան տապանս հասիր:

Արդեօք մինչև նր ժամանակ պիտի տանջուիմ ես չարաչար.  
 Տաժանակիր անհանգստիւ, Տէր իմ, հանգստեանս հասիր,  
 Բարձր ժայռից կախ եմ ընկել, մի ձեռք հասացնող չունիմ,  
 Մազի վերայ օրօրում եմ, նեցուկ պահապանս, հասիր:

Նեղութիւնները ինձ վերայ տեղալով անձրևի պէս  
 Հեղեղ դառած ինձ քշում են, խղճա, ազատմանս հասիր,  
 Քո մեծ Նախախնամութեանդ երկար ձեռքը ինձ հասացուր,  
 Պարտականութեան մուրճերով կործանելիս տանս հասիր:

Ո՞ր իշխանի դուռն գնամ, օգնութիւն խնդրեմ նորանից.  
 Իշխանից ինձ օգնող չըլնիլ, դու ես օգնականս, հասիր,  
 Տէր իմ, որով Ուսուր Օղլուն չնորհել ես դու մեծ պատկառ,  
 Մարբացրու ինձ կեղտերից, լսիր ազաշանքս, հասիր:

\*  
 \*\*

Եթէ որ մի տան ճրագը  
 Աստուածային իւզով վառվի,  
 Ծովերով նրա կրակը  
 Զի կարելի որ սպառւի:

Խուսափում կայ գօրքի սրտին  
 Առանց հմուտ առաջնորդի.



Փառքից ընկած տանը որդին  
Սյս տեղ այն տեղ կը թափառի:

Ուսուր Օղլին մէկ տուն ունի,  
Բայց ոչ գերան, ոչ սիւն ունի.  
Սրտումդ ինչ թագուն ունի  
Մէկ օր յայտնի կը բարբառի:

\*  
\*\*

**Գ Ի Ի Ա Ն Ի Հ Ա Յ Ե Ի Է Ն:**

Սուրբ դրախտը վիճակ յուանը հոգու բաղձանքի համար,  
Ողբանք երկրորդ երանելի պանծալի կեանքի համար.  
Սրգեօք է՞ր չենք մենք հասկանում հոգու ազնուութիւնը,  
Սյլ անգաղար աշխատում ենք մարմնոյ բերկրանքի համար:

Հոգով մարմնով մի էակի հանապաղ պարտական ենք.  
Սյնպէս անենք, որ մեր հոգին մեզօք չապականենք,  
Սյլ աղօթքով աղերսանքով պէտք է մարուր պահպանենք  
Լինելու մեծ քննութիւն գործած յանցանքի համար:

Եթէ ուզենք յաւիտենական հանգիստ ժառանգութիւնը,  
Պէտք է հանենք մեր սրտերից մարմնոյ չար ցանկութիւնը.  
Ուսուր Օղլի, հայցիր Տէրին երկնից երջանկութիւնը,  
Գծովքի զօրքը պատրաստեն հոգու տանջանքի համար:

\*  
\*\*

**Ի Ն Չ Ա Յ Ս Պ Է Ս Է Թ Ի Ո Ի Մ:**

Երկերը միշտ երկնքից գուլթ կառնի,  
Պատճառ հոյը ամպի բերքից ջուր կըմպի,

Բոյսը հողից, գործը փողից նիւթ կառնի,  
Խելքը խելքից, սուրբ վերքից ջուր կըմպի:

Կորած բանը կըզտնուի ման գարով,  
Խնդասիրտը միշտ կը խօսէ խնդարով,  
Սգաւորը կը մխիթարի սգարով,  
Լացող հոգին միշտ լացերգից ջուր կըմպի:

Մարրութիւնքը հոգեկան սուրբ պահանջ են,  
Յանցանքները կեանք ու հոգի կը տանջեն,  
Միտքը գլխից, խակ գրուխը ականջէն,  
Սիրտը աչքից, անձը կեռքից ջուր կըմպի:

Ս.դաշում է ինձ նման յանցաւորը,  
Գուցէ մեզրս ների մեծ թագաւորը.  
Ս. խ, երբ կը գայ, երբ կը լինի այն օրը  
Ուսուր Օղլին մի սուրբ ձեռքից ջուր կըմպի:

\*  
\*\*

**Ս Ի Բ Ե Լ Ի:**

Դիմացդ կանգնած էի միամիտ անմեղի նման,  
Անցաւ սէրդ սրտովս ծայրը սուր ասեղի նման,  
Աշխարհից փախչում էի, որ պրծնէի քու ձեռքիցդ,  
Ծամերդ ինձ փաթաթեցին, բռնեցին բաղեղի նման:  
Սրտիս հանգւած փառարանը փառվեց սէրիդ կրակիցը,  
Կարծես կայծերդ ինձանում թաղած էր անթեղի նման:  
Հաւատա, ճիշտ եմ ասում, ինչ մարդ տեսնէ այդ պատկերդ  
Արեգակը նրա աչքին կերելի տեղի նման:  
Գարնանային լուսնից ցոլւած գոյնզգոյն ծաղիկները  
Համարձակ գոյն չեն բացիլ մօտումդ շքեղի նման:

Լօնդօնը կամ Փարիզն որքան ունեն չքեղութիւն  
 Քեզ տեսած գեղեցկութեամբ նրանք են մէկ գեղի նման:  
 Թէ տեսնեն քեզ կռապաշտք, կը շինեն իրանց զիցունհի,  
 Կը պաշտեն խոնարհելով մեհրաբի կանթեղի նման:  
 Կիսամեռ թմրածներին եթէ մի բերան բարև տաս,  
 Կը կանչեն ու կը ծածկեն քերծի բուսած քեզի նման:  
 Ի՞նչ կը լինի մի այցելես դու խղճալի Ուսուր Օղլուն,  
 Որ քեզ համար արտասունքը թափում է հեղեղի նման:

\*  
\*\*

**ՀԱՅԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԷՋ ԲԱՐՉՐԱՆԵԼԻՆ:**

«Շային մեծ կարգեցին», կասէ առակը.  
 Հազին չուխան վերցնել տուա եզրօրը,  
 Վերարկուն հօրը:  
 Հօր եզրօրը սրբել տուա տան բակը,  
 Ազգականին շարակ տուա փտօրը,  
 Կեղտուեց շորը:  
 Չը ճանաչեց բարեկամին ու իրան,  
 Գիփունց վերայ բացաւ անմարուր բերան,  
 Այնքան բշտեց խշտեց սրան և նրան,  
 Պատուից ընկաւ դարձաւ նախկին ստօրը,  
 Զուլն ընկաւ փորը:  
 Իմ պապիս պատմածը պահում եմ մտիս.  
 Լըղար մարդը եթէ բռնէ իւզ ու միս,  
 Մարդկութեան մէջ նա կգառնայ խողից փիս.  
 Շատ ժամանակ կը սրէ իր ոսկօրը,  
 Կը խփէ մօրը:  
 Եթէ մէկ հայ պաշտօնով մեծագահէ  
 Իր ազգակցին չը սիրէ ու չը պահէ,

Նրա շուտ մեռնիլն ապրելից շահ է,  
 Մարդկանց մէջին անմահ նշանաւորը  
 է շահաւորը:

Ուսուր Օղլի, դու խօսիր պարզ խօսքերով.  
 Վնաս չէ, թող նայեն քեզ վատ աչքերով.  
 Լաւ խմացիր, գոռոզ կողկաւ սրտերով  
 Շքեղ Անին դարձաւ Սողոմ Գոմօրը  
 Բախտն ընկաւ հօրը:

Մարդկանց մէջին օրս վայ է,  
 Հազինս թափմա չուխայ է,  
 Տեսնողն ինձի կասէ,  
 Միթէ Ուսուր Օղլին սա է:

\*  
\*\*

**Ս Ո Ւ Ա Կ Ի Ս Ի Բ Ա Լ Ի Բ Կ Ա Ր Յ Տ Բ:**

Սոխակ, ինչու ես վարդի համար անխ քաշում այգբան  
 Խոր հառաչանքով,  
 Սէրի մագնիտով բարակ սիրտդ թրաշում այգբան  
 Մեծ կարօտանքով,  
 Միսդ ուտում ու ոսկօրներդ տաշում այգբան  
 Սրտի կրանքով,  
 Վարդից մէկ դառն լուր լսելիս վնշ վնշում այգբան  
 Տարակուսանքով:  
 Ո՛չ, ո՛չ, շատ սխալ եմ ես, գժւար է սէրի բանը,  
 Խօսքերիս եմ փոշմանը,  
 Սէրը մէկ կրակ է սիրահարի սրտի տանը  
 Միշտ կայրէ ջանը,  
 Այժմ գիտեմ, որ քեզանում է նոյն վառարանը  
 Պարզ է նշանը,

Սիրահարութեան կրակով ես քեզ խաշում այգրան  
 Անդրիջ բաղձանքով:  
 Չես կարող ձեռք վերցնել վարդից, յատուկ սիրականն ես  
 Միշտ հոգուն տանն ես,  
 Նրա արժանիքը վայելելու դու խոսի արժանն ես  
 Սէր անբաժանն ես,  
 Անաղատ ես մինչև մահդ քաջ պահապանն ես  
 Սերտ սիրաբանն ես,  
 Սէրի համար ես խարի հետը կռիւ քշում այգրան  
 Արեան հոսանքով:  
 Երբ ընկնում է գարնան երեկոյեան հովը  
 Գնում ես վարդի քովը,  
 Թռչկոտում ես դու նրա կենսատու շքովը  
 Ընկնում վզովը,  
 Ես էլ քո պէս շատ եմ քաշում սիրածիս սէրի սովը,  
 Ընկել եմ ծովը,  
 ձիշտ ասած՝ Ուսուր Օղլին պէս դուր ես քեզ մաշում այգրան  
 Սէրի զրկանքով:

\* \* \*

Վ Ի Ճ Ա Կ:

Անցաւ կեանքիս երեսուն ու չորս տարին,  
 Կեանքի ճաշակներին անտես մնացի,  
 Կողքս գեանին ու գլուխս չոր քարին,  
 Որքան աշխատեցի, հէնց էս մնացի:  
 Ինչ ընկերներ ինձ հետ հասակի հասան,  
 Նրանցից շատերը փախազի հասան,  
 Իսկ որոնք խեղճութեան կրակի հասան,  
 Նրանց մէկը աշխարհում ես մնացի:

Թողէք լսողները ինձ չը կարծեն ծոյլ,  
 ձիգ ու ջանքից կայ ինձանում մեծ նշոյլ,  
 Խեղճ Ուսուր Օղլին եմ, ոչ ծոյլ, ոչ թոյլ,  
 Միայն թէ վիճակ է, այսպէս մնացի:

\* \* \*

Ս Է Բ:

Սիրով տունը տեսայ ապրուստով լիքը.  
 Անտէր տանը փառք, ապրուստ, փայ չտեսայ,  
 Շուտ զօրացան սիրով տանը որդիքը  
 Եւ նրանց մէջ լաց, վախ ու վայ չ'տեսայ:  
 Սէրը արուեսակ է իր պայծառութեամբ,  
 Ատելութիւնն է դէմը առնող ամպ,  
 Անտէրութեան քանդակած ասեմ ճշտութեամբ,  
 Միայն մենք ենք, այլ ազգ մեզ թայ չ'տեսայ:  
 Ուսուր Օղլին գրեց այս տասներկու տող,  
 Իւրաքանչիւր տողն է խուլ ականջի փող,  
 Հաստատ սրտով մեր տան ցաւին հոգացող՝  
 Հազարի մէջ հինգ անկեղծ հայ չ'տեսայ:

\* \* \*

Յ Ը Ն Կ Ե Ր Ծ Ե Կ Ի Բ Ը Ն:

Անցեալ երեկոյին մենակ, բախտի վերայ խօսում էի.  
 Ա՛խ ի՛նչ տեղ ես մեր տան վիճակ, ճնջորարով ասում էի,  
 «Ուրախանալն վայ է ինձ, ողբարու լալն վայ է ինձ.  
 «Կամաց եմ խօսում չեն լսում, բարձր խօսալն վայ է ինձ:  
 «Արիւն է ողբում բլբուլը, տարուն է ողբում բլբուլը.

«Այս ձմեռն սաստիկ ցուրտ է, գարունն է ողբում բլբուլը»:  
Մերթ քաղաքից և մերթ գեղից, մերթ շրեղից, մերթ տգեղից  
Բայաթիներ էի ասում, մէկն այստեղից, մէկն այն տեղից:

Ահա տեսնեմ մէկ առաւօտ  
Մէկ մարդ կանչեց ինձ իրա մօտ.  
Նախ սրտից խոր թառաշ հանեց  
Ու գարձաւ ինձ պատասխանեց.

«Անմիտ տղայ, ականջդ բաց, լաւ լսիր իմ պատմութեանը.  
«Ես ինքս եմ համայն ազգաց անցեալներին վիպասանը.  
«Արդէն քանի հարիւր ամ է, սէրի համից հայր խամ է,  
«Օտարը ձեզ բարեկամ է, հայն է հային դաւաճանը:  
«Գիփ բարձր են, հայր ցածն է, անսէրութեան ախտիցն է,  
«Վատ սրգոց անբախտացածն է ձեր խղճալի Հայաստանը,  
«Պատճառ հաստատ տէր չի տեսել և որպոց մէջ սէր չի տեսել,  
«Բացի փնաս՝ խէր չի տեսել, որ հասել է այդ օրւանը:  
«Ես աշխարհն եմ տեսածներս, ողջ են սերում բուսածներս.  
«Թող կաց լինեն ասածներս քու հարցերիդ պատասխանը:  
Ուսուր օղլի, բուոց բունը լաւ է քան թէ անսէր տունը,  
Սէրութիւնն է տանը սիւնը, իսկ միութիւնն է գերանը:

\* \* \*

Ով նենգամիտ չար ժամանակ  
Ի՛նչո՞ւ ես ինձ խեղդում, տանջում,  
Միթէ իմ լաց, ողբ ազազակ  
Զեն ներգործում քո ականջում:

Նժոյգն իմ, թամբը քոնը.  
Բողոքն իմ, խնամբը քոնը.  
Սիրաը քոնը, կամբը քոնը,  
Ոչ որից չես վտարանջում:

Զեռքիս եղածն ես դիփ լալել,  
Հարստացել, ծաղկել ծլել.  
Ուսուր օղլու պէս խեղճն էլ  
Ի՛նչ ունի, ի՛նչ ես պահանջում:

\* \* \*

Ի Ն Զ Վ Ե Ր Ը Յ:

Անբախտութեան մուրճերով այնքան սաստիկ թափւել եմ,  
Ել ինձանում ջան չկայ, դէպ գերեզման հակւել եմ:  
Թէ գործս այսպէս գնայ, կերպը չը բարեփոխի,  
Այս գլխից ինձ յայտնի է, վերջը խայտառակւել եմ:  
Միտս ու սոկորներս կերաւ, կեանքիս վերջ տաւ.  
Այս ի՛նչ տեսակ ցաւեր է, որոնց ես վիճակւել եմ:  
Հոգունս չեմ իմանում, նա միայն Աստուած գիտէ  
Մարմնաւոր կեղտերից՝ մնց ասեմ իստակւել եմ:  
Խեղճութիւնի պատճառ այն տեսակ ես խեղդւած եմ  
Լեզուով, բերանով, խօսքով, ամեն դռնով փակվել եմ:  
Նամուսը ես զգալով, վատ ապրելս տեսնելով,  
Մահը աչքիս տակն առած կեանքիս հակառակւել եմ:  
Ուսուր Օղլին եմ, այսքան ցաւերին չէի համբերիլ,  
Աստուածանից պատիժ է, որ ես հպտակւել եմ:

\* \* \*

ՅԱՆԱԼՐԹԱԺԻՆ ԲԱՅԱԹԻ:

Սարգիս, օրդ դառնացաւ,  
Տար ամառդ սառնացաւ,  
Օրըստօրէ շալակդ  
Ծանրանալով բեռնացաւ:

ԵՐԵՒԱՆԵՑՈՒԹԻՒՆ ԱԶՆՑ:

Քու աչքերիդ երևացող սիրունը  
Իմ աչքերիս խմացիր գէշ է թւում,  
Քու աչքերիդ երևացող գիտունը  
Իմ աչքերիս մի յիմար էշ է թւում:

Ինչ ապրանքի որ դու տամ ես նորի գին,  
Իմ աչքերիս երևում է նա շատ հին,  
Քու աչքերիդ երևացող նծույց ձին  
Իմ աչքերիս պառաւ գոմէշ է թւում:

Քու աչքերիդ Ուսուր նուաստը,  
Իմ աչքերիս սև քարէ թանգ արմաստը,  
Քու աչքերիդ բեհեղեայ առադաստը,  
Իմ աչքերիս քարէ պատնէշ է թւում:

\*  
\*\*

Ա Ղ Ք Ա Տ Ի Վ Ի Ճ Ա Կ Ը:

Աղքատ, վիճակիդ վերան մի՛նչ երբ ողբաս բամբասես,  
Ծեղ ցաւդ շինես գերան, մտածմամբ քեզ վնասես:  
Կեանքումդ չես մխիթարում, չես հագնում զարդարում,  
Ուղածդ չի կատարում, փափազների անհաս ես:  
Մանուկներդ մերկ նկուն շատ վախտ քաղցած կանես քուն.  
Ո՛ր իշխանից օգնութիւն արգեօք պէտք է սպասես:  
Մէկը թէ խօսի բարիդ, տասն կըհակեն շարիդ.  
Չես սխալել ճշմարիտ թէ քեզ փատաբախտ ասես:  
ձիշտ այսքանը խմանաս, հեռու յոյսի դիմանաս,  
Արքայութիւն պիտ գնաս, մտից ու իւզից պաս ես:  
Հոգի յուսա օրով քեզ, փաթաթիր հին շորով քեզ,

Պէտք է քաղցած փորով քեզ արդարոց կարգը դասես:  
Տարին է գալիս անցանում, հանգը սերմը չես տանում.  
Էլ այս կեանք ի՛նչ ես ցանում, որ այն կեանք հնձես, կասես:  
Գործիդ մէջին կաց արթուն, փէշը բռնիր Աստուծուն.  
Թէ լսես Ուսուր Օղլուն, կասեն խելքից պակաս ես:

\*  
\*\*

Ով խելք ունի բնակաս,  
Վաստ կըխնի մշտակաս:

Ինչ մարդի խելքի խառն բնական շնորհք չ'լինիլ,  
Նրա մտքի աշխարհումը զգայութեան զօրք չ'լինիլ:  
Անկիրթ բնական խելօրը նեղութեան մէջ քաջ կ'լինիլ,  
Խաղաղ, զգայուն սրտի մէջ շփոթող ցնորք չ'լինիլ:  
Այծին մազը մանելով, կըթելով, ռանգ տալով,  
Գործելով երբէք նրանից գեղեցկագարդ գորգ չ'լինիլ:  
Մեր ազգի մէջ բարեգործք վեհափառներ շատ ենք տեսել,  
Բացի Ներսէսից ոչ մէկը վեհագործ Գէորդ չ'լինիլ:  
Ուսուր Օղլի, ձեր անդպրոց հինգ հարիւր տուն Խնձորեսկը  
Ուսմամբ անող, բարգաւաճող Երևանի Նորք չ'լինիլ:

\*  
\*\*

Գ Ե Ղ Ե Յ Կ Ո Ւ Յ Ի:

Ընդհանուր աշխարհքը հաւաքւած այսօր  
Ողջ նայում են գեղեցկութեանդ վերայ.  
Տեսնում են լուսինը նախանձից մոլոր  
Երջում է երկնքում նշանդ վերայ:

Աղաչեմ Աստուծուն քեզ համար օրով  
Կործանէ շարերդ հզօր է, սրով



Ուզարկէ հրեշտակ գայ հսկէ, սրով  
Կանգնէ մինչև ի լոյս քու տանդ վերայ:

Լսիր Ուսուր օղլուն, չքնաղ Մարիամս,  
Գու ես օրս կեանքս, հոտս ու համս,  
Մէկ մէկ հանեն երսուն երկու ատամս,  
Թաք գլուխս լինի ծնկանդ վերայ:

\*  
\*\*

ԱՐԳԵՑՔ ԲԵՉ ԻՆՉ ԱՍԵՄ ԲԱՆՑ, Է՞Ր ՉԵՍ ՏԱՄ ԻՆՉ ՈՍԿԻ ԹԱՆՑ:

Բախտ, որ բանդ միտք եմ անում, ցաւդ է ինձ վիրաւորում,  
Որովհետև չես հասկանում, յարգը ումն է հարկաւորում:  
Համ շատ համով, համ անհամ ես, յիմարներին բարեկամ ես,  
Խելօքներին թէ և տամ ես, բայց փոշմանում ես, թնթորում:

Այն մարդին ես տեւլ փառքը, չ'գիտէ ինչ է աշխարհքը,  
Իր մարդկութեան վարքը բարքը խողարածիցն է սովորում:  
Ձին տեւլ ես ծոյլ կաղերին, մի ուլ չես տամ քաջ սաղերին,  
Հայոց ծարաւ չոր բաղերին լինչու չես մի առատ ջրում:

Խելօքներին ցանկութիւնը է մեծ սովի թանգութիւնը.  
Յիմարին երջանկութիւնը լուսին լուսին ես միշտ նորում:

Ազուալին սոխակ սիրական, առիւծ աղուէսին պարտական,  
Իմաստալիր մարդիկ շատ կան, այժմ ձիանց մէջք են քորում:

Կոյրը տէր եղած զարդերին, աչքաւորը մէջ զարդերին,  
Հոտաւէտ կարմիր վարդերին կաշաղակն է թազաւորում:

Յողում ես չարեաց ծաղկանցը հաւանելով արարմանցը,  
Արժանաւոր լաւ մարդկանցը աղբատութեան ես աքսորում:

Տասին հինգ մանէթ կարճ . . . դին շահով փող է տալիս եաղին.  
Տունը քանդում է աղբատին, յետոյ ցեխի մէջ գլորում:

Կը բռնեմ յոյս, չեմ քաշիլ վաճ ու կը հազնեմ հին տրխամաշ.  
Ամօթ բան չէ թէ ապրեմ քաշ, մի քիչ նամուսն է ինձ զօռում:

Բախտ, նստէի թախտիդ վերայ, տէր դառնայի վախտիդ վերայ,  
Ասէիր ինձ, բախտիդ վերայ, Սարգիս, սուր ես էլ ճնջորում:

\*  
\*\*

ԻՄ ՀԱՐԱՉԱՑ ԵՂՐՕՐ ԽԱՉԱՏՈՐԻ ՄԱՀԱՆՆ ԱՌԹԻԻ:

Աշխարհ, դու ինչ խղճմտանքով  
Մահացրիր իմ եղբօրըս.

Որդու մահւան կսկծանքով  
Այրեցիր իր պառաւ մօրը:

Որդուն տեսնել էր փափագում,  
Կապ թողեցիր նպատակում.  
Քսան ութ տարւայ հասակում  
Տւիր մահային աքսորը:

Գուցէ այնպէս էր վիճակը,  
Շամախի մնար դիակը.  
Աստուած պահի Արմենակը <sup>1)</sup>  
Գառնայ ճրագ իրա հօրը:

<sup>1)</sup> Արմենակը եղբօրս որդին է: Եղբայրս իր որդուն  
կարօտ մեռաւ 1892-ին, խօլերայից:

Անցաւ գնաց առ մաղթանքը  
 Ուսուր Օղլուն աղաչանքը,  
 Ներքը եղբօրս յանցանքը,  
 Այն կեանք խաղաղ լինի օրը:

Այս իմ փոփոխական բախտս  
 Կեանքիս դաւաճան է դառել,  
 Երջանկութեամբ լի դրախտս  
 Դժոխքի նման է դառել:

Գտայ վատը, կորաւ լաւս.  
 Վատի հետը միշտ կայ դաւս.  
 Ծեղից էլ շատ բարակ ցաւս  
 Հիմա հաստ գերան է դառել:

Մարդը կառաջանայ մարդով,  
 Ես կմնայ չար թակարդով.  
 Ում խփել եմ կարմիր վարդով,  
 Այսօր մի վատ բան է դառել:

Կտրել ինձ պէսին ճարը,  
 Զուր եմ եկել ես աշխարհը.  
 Իմ արիւնիս ծարաւ չարը  
 Վերաս պահապան է դառել:

Ուսուր Օղլի, անուրախիս  
 Հասնող չ'կայ ախուժախիս.  
 Լայն աշխարհը այս օր գլխիս  
 Մէկ նեղ գերեզման է դառել:

Սէրը ամեն բանից քաղցր է  
 Ու ամեն բանից էլ բարձր է:

Աշխարհի մէջ ամեն քաղցր բանից  
 Նախ երկնային անմահ Տէրը քաղցր է,  
 Տէրից յետոյ ամեն ստեղծականից  
 Մարդու իրա հէրն ու մէրը քաղցր է:

Եղբայրը սառչում է եղբօր սէրիցը,  
 Որդին իրա հարազատ հօր սէրիցը.  
 Թէ հօր, թէ քրոջ, թէ մօր սէրից  
 Սիրած սիրականին սէրը քաղցր է:

Ուսուր Օղլի, սէրից մի՛ փախնիլ երկայն.  
 Սէրի համար ծնեց երկնային արքան,  
 Եթէ ընես սէրը չէ քաղցր միայն,  
 Սէրի մէջի ողջ գործերը քաղցր է:

\* \* \*

Ղ Ո Յ Մ Ա:

Գարնան աւետիքը ստացար էս օր,  
 Հասաւ քեզ մայիսին բարև սոխակ,  
 Փաթաթեց վզովդ մինչև ի կէս օր  
 Կարմիր վարդին կանաչ տերևը սոխակ:

Այժմ քեզ կարծում եմ ինձնից բախտաւոր.  
 Ես չեմ տեսնում իմ կեանքի մէջ ուրախ օր,  
 Իմ բոլոր ցաւերս քեզ պատմեմ, թէ ուր  
 Միշտ վրաս է օրերին սևը սոխակ:

Աչքովդ տես, անս վիճակս սա է.  
Վարդ եմ ցանել, այժմ քաղածս վայ է,  
Էս օր էգուց մար մտնելու վրայ է  
Ուսուր Օղլու կեանքի արևը սոխակ:

\* \*

Ե Ր Դ Ս Ի Ր Ո Յ:

Ստեղծողը քեզ ստեղծեց, որ դու իմ կեանքս պահպանես  
Եւ ոչ թէ ստեղծեց քեզ սիրով տանջես, հոգիս հանես,  
Եթէ այդպէս ես վարուելու վառւած սիրահարիդ հետը,  
Լաւն այն է, միանգամայն սրով խփես, ինձ սպանես:  
Ինչպէս Փառանձեմ թագուհին Արշակունեաց տունը քանդեց  
Սրտիս տէրութիւնն նոյնպէս ուզում ես, որ դու կործանես.  
Համով հոտով քնքշութեամբ որքան նմանում ես, կեանքի  
Սիրոյ ճանապարհում նոյնքան և փշալից բուրաստան ես:  
Սյդքան որ զրկանք տալով ինձ տանջելով մեղք ես անում,  
Արդեօք վերջը դու Աստուծուն ինչպէս պէտք է պատասխանես,  
Գեղեցկութիւնդ տամ է քեզ ազատօրէն մեծ իրաւունք,  
Ոչ ոքից երկիւղ չունես, ում ինչ ուզես այնպէս կանես:  
Մինչև հիմա Ուսուր Օղլուն որքան տանջել ես սիրովդ,  
Բաւական է այսուհետեւ քու խեղճդ է, խնամք անես:

*Յարօք եւ վարձեալ, կեանքն իմ դարձեալ  
Սակաշն ունիմ յոյս, տայ ինձ բռնժման շոյս:*

Ստուած կեանքիս համար մի օր կ'ընայ.  
Իմ բախտիցս ես խռոված չեմ մնայ,  
Տխուր սիրտս իր փափազը կստանայ,  
Նեղ վիճակում միշտ նզովւած չեմ մնայ:

Ես էլ եմ շատ ուզում որ հարստանամ.  
Բախտը ինձ չի թողում կեանքի մօտենամ,  
Սրանից էլ աւել թէ աղքատանամ,  
Կամ կը մեռնեմ կամ վատ դովւած չեմ մնալ:

Կ'լինեմ ջերմեռանդ յոյսի սպասող,  
Կըզայ գարուն, ծաղիկներիս կ'տայ ցող,  
Երբ չունենամ ինձ հինգ կոպէկ հացի փող,  
Կանեմ մշակութիւն, սոված չեմ մնալ:

Խեղճ Ուսուր Օղլին եմ, նայեցէք թերթիս.  
Գնդակ դիպաւ, քանդեց պարիսպը բերդիս,  
Անմահ տէրը ջուր կածէ ծարաւ լերդիս,  
Անձով այրված, սրտով բովւած չեմ մնալ:

\* \*

Մ Ե Ղ Ե Ի Ն Ե Ի Հ Ա Յ Ե Ի Ե Ն:

Սարգիս, մարդ ես, լսօ տուն ես, ձեռքեր գլուխս ոտ ունես.  
Թող կաց հարցաքննեն քեզ, տեսնեն համ ու հոտ ունես:

Սարգիս, թող աչքին չիւզ տայ, ով երեխին երկիւղ տայ.  
Գու տունիդ փոքրուց անկի, որ մեծանայ պտուղ տայ:

Սարգիսը ակ կ'դառնայ, ականջի թակ կ'դառնայ.  
Մոխրիս մէջին կայծեր կայ, փչես կրակ կ'դառնայ:

\* \*

*Ով որ կարդայ գրութիւնս,  
Նա կ'իմանուց դրութիւնս:*

Կորած ու մոլորած մի աղքատ հայ եմ,  
Յայտնի անուն չունիմ ինձ անւան միջում,



Ինձանից խեղճ աղբատներին կը նայեմ,  
Ես էլ կ'զիմանամ նեղ օրան միջում:

Բախտից ինձի էլ օգնելու յոյս չկայ.  
Թէ ում որ կայ, միայն խղճալոյս չկայ,  
Հաւատացէք, ճշմարտութեան յոյս չկայ  
Խարերայ վիճակին ջուխտ ական միջում:

Խեղճ Ուսուր Օղլին եմ, ասում եմ հաստատ.  
Մէկ տուն ունեմ, չունի սին ու գերան, պատ.  
Իմ չքաւոր գրութեանս համեմատ  
Ապրում եմ գետնափոր քերձի տան միջում:

\*  
\*\*

Ա Յ Խ Ե Ր Հ Ի Վ Ե Ր Ը Յ:

Աշխարհ, ում որ դու սիրել ես, սրտին ուզածն արել ես  
Երջանիկ վայելչութեամբ, սիրածներիդ մխիթարել ես,  
Տունը արծաթից ես շինել, մէջը ոսկով զարդարել ես.  
Ում չես սիրել չորս կողմովը, կրակներով չափարել ես,  
Մի կտոր հաց տալու անգամ խղճմտանքդ քարել ես:

Յիմարներին բախտ ես տել, ոսկի ծառից ծաղիկ քաղեն,  
Խելօքները նստեն քաղցած, գետի վերայ մոխիր մաղեն.  
Այդ մասին հարուստները թող չի փրենն ու ծիծաղեն.  
Մէկ մէկ նրանց հանելու ես իրանց ծաղկազարդ օթաղէն,  
Շատ հարուստների տան տեղեր տեսել ենք բահով վարելիս:

Քեզ Աստուծու տեղ կ'աշտէ, ում փոքր ինչ քաղցր նայես,  
Էլ չի կարծել թշնամին ես, մէկ օր լրա կեանքին վնջ ես.  
Գու մեր կեանքը կառավարող, մէկ կեղծաւոր սուտ վկայ ես  
Չուանովդ հոր չեմ մտնիլ, որովհետեւ խարերայ ես,  
Ում մեղրահացով պահել ես, վերջումը թոյնով ճարել ես:

Ինչ իշխան քու տւածով իրան գովեց ու մեծարեց,  
Շուտով ընկաւ ձախորդութեան, փառքը տափին հաւասարեց,  
Ընկաւ հարստութեան գահից, էլ ապրելում գործ չը ճարեց,  
ձարահատեալ նօքար մտաւ, մէհտար դառաւ ձի թիմարեց,  
Անպատշաճ գործերի հետ աղիւ պատկանն կարել ես:

Ուսուր Օղլի, աշխարհը քեզ ամենին չէ մխիթարում,  
Տանջանք է այդ, ոչ թէ ապրուստ, որ բաշում ես դու աշխարհում,  
Նայում ես գրութեանդ, ճգնաւորի կեանք ես վարում.  
Ընկել ես դու ծովի մէջը, չարչարումես անի չես ճարում,  
Մէկ բռնելու էլ բան չկայ, լող տալուցը բեղարել ես:

Սարգիս, էր ես նինջ անում,  
Խօսող լեզուդ մունջ անում,  
Թող քեզ ասեն արտ չունէ,  
Այլ արտից է փունջ անում:

\*  
\*\*

Վիճակի փոխախն երբեք ամօթ չէ,  
Թե եւ շատ մարդ քաշ սարեղին ծանօթ չէ:

Հարուստ մարդը եթէ որ աղքատանայ,  
Նրա բան անեն ինչ ամօթ բան է,  
Սարգիային վիճակը փոփոխական ա,  
Բախտի կործանելն ինչ ամօթ բանէ:

Այնպէս մարդ կայ համարեան իմաստուն է,  
Ոտից մինչև գլուխ նա գիտութիւն է,  
Իսկ ջէբը դարգակ է, հացի փող չունէ,  
Ծառայ մտանելն ի՛նչ ամօթ բան է:

Անբախտութեան համար ոչինչ է լացը.  
Երբ որ խորակ չկայ, ցամաք կեր հացը,  
Զի չունես, ցորենդ տանես ջաղացը,  
Շալակով տանելն ի՛նչ ամօթ բան է:

Ուսուր Օղլին համբեր կառնի նրանից.  
Ով աղբատէ, ով անբախտ է իրանից,  
Աշխատանքը կըծող օձի բերանից  
Մարդ լեզուով հանելն ի՛նչ ամօթ բան է:

\*\*\*

### ՇԻՔԱՍՏԱՆԵՐ ՀԱՅԵՐԷՆ:

1) Բախտը նայից սառն ինձ,  
Զի ասեց պատճառն ինձ,  
Ամենքին քաղցր տեց,  
Խմացրուց դառն ինձ:

2) Աշխարհին դարդը ես եմ  
Զի սիրած մարդը ես եմ,  
Անթառամ ծաղկանց մէջին  
Թառամած վարդը ես եմ:

3) Ինձ պէս սիրահար չկայ,  
Քեզ պէս սիրող քար չկայ,  
Այս ցաւս բու ցաւդ է,  
Պէտք է քաշեմ, ճար չկայ:

4) Փայտը տար տաշողին տուր, ախր թրաշողին տուր,  
Այդ ցաւդ ես քաշող չեմ, խեղճ ես տար քաշողին տուր:

### ՂԱԶԵԼ ՀԱՅԵՐԷՆ:

Դարձեալ նոր նոր ցաւերի եղար շղթայած գերի, սիրտ.  
Այժմ դառն տանջանքների դէմը քաջ կաց, համբերի, սիրտ.  
Խնդրիր, աղաչիր Աստուծուն, ողորմած է նա և լսող.  
Գուցէ մէկ օր այդ ցաւերիդ փարատման ճարը բերի, սիրտ:  
Այն և նա կը բժշկէ իւր վթութեան ճարովն քեզ,  
Մի ասիր, ենթարկել եմ անբուժելի ախտերի, սիրտ.  
Նրանով մեծ յոյսի տէր կաց, չլինի թէ յուսահատես.  
Նա բուժման ձեռք դնող է ամեն տեսակ վէրքերի, սիրտ:  
Վշտագին Յովբայ նման Աստուծու միշտ փառաբանիր,  
Դաժան կեանքի մէջ ծառայիր Յոյս, Հաւատի և Սէրի, սիրտ.  
Լսիր դու խեղճ Ուսուր Օղլուն, ապաւինիր սուրբ բժշկին,  
Փափագներդ կը կատարէ չի թողիլ երբէք թերի, սիրտ:

\*\*\*

### Վ Շ Տ Ա Գ Ի Ն:

Յովբայ նման ցաւերովս տանջուում եմ,  
Անբուժելի անձնատկարի նման  
Օրէցօր բնական զարգից ջնջումեմ  
Կործանւած պալատի նկարի նման:

Պրծաւ կեանքս ինքն իրան ուտելով,  
Հանգիստ օրը իմ կեանքի մէջ սուտելով,  
Ցաւերս զիփ միմեանց վերայ կուտելով  
Երևում են աչքիս դէմ սարի նման:

Խեղճ Ուսուր Օղլին եմ, թէ գայ Լոզմանը,  
Յոյս չունեմ հասկանայ ցաւերիս բանը,  
Ես ծառաս կսպասեմ Փրկչի բուժմանը  
Հայոց սուրբ թագաւոր Աբգարի նման:

ՄԱՍԶ ԽԱՐԻՔԻՅ ԸՆԴՈՒՄ

Մուսջ Խարիքիյ Ընդում, ճշմարտութեան ծառայի.  
Բառաստուանդ անցնի է, օրհորդի խնայի:

Պատուելի, զուր ես լծել զու այգալիսի կեղծ շարթի հետ.  
Տեսնում եմ շատ ես խօսում սուտ զեր անոյ կախարդի հետ,  
Սիրտը սրտին պէտք է կանի, սէրը սէրին հետ միանայ.  
Ո՛ւր ես տանջում սէրը զօրով միացնող թակարդի հետ:

Անսէր սրտի ամուսնութեան կապը գլխից կտրւած է.  
Շողած կաթը ամբանալու շողկապ չունի մակարդի հետ,  
Լաւ տարիքդ անց են կացել, նոր ուզում ես ամուսնանալ.  
Օրը սե է, ում որ տանես, լծելու ես մեծ դարդի հետ:

Մարդկանց ձեռքի անբախտացած գեղեցիկներ շատ ենը  
տեսնում.  
Ինչպէս տեսնես, սե ազուար փաթաթւած է նոր վարդի հետ,  
Սիրածիդ հետ ազբատ ազրես, հաւատացէք լաւ է, քան թէ  
Թագաւորի փառք վայելես սէրը սառած տմարդի հետ:

Երկու ամուսնացողները նախ մէկմէկու թող հաւանեն,  
Յետոյ գնան եկեղեցի, դաշն կապեն սուրբ դարդի հետ,  
Ամեն ազափ պէտք է առնի իրա հասակի յարմարը.  
Ջահել կոյսը թող պսակի ջահել երիտասարդի հետ:

Մարդն ահիլ, կինը ջահել, հարկաւոր է սանձը պահել.  
Ինչպէս պահէ, որ չխաղայ մի վիզը հաստ դարթի հետ,  
Կը գոյանայ երկուսի մէջ անսէրութեան վրդավունքը.  
Մարդ ու կին ամենայն օր կ'լինեն թակ ու ջարդի հետ:

Ուսուր Օլլի, մի տես արդեօք, սա արդար խղճմտանք է,  
Ջահել կոյսը ամուսնանայ մաղերը չալ ծեր մարդի հետ:

Սաաջդ գալիս է մութ, կին առնես ինչ օգուտ.  
Մէկ առանձին տեղ նստի ու աղօթիր քու հոգուդ:

\*\*\*

Դժգոհութիւն անուսնանից  
Հաւեն է ինձ ամեն քունից:

Երանի կ'լինէր քեզ չ'տեսնէի,  
Ըստ որում տեսնելիս վերքս նորում ես,  
Սշխարհը քեզ տեսնէր, ես չ'տեսնէի,  
Անհաս նպատակաւ ինձ տրորում ես:

\* Երբ որ քեզ տեսնում եմ զարդարւած՝ շքեղ  
Լայն աշխարհը գլխիս երևում է նեղ,  
Սիրովդ քանդւածին զու կեանք տալի տեղ՝  
Բահն առած գերեզմանը փորում ես:

Վառւած սիրահարիդ մտիկ չես տալիս,  
Թողում ես ցաւի մէջ արիւն ողբալիս,  
Ինձ խեղճիս հետ զու մէկ բերան խօսալիս  
Հոգիս հազար տեղից վիրաւորում ես:

Սիրովդ կապել ես ողջ բերմունքներս,  
Երբէք իրար չի գամ թերթիւնքներս,  
Ձեռքիցս խել ես իրաւունքներս,  
Բոլոր կեանքիս վերայ թաղաւորում ես:

Ես ինչպէս որ մի նաւ ընկել եմ ծովդ,  
Ծովումդ այրվում եմ քաշելով սովդ,

Ինչ կ'ընի, հարցնես, լալկւած լեզուովդ  
Ասես, Աւսուբ Օղլի, այդ ինչ օրում ես:

\*\*\*

### Ս Է Ր:

Մէր, դու որքան քաղցր բան ես, որ սիրում է քեզ ամեն մարդ.  
Հարս ու աղջիկ, կին կամ պառաւ, ծեր, պատանի, երիտասարդ,  
Սրանք բոլորը տեսնում ենք հոգով մարմնով, սրտով քեզ պարտ.  
Երկու սեռի ցեղի դու ես մէկ նւիրւած հոգեկան դարդ,  
Որ միշտ նրանց պահպանում ես վառ սրտերով սիրուն զւարթ:

Մէր, սկիզբդ դու առնում ես նախախնամեալ Աստուածանից,  
Բիխում ես ամենասուրբ Երրորդութեան օթեկանից,  
ձեռզաւորում ես Հօր, Արդոյ և Սուրբ Հոգոյ էականից,  
Նայած բանիդ, քաղցրութիւնով գերազանց ես ամեն բանից,  
Ամենայն մի աշխատութեան դու ես առաջ տանող մակարդ:

Մէր, դու էիր հայր Ագամին, որ Եւային խաբել տւիր,  
Երկուսի խելքը միասին սատանային չափել տւիր,  
Մէկ սիրալիր նոր ցանկութեամբ լոյս հանդերձը թափել տւիր,  
Գրախտական հանգիստ կեանքը կոշտ տանջանքի լափել տւիր,  
Այն խեղճերին համար եղար երջանկութիւն քանդող կախարդ:

Մէր, մարկային կեանքի մէջին քեզ պէս քաղցր բան չեմ տեսել,  
Առանց քեզի տաք առուտուր, մէկ տեղ մէկ պայման չեմ տեսել,  
Կամ քեզանից հեռու փախնող իսկի մէկ իսան չեմ տեսել,  
Ով սէրից փախաւ, նորանում մարդկութեան նշան չեմ տեսել,  
Հէնց միշտ նրան ես տեսել եմ յիմար գոռոզ, սոված հպարտ:

Մէր, մարդկային սրտերի մէջ էլ շուտ թափանցող սուրն դու ես,  
Նրանց կամքին հօգի տւող, գործն վառող հուրն դու ես,  
Բայց երբեմն վառ գործերի հանգացնող ջուրն դու ես,

Ամեն փառքի վայելչութեան մայրենի աղբիւրն դու ես,  
Դու ինչ տեղում որ չ'ընիս, այն տեղ կ'ընի միշտ թակ ու ջարդ:

Մէր, դու սառած թմրածներին շատ շուտով ես ոգևորում,  
Երիտասարդների սրտով ծեր մարդկանց սրտեր ես նորում,  
Թէև նրանց ծեր արոււիւն այն բանը չէ հարկաւորում,  
Որովհետև հարկը նրանց աղօթելու է արսորում,  
Եկեղեցի գնան ու գան նստեն իրանց համար հանդարտ:

Մէր, դու մէկ ես, երկու կոչող, համ մարմնաւոր, համ հոգեւոր.  
Հոգևորին թող հետևեն պառաւ կանայք, մարդ ախոր,  
Ջահեղները մարմնաւորով վառ սրտեր են ստանում, նոր  
Մէր անելու վայելմունքը նրանց շատ է դեռ հարկաւոր,  
Սիրուններ որսալու համար նրանց սիրտն է լարած թակարդ:

Մէր, դու սիրուններ տեսնայիս խոր թառաշով ախ ես քաշում,  
Զ'նայելով որ փոքր ինչ ամաչելով վախ ես քաշում,  
Նրանց ցաւը քեզ դիպչելուս, աչք ու ունրդ կախ ես քաշում,  
Փոխելով մոլորում ես, շիտակ գործդ ձախ ես քաշում  
Ու շինում ես անհասնելի նպատակը քեզ համար դարդ:

Մէր, քեզ վերայ շատ խօսացի, վերջացնեմ, բաւական է.  
Ծովդ ծայր ու եզերք չունի, լայնութիւնը անսահման է,  
Մեր մէջ քեզ էն հաստատ պահէ, որը իշխանաց իշխան է.  
Աւսուբ Օղլին մինչև մահը բոլոր անձամբ պարտական է,  
Թէ կարենայ, իրա գլխին քեզ կշինէ մէկ սաղաւաչդ:

\*\*\*

### Յ Ը Ն Կ Ը Ր Թ Ը Թ Ի Ն Մ Ե Ղ Ե Գ Ի:

Սարգիս, օրդ դառնացաւ,  
Ունես տանջանք ձեռնացաւ,  
Աշխարհին գարուն բացեց,  
Քեզ համար ձմեռնացաւ:

**Ա Փ Ս Ո Ս Ա Ն Ք:**

Լոյսն հանգաւ ծաղիկ կեանքիս, լուսատու ճրագս կորաւ  
Երանական գովասանքից իմ բաժին էրնակս կորաւ,  
Խնդութիւնս հողը մտաւ, ուրախ ժամանակս կորաւ,  
Բքապատուեց տար գարունս, բազը եղանակս կորաւ,  
Սրտի սիրած, մտքի ճարւած հազւագիւտ փափագս կորաւ,  
Զորացաւ վարդ ծաղիկս, ողբալով սոխակս կորաւ:

Ցաւագար աշըղներին մէջին գլխաւորն ես եմ,  
Եթէ ցաւից ու կրակից սկսեմ փորը ինչ խօսեմ,  
Հարիւրը չէ, հազարն չէ, սև ցաւերիս քանինն առեմ,  
Ուրախութեան խնջոյքներից այսուհետև հաստատ պաս եմ,  
Զի բերանիս անուշ համը կենսատու ճաշակս կորաւ:

Զքնազս տասնութ ամեայ ծաղիկ հասակի շրջանում,  
Որը մէկ օր քսան տեսակ գեղեցկութեան ձև էր բանում  
Կամ վարդի կամ նարգիսի կամ շուշանի էր նմանում,  
Անգութ մահը այս նազելուն տարաւ դրաւ գերեզմանում,  
Գեղեցկութեամբ դարդարւած չքնազ հրեշտակս կորաւ:

Ես դեռ իմ այս սիրեցեակից սիրոյ աշխատանք չ'տեսած,  
Իմ հոգու բուրաստանից վարդ քաղելու ջանք չ'տեսած,  
Հոգեշահ վայելչութիւն ու երջանիկ կեանք չ'տեսած,  
Սէր կամեցող սրտիս տանը կատարեալ բաղձանք չ'տեսած,  
Հազւագիւտ լի յոյսերով բոլոր նպատակս կորաւ:

Ներեցէք համարձակ խօսքիս, եթէ ձեզ մօտ փտահանամ,  
Զ'կայ այն սէրը ինձանում, որ ջոկ սրտի կոճակ բանամ,  
Մեղրահացս մոխիրն ընկաւ, էլ իմ բախտից մնց գոհանամ,  
Կամ յետ այս ու լոյս աշխարհքում լինելով պէտք է ուրախանամ,  
Երբ օրերս ուրախ պահող, կեանք հնչող նուագս կորաւ:

Ողջ աշխարհքը կը շարժւի իմ ցաւերս հասկացելիս .  
Իոկ երկինքը կը սրտայ աչքս արցունքով թացելիս,  
Սուաջի սէրը անգին է, ամսնութիւն կարգացելիս,  
Նոր բուննեիս, նոր հասնելիս, նոր ծաղկելիս, նոր բացելիս,  
Կանաչ կարմիր հասակի մէջ, անթառամ պտակս կորաւ:

Ուսուր օլլին մնց դիմանայ իր սիրելոյն մահւան ախտին,  
Զէ որ խեղճին կեանքին ծառն չորացել է ծաղկած վախտին,  
Ընթերցողքն ողորմի տան հանգուցեակիս հոգու բախտին,  
Այն կեանքումն արժանանայ Եգեմական սուրբ գրախտին,  
Փայլափետուր գեղեցկագօծ ազնիւ ազաւնեակս կորաւ:

\* \* \*

Ես Սարգիսն եմ մի նեղ տան,  
Տեսնողներն չը մտան,  
Ինձ մի կրակ այրում է  
Ծուխ շունի օր հաւատան:

\* \* \*

**Ս Ի Ր Ո Յ**

Արդեօք ես քեզ ինչպէս գովեմ,  
Որ գովասանքից հաւանես,  
Ասածներիս հաւանելով  
Ինձ խղճարոյս խնամք անես:

Եթէ ասեմ արեգակ ես  
Արեգակն մէկ կրակ է,  
Եթէ ասեմ լուսնեակ ես,  
Միթէ նա քեզ օրինակ է:

Եթէ ասեմ բացւած պարտէզ,  
Խիղճս չ'տամ ինձ ասպարէզ,  
Ապա էլ ես ինչ ասեմ քեզ,  
Որ ինձ ասես հեղինակ է:

Ոսկու հանք է այն արգանդը,  
Որ գցել է քեզ իւր բանտը,  
Պատճառ պայծառ անգամանդը  
Գարձեալ մօտոյ հասարակ է:

Քանդել է գեղեկցութիւնդ,  
Համ իմ տունս, համ քու տունդ,  
Քու այդ Փառանձեմ անունդ  
Աշխարհի մէջ միայնակ է:

Թերթեւունքդ երբ ճպում ես  
Չուի պէս ինձ կըճպում ես,  
Սէրդ սրտումս տպում ես,  
Հոգիս նետիդ նշաւակ է:

Ես էհզարն եմ սիրասով եմ  
Չափից դուրս տաք, ոչ թէ հով եմ,  
Չեմ կարող քեզ յարմար գովեմ,  
Լեզուս կոպիտ, միտքս խակ է:

Յ Ե Յ Տ Ե Բ Ե Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Թէ լաւ, թէ վատ, ինչ օրից ես  
Սկսել եմ երգեր գրել,  
Ինքս եմ ինձ «Ուտուբ օղլի»  
Կոչումով մականունն գրել:

Մինչև օրս ճանաչում եմ  
Մեր մէջ բանաստեղծութիւնով,  
Լսողներին ես կանչում եմ  
«Ուտուբ Օղլի» մականունով:

Ճիշտն ասած, «Ուտուբ Օղլի»  
Մակը չեղաւ ինձ դուրական,  
Կը կարծեն թէ թուրք եմ եղած,  
Որ ժառանգ եմ ես հայկական:

Քառասուն հատ երգերի մէջ  
Չեզ տալիս եմ մի պարզ ցուցակ,  
Որ իմանաք այդ «Ուտուբը» (Յովսէփ)  
Իմ հայրս է միշտ յիշատակ:

Այժմ հօրս յիշատակին  
Քարը տեղէն վերցրեցի,  
Չնեղանայ հողի տակին  
Որ տեղը ջոկ քար գրեցի:

Քանզի տեսայ անյարմար էր  
Եւ գրելն շատ դժւար էր,  
Համ թրքանուն, համ երկար էր  
Այդ պատճառաւ չը սիրեցի:

Երբ ես հայ եմ ու հայի ցեղ  
 «Օղլին» սրտիս գալիս էր նեղ,  
 «Ուսուր Օղլի» անուռնի տեղ  
 «Էհզար» անուն ինձ գրեցի:

\* \* \*

## ՉԻ ԴԱՌՆԱԼ

Այն Ազգարը աշխարհում անթիւ անհամար.  
 Ամեն Ազգար աղքատ Ազգար չի դառնալ,  
 Ամեն իշխան մեր անբախտ ազգի համար  
 Իսպահանցի խոջա Նազար չի դառնալ:

Ամեն կնիկ ինչպէս կըծնի Ա.գասի,  
 Գաւթի բէկ, Մխիթար հայ ազգի մասի,  
 Ամենայն մարդ ինքը իրան քաջ կասի,  
 Սիւնեցի հին քաջ Ալազար չի դառնալ:

Էհզար, ամեն ինքնագով երիտասարդ  
 Հոգով մարմնով ինչպէս կ'լինի ազգի պարտ,  
 Ամեն ուժեղ սրտով առողջ տղամարդ  
 Գանձակեցի քաջ Եղիազար չի դառնալ:

\* \* \*

## ԳԵՂԵՅԻԿ ՄԱՐԻՄ ՋԱՆԻ ԳՈՎՔԸ

Գովում եմ քեզ, գովական ես, Մարիամ ջան,  
 Գովասանքի խոսք արժան ես, Մարիամ ջան,  
 Ինչ տասն չորս տարեկան ես, Մարիամ ջան,  
 Կարծես բացւած բուրաստան ես, Մարիամ ջան,

Թէ ե գէմբով հողէհան ես, Մարիամ ջան,  
 Բայց յոյս ունեմ ինձ պահպանես, Մարիամ ջան,  
 Գովք տուողիդ յարգող ջան ես, Մարիամ ջան:

Մէկ նշանդ տասն գեղ նկար ունի.  
 Նմանում ես վարդեր հագած գարունի,  
 Ատամներդ մարգարիտի լար ունի,  
 Լեզուդ ծայրին կարծես թէ շաքար ունի,  
 Աչ հայեացք մեծ ցաւերի ճար ունի,  
 Սիրոյդ վեսիլին շատ սըտերում վար ունի,  
 Կը գայ օրը, սէր կը ցանես, Մարիամ ջան:

Այս խօսքերը չքեղութեան յարգանք են,  
 Գեղեցկութեան դարգարանք ածականք են,  
 Միայն նշաններդ ինձ շատ դարմանք են,  
 Այդ քեզանում ինչպիսի կերպարանք են,  
 Ջուխտ աչքերդ համ մահ են ու համ կեանք են,  
 Միայն թերթեւունքդ անխղճմտանք են,  
 Մարդ կսպանեն մեզքը կանես, Մարիամ ջան:

Կենաց ազնիւ ապրեշումէն մանւած ես  
 Այն պատական թելերիցը հինւած ես,  
 Գեղեցկութեան աստղի հետ ծնւած ես,  
 Ծնւած օրից սիրոյ գանձով գնւած ես,  
 Կիպարաբոյ ամրակազմն սնւած ես,  
 Ով քեզ ասի հողից մարմին շինւած ես,  
 Ես քեզ կասեմ, Միմին թան ես, Մարիամ ջան:

Ինչ ես արել, որ քրանել ես մարդի պէս,  
 Երևում ես ցողաթաթախ վարդի պէս,  
 Նկարւած ես թագուհական վարդի պէս,  
 Արե գէմ էր չես կանգնում շարթի պէս.

Սիրադ սրտիս բռնել է թակարդի պէս,  
Սէրդ սէրիս պինդ բռնել է կարթի պէս,  
Սիրահարիդ անտես չանես, Մարիամ ջան:

Այս գովքի մէջ շխտացի կեղծաւոր,  
Մէկ սիրտ ունիմ անկեղծութեան պարտաւոր,  
Գու պարծանք ես համ առնողիդ, համ հօր մօր,  
Ով աշագեղ երկրորդ սեռի թագաւոր,  
Վարդ թշերդ գոյն են բացում օրէ ցօր,  
Տեսութեանդ շատ սրտեր կան ուխտաւոր,  
Երնակ նրան ում պատկան ես, Մարիամ ջան:

Խեղճ Եհզարն եմ, քու սէրդ եմ բարբառում,  
Սէրդ սրտիս մէջին ինքդ ես վառում,  
Սէրիդ առուն ձր ես սրտէս պատառում,  
Այդ անելով շան ցաւեր ես պատկառում,  
Երգողները գովքդ կ'երգեն միշտ թառում,  
Թէ Գօրիսում թէ Զանգազուր գաւառում,  
Գու ջոկ տեսակ տեսարան ես, Մարիամ ջան:

\* \* \*

### Շ Ա Տ Չ Կ Ա Յ

Էս ժամանակ տեսնում եմ էլ շատ բարի մարդ չ'կայ,  
Մարդկութեան բուրաստանում հօտը վերան վարդ չ'կայ,  
Աշխարհասէր իշխանքն հէնց ուրախ են քէփերով,  
Բարեկիշութեան անմահ գործերով զւարթ չ'կայ:  
Գիփ հագել են կեղծութեան փոփոխական հագուստներ,  
Հագարից մէկի հագին էլ բնական վարդ չ'կայ,  
Զգուշացիր դու, Եհզար, դարու փոս է առաջդ,  
Ոտիդ տակին իմացիր, մի փոքր տեղ հարթ չ'կայ:

Մեր օրինակին նմանող շատ կայ,  
Չի նմանող հազարից մի հաստ կայ:

Սրտակից սիրելիս, սէր իմ թանկագին,  
Նմանողներ շատ կան մեր օրինակին,  
Որ չեն հասնում իրանց սրտի փափագին,  
Փափագի տեղ ցաւ են կրում ահագին:

Անցեալն էանց, նպատակդ նոր մաղթէ,  
Մարդ նեղ օրին գիմանալով կը յաղթէ,  
Մէկ ծաղիկ կայ մեղանից շատ անբախտ է,  
Մէկ լաւ նայիր վիզն ծուռ Մանուշակին:

Մարտն անցաւ, գարնան վարդը բացել է,  
Ուրախութեան հոգով մարդը բացել է,  
Հագիւ թէ սոխակին վարդը բացել է,  
Խարն է նստել նրա կարմիր պսակին:

Լսած կըլնես Արան ու Շամիրամը,  
Աչքովդ տեսնում ես թիթեռն ու շամը,  
Անհաս նպատակաւ վառվեց Քարամը,  
Այրու ցաւն առած իրա շալակին:

Լծւիր Եհզարիս հետ այս ցաւն տանենք,  
Գուցէ կարողանանք մեղանից հանենք,  
Ծուռ բախտի տւածին ինչ պէտք է անենք,  
Լաւ է հպատակենք մենք մեր վիճակին:

\* \* \*

Անփորձ մարդիկ հաւատաւան ղժուար ե,  
Չփորձած ի՞նչ գիտես բարի ե, շար ե:

Ով երեսին խաչ կ'ներց, ասացի քրիստոնեայ է,  
Ով որ հայերէն խօսեց, ասացի ուղղափառ հայ է:



Պատահեցի մի մարդի ես, որի անունն էր Սոկրատէս  
Ինձ ցոյց տուա իրան այնպէս, կարծեցի թէ քահանայ է:

Ինձ սա շատ շուտ ծանօթացաւ, տար սէրութեան դռներ բացաւ  
Սյնքան սրտով ինձ մօտեցաւ, ասեցի եղբայրս սա է:

Սրան ես ճիշտ հաւատացի, խեղճութեանն ողբացի  
Նստացրի ինձ հետ հացի, ասեցի խեղճ հայ տղայ է:

Վախտ վախտ ձեռքին կարտ և գուքանչու պարտ եմ տեսնում  
Սակայն բարի մարդ եմ տեսնում, դեռ չեմ գիտում խաբերայ է:

Բայց մէկ օր այս գայլը Նոյին, ինձ մօտ եկաւ երեկոյին.  
Գլխիս գրեց այնպէս օյին, չորացայ Սսուած վկայ է:

Եկաւ խեղճ խեղճ նստեց մօտս, կարծես քաղցր էր տեսել հոտս.  
Լեզուով կապեց ձեռք ու ոտս, ասաց բանին վերջին նայէ:

Մագնիտի պէս ինձ ջոկում է, մագերս մէկ մէկ պոկում է,  
Սչքերս բաց պլոկում է, բայց դեռ սիրտս աներկբայ է:

Գլուխ ցած ես իմ բանիս, գողանում է դա մատանիս  
Մէջը պտռում է գրպանիս, տեսնում է լիքը քիտայ է:

Անիրաւ շողորթողը հանում է գրպանիս փողը.  
Սսամ գլխիդ ածեմ հողը, դէ եկ խեղճին դու վայ վայ է:

Սրան գտայ մի գուքանում, մօտն նստած մի բօշ խանում.  
Համ գլխումսան համ իմանում, շիրաստայ է և ուռայ է:

Տւած հացիս ափսոսեցի, քանի կծու խօսք ասեցի.  
Աւելորդ էր ինչ խօսեցի, տեսայ շուայ սրիկայ է:

Պատիւ չի տար անհոտ վարդին, խաբւած կարմիր սաղաւարդին  
Մարդը պէտքէ անփորձ մարդին, յանկարծ հաւատ չընծայէ:

Մարդ կայ ձեռքին է մկրատը, նա է ծածուկ գրպանհատը:  
Իմ Եհզարիս այս խրատը լսողին պարզ առարկայ է:



### Յ Ա Ջ Ո Ղ Ի Ե Յ

Յաջողեց այսօր, յաջողեց,  
Խարի կեանքին ցողը ցողեց,  
Նա իր իզձին արժանացաւ  
Բայց սոխակին բախտը հողեց:  
Հասիր, ով պարտիզպան, հասիր  
Սոխակին օգնութեան հասիր:

Խարը գնաց վարդանոցը,  
Մտաւ կարմիր վարդի ծոցը,  
Կորցրուց խեղճ սոխակին  
Սյն ներգաշնակ ծրվոցը:  
Հասիր, ով պարտիզպան, հասիր  
Սոխակին օգնութեան հասիր:

Խարն վարդին թշնամին է,  
Բայց սոխակին ճիշտ հողին է,  
Վարդին ու սոխակին սէրը  
Միմեանց համար թանկագին է:  
Հասիր, ով պարտիզպան, հասիր  
Սոխակին օգնութեան հասիր:

Հազիւ հազ թէ գարունացաւ,  
 Վարդը բացւեց սիրունացաւ,  
 Զ՝վայելած վարդի սէրը  
 Խեղճին օրը արիւնացաւ:  
 Հասիր, ո՞վ պարտիզպան, հասիր,  
 Սոխակին օգնութեան հասիր:

Արի, լսիր դու Եհզարին,  
 Խղճա գործէ անմահ բարին,  
 Սև խարերն վարդանոցը  
 Իրանց մէջին բաժին արին,  
 Հասիր ո՞վ պարտիզպան, հասիր,  
 Սոխակին օգնութեան հասիր:

\*\*\*

### ՆՈՐ ՈՐՍՈՒՄՆԵՆԵՆ ԱԶԳԱՍԵՐԸ

Գրուխ կտամ այն անձանցը, որոնք լիքը գլխի տէր են.  
 Նրանց մատաղ ողջ իմ անձը, որոնք անկեղծ ազգասէր են:

Կեղծաւոր սուտ ազգասէրին մնց լաւ ասեմ, որ իր խէրին  
 Զրկում է խեղճ աղքատներին, չէ որ նորա մականց հէր են:

Գնացել են ուսում առել, եկել մեր մէջ ճրագ վառել,  
 Կեղծիւ մարդասէր են դառել, որոնք յայտնի ազգակեր են:

Կեղծաւորքն ունին ողբալ, նրանց ողբին ի՞նչ հաւատալ.  
 Նորա ազգին պտուղ չեն տալ, հասկերը դարդակ արտեր են:

Աղջկայ սիրտ տղորց ձեռքը, չ՛բուժիլ աղքատաց վերքը  
 Աղուէսամիտ ազգասէրքը թէ չ՛լինեն, մեզ շատ խէր են:

Սրանք են սուտ ապաշխարող, իրանց օգտին թաղակ սարող.  
 Այսպէսները մնց են կարող, մէկ մէկու հետ սրտեր մեր են:

Ազգասէր ես գործդ ցոյց տուր, ուր ես անուն հուշակում վատ,  
 Իմաց գլխիդ կը թափեն հուր, Եհզարներն անհամբեր են:

\*\*\*

### Բ Ա Ֆ Ֆ Ի

Ճիշտն ասած մինչև օրս Հայաստան  
 Շատ չունեցել յլի մայրեր ծննդեան,  
 Որ ծնէին անհատ դաւակ քեզ նման,  
 Ոսկէբարբառ վառ գրող քաջ վիպասան,  
 Դու Բաֆֆի Յակոբ Մելիք Յակոբեան:

Դու մահացար ազգիդ արիւր սգաւոր,  
 Աւանդ հազար աւանդ քոյ մահւանդ որ  
 Կը ողբանք անդադար մենք ամենայն օր,  
 Ձենք գանիլ քեզ նման մէկ Բաֆֆի նոր,  
 Որը ցոյց տայ ժողովրդին այսքան բան:

Հազար անհատների հինգիցը մէկն ես  
 Թխողապատ մտքերի խրկող արեգն ես,  
 Ներեն թէ կուզ փոքր ինչ յուսահատում ես  
 Հայազգի մէջ երկու անձինքներիդ պէս  
 Ոչ տեսել ենք, ոչ կ'տեսնենք յաւիտեան:

Մտաւոր ճրագներ դուր էիք երկու.  
 Մէկ «Մշակ» Արժրունին և մէկն էիր դու,  
 Երկուսդ էլ ազգի համար կենսատու  
 Դուր էիք ոյժ ազգի դարգացման հոգու,  
 Հոգով մարմնով համայն ազգի պարտական:

Համայն ազգի մէջ դու յատուկ անհատ  
 Հայրենեաց ծաղիկ դաւակ հարազատ,

Թողած հիմունքներդ կը դնւի պինդ պատ  
Որոնք մինչ յաւիտեան կը մնան հաստատ,  
Յետ այսու փայլ ունես դու անմահ անւան:

Ո՞նց մարդ ասեմ ես քեզ նման զաւակին  
Ազգի անխոնջ գրականական «Մշակին»,  
Մէջքը գնող ահաւոր բեռան տակին,  
Անծուխ իւզով մտքերի վառ ճրագին,  
Ով՞ Հայկական լոյս գիտութեան վառարան:

Երկինքը իր սրտի ծրարը բացաւ,  
Լոյսը ծագեց քո սրտի իզձը լցաւ,  
Սիրելի Հայրիկիդ ուխտը գոյացաւ,  
Լուսաւորչեան սուրբ գահին արժանացաւ,  
Ահա քեզ խնդութիւն և օր աւետման:

Ոսկորներիդ հանգիստ ով շիրիմն նեղ  
Երբ Գարրիէլ կոչէ դատաստան անեղ,  
Առաջի Յիսուսին երևաւ անմեղ  
Դրախտ երջանկութեան լինի հոգուդ տեղ,  
Վայելես բարիքը անվերջ հանգստեան:

Չբաւոր Էհզարն եմ, չունեմ առատ հաց,  
Հոգուդ շնորհիւր տայի ազբատաց,  
Իմ այս միտքս թող հարկ լինի իշխանաց,  
Տօնեն ամեն տարի, անեն վրաց լաց,  
Անմոռաց յիշմունքով քեզ պահեն կենդան:

\*  
\*\*

### Գ Ա Ր Ո Ւ Ն

Գնաց ցուրտը, մտաւ տաք բնութիւնը  
Կամաց կամաց հալեց սարերին ձիւնը

Արևելքը կապեց ծիրանի գօտին  
Ու ողջունեց նոր զարուն առաւօտին,  
Բերեց իրա հեռը այս նոր զարունն  
Ամենայն ինչերի կենդանութիւնն.  
Երեք ամիս հողը, որ էր ինչպէս կոյս,  
Յանկարծ ծնեց տեց մարդկանց աչքալոյս.  
Մերկացած ծառերը յոյսի յուլթեամբ  
Ծաղկեցին. բացեցին ծայրայեղութեամբ  
Սարեր ու ձորեր, գաշտեր հովիտներ,  
Հագեցին իրանց ծաղկեայ հանդերձներ,  
Փառքով ծնեց նոր բնութեան խնդիրը  
Կանաչ վարագուրով ծածկեց երկիրը,  
Զարգարեց գետինը ինքնաիրաւունք  
Խառնելով օդի հետ քաղցրահոտ բուրմունք  
Դեղնափայլ արտերը հասկերով իրանց  
Զեփիւռից հակելով գնացին հէրանց,  
ձպուկն ծաղկեց, մասրենին բացեց  
Գարնան լուսնի ցոլով ամեն ինչ թացեց,  
Բնութիւնն թագաւորող նոր կեանքով  
Շնչաւորաց լցրեց քաղցր բերկրանքով  
Գարունն ինչպէս պճնւած թաղուհի  
Նստել է ծաղկակուռ զարգարուն գահի,  
Երգեցին թռչունը, սոխակ, ծիծեռնակ,  
Ստացաւ աշխարհը գարնան եղանակ,  
Աւաղ այսքան սքանչելի մեծ փառաց,  
Որ աշխարհում սա ոչ մէկին չի մնաց,  
Շուտով վրա հասաւ սաստիկ ձմեռն  
Ծաղկանց վրա դրեց ձիւների բեռն:  
Իմաց Էհզար, մարդի կեանքն էլ է այդպէս.  
Որքան հարստամաս, կանաչես, ծաղկես

Մէկ օր մահը քեզ իրան մատաղ կանի,  
Զոր դիակդ սև հողի մէջ կտանի:

\* \* \*

Ա Փ Ս Ո Ս Ա Ն Ք

Չբացւած թառամնց կենակից վարդս,  
Այնպէս մէկ վարդ մէկ էլ դժւար կը ճարեմ,  
Տեսնողն է հաւատում, որ նա էր վարդս,  
Ի՞նչու լոկ խօսքերով նրան դարգարեմ:

Սև հողի մէջ գնաց սիրուն չքնաղս  
Հառաչանօք միշտ կ'լինի աւանդս,  
Հանեմ ոսկորները շինեմ դադաղս,  
Ոսկի մազերովն պատանս կարեմ:

Կերթամ գերեզմանին վերան լաց կանեմ,  
Բոլոր ցաւս սև հողին իմաց կանեմ,  
Արտասուներով վերան քարը թաց կանեմ,  
Գուցէ թէ այս կերպով ես ինձ մխիթարեմ:

Մի խօսքով սիրելիս ունէր մի ջոկ ձև,  
Նա իր մահով իմ օրերս թողեց սև,  
Տարաբախտ Եհզար եմ ես այսուհետև  
Առանց օր, առանց կեանք, առանց աշխարհ եմ:

\* \* \*

ՄԵՐ ԿԺՐԱՆՍ ԲՈՒՂՐՈՒԼԸ

Բուլբուլ, դժբախտ ես, ողջոյնն դարնան շունի վարդը  
Կենսատու շողով թացւած բուրաստան շունի վարդը,

Երևի այս դարունն դէպի քեզ խնամք չանում,  
Քանզի տեսնում եմ բացւելոյ նշան շունի վարդը:

Գարունից չի ցողւելով, չէ բացւում շատ տխուր ես  
Այդ մասին ընկերաց մէջ աստիճան շունի վարդը,  
Գանակով ճղեն սիրտդ մի կաթիլ արիւն չ'կաթիլ,  
Ծաղկանց խնջոյքում վիճակ խնդութեան շունի վարդը:

Թէ և փափագում է տեսնել մայիսի երեսն  
Արգելում են, տեսնելու հրաման շունի վարդը,  
Անջուր թառամում են քու ագնիւ վարդի թփերդ,  
Մշակող մարբող ջրող պարտիզպան շունի վարդը:

Խարն քու վարդդ իր պարտէզն տանել կամեցաւ,  
Զգնաց խարի հետ սիրոյ պայման շունի վարդը,  
Զրկւելով իր բնական չքեղազարդութենից  
Առաջւայ պէս գեղեցիկ տեսարան շունի վարդը:

Լսիր, խղճալի Եհզարին փոքր ինչ ուրախացրիւր  
Յոյս կայ բացւի դեռ ես օգնական շունի վարդը:

\* \* \*

Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ռ Ն Ս

Հայրս ինձ թողնելով մօր սերի ծարաւ  
Մէկ օր խնդութիւնս շինեց լաց ու կոճ,  
Բռնելով կանիցս վերցրուց տարաւ  
Տաւ Երևանում ազգային դպրոց:

Ասաց որդի դու անունիս վարդ դառնաս,  
Մէկ անհոտ ծաղիկ ես, հոտով վարդ դառնաս,

Աշխատիր ուսում առ, խելօք մարդ դառնաս,  
Զշալակես վերջումը ազբի քթոյ:

Դեռ նոր մտել էի տասն մէկ տարին,  
Որ ջանք գրայ ուսումի ճանապարհին,  
Ատելով խաւարին սիրեցի բարին,  
Եղայ ժիր աշակերտ վարպետին գրոյ:

Կամայ կամայ այր ու բէնր դաս առայ,  
Այբից բռնած մինչև մէնը դաս առայ,  
Լաւ սերտեցի հէնց ամենը դաս առայ,  
Ընկերացայ նորաուս երեսայոյ:

Օրըստօրէ շատացրին դասերս,  
Սրտիս մէջին եռ էր գալիս ջերմ սէրս,  
Երբ որ տեսան աղքատ մարդ է իմ հէրս,  
Էլ ինձ ցոյց չ'աւին գիտութեան փողոց:

Գուրս արին ինձ, կորի գնահ, դառն ես,  
Անջուր այգոյ մէջին անպտուղ ծառն ես,  
Ինձ ասեցին էժան չես կարող առնես  
Հագարով գնահատած ակը թանգանոց:

Առժամանակ պարապեցի մանգարով  
Լաւ օրերիս ամսոսելով ողբարով,  
Ես ինձ ու ինձ մտրիս սրտիս յոյս տալով  
Ծառայեցի այսպիսի անշահ գործոց:

Ոսկի ժամանակս ձեռիցս գնաց,  
Սրտիս խորհուրդներն անկատար մնաց,  
Պատահեց կարգացի պատմութիւն նախնեաց,  
Հասկացայ Հայկազն եմ, ազայ եմ Հայոց:

Հիմայ փառք Աստուծոյ ասածս սէրի  
Թէ հոգոյ թէ մարմնոյ այսպէս երգեր է,  
Խեղճ էհզարը ծնեալ օրից ընկեր է  
Միջակ դասակարգի խելօք ազայոց:

\*  
\*\*

ՏԱՐԻՆ ԹՅԵՂ ԳԱՐՈՒՆԱՅԱԼ, ՍԱՐԵՐ ԳԼՁՅԵՐ ՍԻՐՈՒՆԱՅԱԼ:

Գարունացաւ ողջ աշխարհը մեծ խէրի ընկաւ վիճակաւ  
Աստուծու խնամքը ամեն ինչերի ընկաւ վիճակաւ,  
Երկինքը ողորմութիւնից երկրին մեծ բաժին տաւ  
Սարերի, հովիտների, գաշտերի ընկաւ վիճակաւ:

Գիշերւան կենսատու ցոյրը, ծագման պայծառ առաւօտը  
Անտառների, այգիների, բոյսերի ընկաւ վիճակաւ,  
Գարունն իր ակունքներն երկնքիցն ներքև թափեց  
Ծովերի, ցամաքների, գետերի ընկաւ վիճակաւ:

Քարերը կանաչեցին, մեռածներն կենդանացան  
Կեանքը սառած սողունների օձերի ընկաւ վիճակաւ,  
Երկիրը կանաչ կարմիր ծաղիկների վարդը հագաւ  
Մայր մեղուն իր խմբերով երգերի ընկաւ վիճակաւ:

Պտղաբերութեան սէրը զուգաւորեց թռչուններին  
Ըստերջը մինչև անգամ բերքերի ընկաւ վիճակաւ,  
Իւրաքանչիւր ծաղիկը իր սիրելոյն հետ ընդունեց  
Բուրբուլի հետ ընկնելն վարդերի ընկաւ վիճակաւ:

Ընտանի անասունքը գոմերից հանդ գուրս եկին  
Սգաւոր խուլ սարերն ձայների ընկաւ վիճակաւ,  
Իշխաններն արքայութեան գուռն բացան մէջը մտան  
Սղբատը մշակական գործերի ընկաւ վիճակաւ:

Հողագործը վեակավարից պրծաւ արդէն գութանն նոր  
Իր ինն ջուխտ եղներովն սարքերի ընկաւ վիճակաւ,  
Մշակը ցանածի հնձին շնորհաւորութեանը հասաւ  
Ինն ամսուայ քուն մանգաղը արտերի ընկաւ վիճակաւ:

Մի խօսքով լայն աշխարհում սղջ ազատ վիճակ ստացան  
Խեղճ Էհգարը չորս ընկերով բանտ գերի ընկաւ վիճակաւ:

\*  
\*\*

### Վ Շ Տ Ա Գ Ի Ն:

Իմ քաշած օրերը իմ քաշած կեանքը  
Բողբոլիին կեանքի հաշիւ չեմ անում,  
Երբ քննում եմ կեանքի բոլոր հրճանքը  
Իմ խեղճ կեանքը ոչ մէկին չէ նմանում:

Որ կողմիս նայում եմ այրող կրակ է  
Կեանքս կրակների միշտ հպատակ է,  
Սա ինձանում թէ ինչ տեսակ վիճակ է  
Մտածելով այդքանը չեմ հասկանում:

Ինձ բաժին են տւել մտքի տանջանքը  
Սրտամաշ ախերը խոր հառաչանքը,  
Ես եմ որ տանում եմ այս տառապանքը  
Իմ տարած ցաւերս ոչ ոք չի տանում:

Վշտագին Էհգարն եմ, քննում եմ խոր ինձ  
Լաւ օրը, լաւ կեանքը չեն տալու նոր ինձ,  
Միայն յայնժամ հանգիստ կառնեմ երբ որ ինձ  
Մեռնեմ տանեն դնեն խոր գերեզմանում:

### ԻՄ ՀՕՐՍ ԻՆՉ ՎԵՐԸ ՈՒՆԵՑԸՍ ԾՈՅՐԸ:

Հայրս տւաւ ինձ ուսումի այն մտքով  
Որ նախ նա ինձ ուսմամբ նկարւած տեսնէր,  
Այնուհետև մարդ գառնայի իր սրտով  
Իր հայրական պարտքը կատարւած տեսնէր:

Հաստատ խոստովանքը խօսիլ չուզիլ ձիւ  
Հօրս նպատակն էր շատ և գեղեցիկ,  
Միտքը այն էր որ ինձ շինէր Չինովնիկ  
Ամեն տեղ անունս մեծարւած տեսնէր:

Կամենում էր որ ես լինեմ յարմարւած  
Որ տեղ լինեն գեներալներ գումարւած,  
Սուրս կապած ուսքս կուրծքս զարդարւած  
Մի ամբողջ զօրք առաջիս շարւած տեսնէր:

Ինձ ասում էր յիշես անւան դարերով  
Կուրծքդ նախշւած լինի անզին քարերով,  
Ազնիւ կտորներից ոսկեայ տառերով  
Ուզում էր հագուստս դիփ կարւած տեսնէր:

Հօրս միտքը այն էր որ ինձ մարդ շինէր  
Որպէս զի անւանը մէկ պարծանք լինէր,  
Թէ ազբատ աշխատում էր ջանք գնէր  
Թշնամու գէմ աղեղս լարւած տեսնէր:

Խեղճ Էհգարն եմ այժմ, ես պէս պէս տեսակ  
Հօրս ուզածներին չեղայ կէս տեսակ,  
Նա կրհարէր հիթէ այսօր էս տեսակ  
Իմ վիճակիս ամեն բան քարւած տեսնէր:

ՅԸՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Դու քառասուն տարեկան ես, ես տասնուվեց տարեկան եմ,  
Որ եկել ես ինձ նշանես, մի տես արդեօք քեզ արժան եմ.

Դու տաք սէրից սառած բան ես, ես նոր կաշոյ վառարան եմ.  
Թէ պատահի դու ինձ տանես, ես անպատճառ ինձ կսպանեմ:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Թէ և անգուժ ծնողներս խոստանում են ինձ քեզ տալը,  
Ես պէտքէ քեզ սիրտ խօստանամ, դուր է նրանց խօստանալը,  
Երեսդ սափրել տալով կորցրել ես մըքիդ չալը.

Պառաւ ձին չի ջահիրանալ, թէ կուզ խուզես պոչն ու եալը:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Մայրս խորհրդի մտնող ա, հայրս էլ կաշառ ուտող ա.  
Մի՛թէ նա ինձ քեզ տուող ա, այլ թէ մէջի մահնէն փող ա,  
Ինչ սէրի որ մահնէն փող ա, իմաց այն սէրն քանդուող ա.  
Ես կուզեմ մի այնպէս տղայ, նայեմ երեսը շողշողայ:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Հարկաւոր է ինձ խելացի սիրասէլը գլարթի մինը,  
Սուրբ սէրութեան լարին վերա խաղացող կախարդի մինը.  
Ոչ թէ քեզպէս սէրը մեռած, օրը անցած մարդի մինը.  
Դու յետ այսու թնչ կիմանաս ինձ պէս հոտով վարդի գինը:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Ի՞նչպէս լինեմ քեզ պարտական, հոգի չունես զգայական.  
Քեզ չեմ ասիլ մարդ բնական, եթէ այդպէս ես մշտական,

Եղել ես քառասուն տարեկան, կամիս առնել նոր սիրական.  
Լաւ է առնես այրի կնկան, ոչ թէ պարզամիտ աղջկան:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Քառսուն տարին հաստատ կեանք է, չուտ մեռնողին կարօտանք է  
Շուտ կին առնես ոսկու հանք է, եթէ չառնես մեծ յանցանք է,  
Սէր անիլն սիրտուզանք է, բայց քունը ջոկ հանգամանք է.  
Չարչարիլդ իդուր ջանք է, գնայ կորի ամօթանք է:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Իմ սիրածս համարեա թէ տեսրով մէկ աննման պիտի.  
Նոր կանաչող, սէր ճանաչող, ինքը ջահել ջիւան պիտի,  
Ես իրան սրտին յարմար, ինքն էլ ինձ պատկան պիտի.  
Փողով աղբատ էլ որ լինի, խելքով պզնիւ իշխան պիտի:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Քու մագերդ ողջ սպիտակ, իմ մագերս սե սաթի պէս.  
Քու երեսդ կնճռուտած, իմ փայլուն արծաթի պէս,  
Ինձ տանողն պէտք է պահի, ծոցի ոսկի սահաթի պէս.  
Քու մագերդ ինձ կծակեն նորա սրածայր մախաթի պէս:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

Թէ Եհզարին ասածն անեմ, ինչպէս կամբիդ միաբանեմ.  
Պէտք է վարդ պարզաբանեմ, ու երեսիդ յանդիմանեմ,  
Դու կէս կեանքի գերեզման ես, ես նոր աշխահ եկող ջան եմ  
Դու իմ կեանքիս անպատկան ես, ես քու հետդ մնց սէր կանեմ:

Դու այնքանը չես հասկանում,

Որ մենք միմեանց չենք պատկանում:

ՆՈՐ ՈՒՍՈՒԾՆԱԿՆ ԷՈՅ ԵՐԻՏՈՒՆԵՐԳԸ

Երբէք չեմ գարմանում որ դու կրթուել ես  
Վեննայի պէս մէկ լուսաւոր քաղաքում,  
Որ խօսում ես հէնց կարծում եմ թէ պել ես  
Հազար խօսքերիցդ մի բան չի ծագում:

Թէպէտ գնացել ես որ առնես ուսում  
Փոխանակ առնելիք մ'նացել ես հում,  
Մարդկանց հետը երբ խօսել ես սխում  
Բերանիս մէջ կում թուրս է ցամարում:

Իզուր ես քեզ ատում թէ հասկացող եմ  
Կամ կրթւած եմ գիտութիւնով խօսող եմ,  
Քեզ պէս գիտնականին գրուիլը հողեմ  
Ե՛չի պայտով ուխտի ոտ ես նախարում:

Ոչ հօտազ ես դու Հայկական գութանում  
Ոչ վարժապետ հայ գիւղի վարժարանում,  
Ել ինչով ես անդեօք դու մեզ պատկանում  
Հայ կոչումիդ իմ սիրտս է տրարում:

Ես չեմ ուզում որ դու ասես թէ հայ եմ  
Կամ թէ Լուսաւորչեան Քրիստոնեայ եմ,  
Ասածներիդ արարմունքիդ թէ նայեմ  
Ինձ պէտքէ կրակեն գիզած չոր ցարում:

Եհզարն եմ, չեմ լինիլ քեզ նմանող ես  
Եթէ չես հաւատում, նայիր գործս տես,  
Գիշեր ցերեկ անխոնջ մեղրածանճի պէս  
Ամեն տեսակ ծաղիկներ եմ հաւարում:

ԵՐԳ ԶԱՏԿԻ

Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց, այսօր ամեն հայ կը խօսի  
Օրհնեալ է յարութիւնն, միշտ յաւիտեան Քրիստոսի:  
Լինի ձեր ամենքիդ համար բարի շնորհաւոր Չատիկ  
Շատ տարիներ մեզ կեանք տալով արի, շնորհաւոր Չատիկ:

Քրիստոնեաներին համար Չատիկը պատուական տօն է  
Այսօր ինչ տեղ խնդութիւն կայ, Յիսուան խմբովն հոն է,  
Տեսնալով ուրախանալով, ռամիկն մեծ զգօն է  
Անթագ անգահ անգայտն, մարդը արքայ Սօղոմոն է,  
Լինի ձեր ամենքիդ համար բարի շնորհաւոր Չատիկ  
Շատ տարիներ մեզ կեանք տալով արի, շնորհաւոր Չատիկ:

Այս օր որքան տեսնումէ Քրիստոնեա անունով ցեղ  
Պատրաստել են ճոխ սեղաններ, զարդարել են շքեղագեղ,  
Ուրախութեան հետ են լարւած շէն ու քաղաք, աւան ու զեղ  
Մի խօսքով խնդութիւնն է թագաւորում ամենայն տեղ,  
Լինի Ձեր ամենքիդ համար բարի շնորհաւոր Չատիկ  
Շատ տարիներ մեզ կեանք տալով արի, շնորհաւոր Չատիկ:

Աստուած, երկար կենօր լաւ Չատիկներ մենք շատ տեսներ  
Չատիկներով կեանք նորոգենք, նոր կեանքներով ծլենք բուսներ,  
Մեր սրտերի պարզ ցանկացած, բոլոր փափագներին հասներ  
Աշխարհի վայելչութեան քաղցր բարիքները լցնենք,  
Լինի ձեր ամենքիդ համար բարի շնորհաւոր Չատիկ  
Շատ տարիներ մեզ կեանք տալով արի, շնորհաւոր Չատիկ:

Գարձեալ խնդրենք Աստուածանից աշխարհը ին տայ առատու-  
թիւն  
Ժանտախտ ցաւին հարածութիւն, սովին, մահին, ազրատու-  
թիւն,



Թագաւորաց խաղաղութիւն, չար թշնամեաց վհատութիւն  
 Մարդկանց գործին յաջողութիւն, ծագկի ամեն աշխատութիւն,  
 Լինի Զեր ամենրից համար բարի շնորհաւոր Զատիկ  
 Շատ տարիներ մեզ կեանք տալով արի շնորհաւոր Զատիկ:

Քրիստոնեայ աշխարհին Զատիկներով լոյս է ծագում  
 Որովհետեւ զատկից զատիկ, մարդը դրամ յոյս է ծագում,  
 Շատ վհատեամ նեղ սրտերի, մի լայն խրախոյս է ծագում  
 Անսահման ուրախութիւն, այն էլ խղճալոյս է ծագում,  
 Կհզարիցս թող ամենրից լինի շնորհաւոր Զատիկ  
 Շատ տարիներ մեզ կեանք տալով արի միշտ բախտաւոր Զատիկ:

\*  
\*\*

### ԵՐԳ ՀՈԳԷԵՂԱՅՐՈՒԹԵԱՆ

Երբ որ դուք երկուսդ միմեանց հեռ սէր էք  
 Աստուած հաստատ պահի ձեր սէրը եղբարք,  
 Երկուսդ մէկ մէկու անձնանւէր էք  
 Պինդ պահեցէք սէրի կապերը եղբարք:

Սուրբ սրտով սէր կազմած հոգեկորարքը  
 Պէտք է մարութ պահեն միշտ իրանց վարքը,  
 Սէրի վերա հաստատեամ է աշխարհքը  
 Յոյս ու հաւատ սէր է մեր Տէրը եղբարք:

Անսէր մարդին լաւ բարեկամ չ'լինիլ  
 Ամեն մարդի մարդկութեան համ չ'լինիլ,  
 Երկուսից պէս մինչև անգամ չ'լինիլ  
 ձիշտ մի մօրից ծնւած ախբերը եղբարք:

Որ տեղ տեսնէք սէր կընծայէք սէր կառնէք  
 Աստուած չանի թէ վնասէք խէր կառնէք,

Թէ կարենաք փունջ վարդերով վեր կառնէք  
 Գուք մէկ մէկու բազր ստուերը եղբարք:

Սէրութեան դռները սուրբ սրտով բացէք  
 Սէրից լաւ բան չ'կայ այդ լաւ իմացէք,  
 Մինչև վերջը դուք միմեանց հեռ սէր կացէք  
 Թող մեռնեն նախանձու շատերը եղբարք:

Զգաստ կացէք, սէրը ձեր մէջ չի նախատւի,  
 Զեր մասին Կհզարը թող չի նախատւի,  
 Նւէր յիշման ձեր սէրութեան սուրբ պատւի  
 Ասեցի այս քանի խօսքերը եղբարք:

\*  
\*\*

### ԳԺԳՈՀՈՒԹԻՒՆ ԳՐՈՒԹԻՒՆՆՅՑ

Մարդի նման թռչունը իրան չէ տամ տանջանքի,  
 Մահը երբէք չէ զգում, բայց լաւ ծանօթ է կեանքի,  
 Թէ և ունի քիչ երկիւղ Բազէի սպառնանքի,  
 Այն էլ հազարիցը մէկը, կը պատահի փորձանքի,  
 Մարդի նման չէ երբէք պատահում տառապանքի,  
 Գերի չէ կսկծանքի, ծառայ չէ խղճմտանքի,  
 Գործ չունենն տան հոգսերի, կամ տուն դներու ջանքի,  
 Բոլորովին չէ ձգտում հոգևոր աշխատանքի,  
 ձգնատեղի սրբերի, եկեղեցու կամ վանքի,  
 Նա մանաւանդ չ'խառնուում թէ վարձրի թէ յանցանքի,  
 Երբ որ քիչ տխրում է գնում է դրօսանքի,  
 Իսկոյն տալիս է իրան, երկրի կանաչ հրճանքի,  
 Թռչելով դէպի երկինք, իրան տալով բերկրանքի,  
 Նազեղիլով ծըծելով, քաղցր օդը երկնքի,  
 Հարկատու պարտական չէ գործ չունի կարօտանքի:

Ախ երանի կլինէր, ես դառնայի մի թռչուն,  
 Չունենայի ինձ մարդի զգացմունք ու գիտութիւն,  
 Որքան թռչունն է, այնքան ես լինէի զգայուն,  
 Երբ ձմեռից կը փոխէր ցուրտ եղանակը տարուն,  
 Կամաց կամաց կը հալէր սարերի դաշտերի ձիւն,  
 Փառքով կըզար ընդհանուր աշխարհի համար գարուն,  
 Կը տեսնէի գոյն զգոյն ծաղիկներով զարգարուն,  
 Գարնան կենսատու ցողով կըցողէր հոգիս սիրուն,  
 Ինքս փառաւորելով կունենայի գոհութիւն,  
 Այն ժամանակ չէր պէտքը էլ ինձ ապրուստ կայք ու տուն,  
 Մի կանաչ քօլի վրայ խոտից կը շինէի բուն,  
 Նրա մէջին ապահով, ես կանէի հանգիստ քուն,  
 Էլ ինձ չէի ունենալ հոգս ու տարակուսութիւն,  
 Երբ կը բացէր արշալոյս կը սլատէր ինձ խնդութիւն,  
 Կը վայելէի կեանքի քաղցրալի երջանկութիւն,  
 Ծլլալով երգելով, կօրհնէի իմ Աստուծուն:

Այժմ խելքի տէր մարդ եմ, և էլ ունեմ մարդկութիւն,  
 Գիտի էլ ինձ մարդ կոչելով, տալիս են մարդի անուն,  
 Այս ինչ օր է և ինչ կեանք և ինչպիսի դրութիւն,  
 Անթիւ ցաւերիս ծովը ունի անտակ խորութիւն,  
 Երբէք օր ու կեանք չունեմ, չունեմ և հանգստութիւն,  
 Այլ տեսնում եմ ինքս ինձ, խեղճ ու աղքատ մերկ նկուս,  
 Աղքատութեան մէջին կայ ամեն տեսակ դառնութիւն,  
 Ե՞րբ կ'տեսնեն օրերս, կեանքի բարեխառնութիւն,  
 Ահա ինձանում եղաւ, մի այսպիսի ցանկութիւն,  
 Թէ կուզ լինի ամեն կերպ, ուղած բանիս թանկութիւն,  
 Թող շատերը ինձ ասեն խելքի գործով անգլխտուն,  
 Կամ թէ հէնց պարզ անւանեն, ասեն յիմար անատուն,  
 Այնքանը էլ ինձ փոյթ չէ, բոլորն է ունայնութիւն,  
 Էհզար դարձեալ բախտիդ հետ արա համաձայնութիւն:

Նախ արմատդ մանուշիկ  
 Յետոյ փոքր ինչ ամուշիկ:

Ես քու օխտը պորտոգ լաւ եմ ճանաչում  
 Ի՞նչու ես դու այդքան ճարում տրարում,  
 Ի՞նչու չես մտածում, զգում ամաշում  
 Տմարգութեանդ սանձը հաւարում:

Հայրդ սխտոր, մայրդ սխտոր միշտ մշակ  
 Պապդ էր հօրիցդ, անհոտ անճաշակ,  
 Դու սրտեղից բուսար դառար մանուշակ  
 Որ շատ վարդեր առ քեզ են երկրպագում:

Ինչ տեսնում ես համարեան նոր ես տեսնում  
 Հագիդ մարուր նոր կարած շոր ես տեսնում,  
 Զարմացիլ ես չ'տեսած օր ես տեսնում  
 Զեւրիդ մէկն է մեղրում, մէկն է կարագում:

Նենգոտ սրտիդ խրճիթն ունի բորբոսնիլ  
 Նպատակդ երբէք բուսած չես տեսնիլ,  
 Ցուրտ կտայ քեզ արիւն առնող չի հասնիլ  
 Կը տենդես ցրտումը կմրսես տարում:

Թէ կուզ ոտիս տակը փշոտ ու փոս է  
 Միմիայն Էհզարը ճշմարտախօս է,  
 Գեղ պէս գէշին այդ վիճակը ախոս է  
 Դու պէտք է ծառայես զոմում մարագում:

Ամեն մարդի մարդ չեն ասիչ  
Մարդի ծաղկին վարդ չեն ասիչ:

- Մարդ կայ մարդ է լոկ անունով, մարդ կայ ճշմարտացէս մարդ է,
- Մարդ կայ մարդկանց նախը ծուոյ, մարդ կայ մարդկան մէջ մի զարդ է:
- Մարդ կայ հոտաւէտ ծաղիկ է, մարդ կայ ծաղիկից աղիկ է,
- Մարդ կայ հագուստը թաղիք է, բայց թէ քնես հոտով վարդ է:
- Մարդ կայ լեցւով միշտ մարդ խաբող, մարդ կայ զօրով խող լափող:
- Մարդ կայ մարդկանց խելքեր չափող, մարդ կայ որսող չար կախարդ է:
- Մարդ կայ սրտով ապրուստ ճարած, մարդ կայ ճշմարտութեամբ կորած,
- Մարդ կայ խղճմտանքն է քարած, մարդ կայ խղճող նրան պարտ է:
- Մարդ կայ աւազակ մարդասէր, մարդ կայ քահանայ մարդակեր,
- Մարդ կայ մթնով գողի ընկեր, բայց լուսով Սաղմոս կը կարդէ:
- Մարդ կայ մէկ ճանճի ուժ չունէ, մարդ կայ աշխարհք պահող սին է,
- Մարդ կայ լիքը գիտութիւն է, մարդ կայ գործով ոսկու արտ է:
- Մարդ կայ կարծում է մահ չունի, մարդ կայ Աստուծուց ան չունի,
- Մարդ կայ ապրիլից շահ չունի, պատճառ չարութեան մա- կարդ է:
- Մարդ կայ դառն խօսէ նուշ է, մարդ կայ խօսքը ծակող փուշ է,
- Մարդ կայ ինչ գործէ անուշ է, մարդ կայ նրան միշտ կը խրատէ:

- Մարդ կայ իր բախտին չարացած, մարդ կայ հաւատը ուրա- ցած,
- Մարդ կայ մարմնով տկարացած, մարդ կայ ամեն կերպ զարթ է:
- Մարդ կայ հարևան չ'սիրում, մարդ կայ մարդու բան չ'սի- րում,
- Մարդ կայ ազգական չ'սիրում, մարդ կայ ազգին սաղաւարդ է:
- Մարդ կայ ալքատ սրտով հարուստ, մարդ կայ հարուստ, չունի ապրուստ,
- Մարդ կայ հէնց մարդ է արտաքուստ, մարդ կայ ոստայն գոր- ծող սարդ է:
- Մարդ կայ չունի մարդկութեան համ, մարդ կայ գայլ է առանց ատամ,
- Մարդ կայ ինչպէս մարդ անուն տամ, թէ և մարդ է բայց տմարդ է:
- Մարդ կայ ստով առաջացած, մարդ կայ կեղծութեամբ բա- րացած,
- Մարդ կայ անկեղծ է խեղճացած, մարդ կայ լեզուն գլխին զարտ է:
- Մարդ կայ մարդ է էշ է մտքով, մարդ կայ գէշ է, է խելքի ծով,
- Մարդ կայ անող պրծնող լեզուով, մարդ կայ անքան շատ հպարտ է:
- Մարդ կայ կամքի միշտ հակառակ, մարդ կայ կը խօսէ խայ- տառակ,
- Մարդ կայ խօսքն է ազգու առակ, մարդ կայ միտքը շատ պա- րարտ է:
- Մարդ կայ Աստուած միայնակ է, մարդ կայ յատուկ հրեշտակ է,
- Մարդ կայ գծոխքի կրակ է, մարդ կայ վառուող հանգչող յարդ է:

Մարդ կայ աղքատ մարդ փրկող, մարդ կայ հարուստ մարդի  
 զրկող,  
 Մարդ կայ մարդի կեղծիւ ներկող, մարդ կայ մարդի ճանկող  
 կարթ է:  
 Մարդ կայ թիով փող է կուտում, մարդ կայ նրան փողն է  
 ուտում,  
 Մարդ կայ ունեցածն է ստում, մարդ կայ ճշտելով կը ջարդէ:  
 Մարդ կայ ունի, չնւտում վայ է, մարդ կայ ունի քաջքի վայ է,  
 Մարդ կայ միշտ սուտ կը վկայէ, մարդ կայ պարզ է չունի  
 փարդէ:  
 Մարդ կայ շունի ոչ տուն, ոչ հող, մարդ կայ ունի տուն հող  
 ու փող,  
 Մարդ կայ աղէս գոռող կոչող, մարդ կայ առիւծ շատ հան-  
 դարտ է:  
 Մարդ կայ կենող սէրի տանը, մարդ կայ սուրբն է սիրականը,  
 Մարդ կայ Եհզար երկար բանը, մեծ խորհուրդով կարճ կա-  
 ւարտէ:

\*  
\*\*

*Մարդկանց ո՞րն է վատը,  
Ամենքից վատն է ժշատը:*

Ով ժլատ մարդ, ո՞ր այգրան փող ես կուտում  
 Տանջելով խեղճ անձդ ի՞նչի է օգուտ,  
 Ոչ տամ ես աղքատաց, ոչ ի՞նքդ ես ուտում  
 Այդ քո անշահ գանձդ ի՞նչի է օգուտ:

Եթէ գնաս ձեռնաբաց մարդի մօտը  
 Կարենաս մի տեղ կուտացնես խտտը,  
 Շղթայել ես սատկած էշի շորս ոտը  
 Բերան գցած սանձդ ի՞նչի է օգուտ:

Չ'վառած ճրագը ցնծուղ չի տալու  
 Կովդ կաթը, մածունդ իւղ չի տալու,  
 Վարուցանքդ երբէք պտուղ չի տալու  
 Սերմած չոր աղանձդ ի՞նչի է օգուտ:

Ազգիդ մէջին շինիր այնպէս մի աղբիւր  
 Ծարաւ մանկունք օրհնեն հողիդ խմեն ջուր,  
 Չարին թաղաւորին եկ քիչ գլուխ տուր  
 Չար սիրոյ թախանձդ ի՞նչի է օգուտ:

Լաւ կ'լինի որ Եհզարին դու լսես  
 Ուտիլ, խմիլ, աղքատի տալ սկսես,  
 Այնուհետև յոյս ունիմ որ ինձ ասես  
 Բարի է նախանձդ, ողորմի հոգուդ:

\*  
\*\*

### ՅԵՆՈՐԵԿԵԼՈՒԹԻՒՆ ԸՍՏՈՒԵԾՆԵՑ

Դու մտար տամուկեց տարին, ես ծանօթացայ աշխարհին  
 Դու ձեռքից մի թողնիլ բարին, ես վաղուց եմ թաղել չարին,  
 Դու հաղւապիւտ մի կարօտանք, ես գտել եմ քեզ նման կեանք,  
 Դու մի փառք ես, ես մի պարծանք, էն ո՞վ շասիլ մեզ երանի:

Դու բացում ես գեղեցկութեամբ, ես լցում եմ երջանկութեամբ  
 Դու իմ սրտի ճիշտ ճարւածը, ես քու սէրիդ յարմարւածը,  
 Ես մարդ ազգ եմ վանք նորոգող, դու չընաղ ես կեանք նորոգող,  
 Մենք ենք սէրի հանք նորոգող, էն ո՞վ շասիլ մեզ երանի:

Դու ինձ համար լաւ կենակից, ես պարզութեան անընեակից  
 Իմ գոլքերս մեծ է խօսում, քու համբաւդ լաւ է լսում,  
 Դու խիստ նախշւած ու նկարւած, ես տաքացած սիրահարւած,  
 Մենք ենք սրտով միմիանց կարւած, էն ո՞վ շասիլ մեզ երանի:

Գու խղճարոյս խնամակար, ես վիճակից չնորհակալ  
 Գու սիրալիր սիրուն պատկեր, ես մի յայտ քաջ սիրասէր,  
 Գու ինչ լսես սուտ խօսքեր է, ես ինչ ասեմ սուրբ գործեր է,  
 Մեր մէջինը անկեղծ սէր է, էն ո՞վ չասիլ մեզ երանի:

Գու զարթնացած սէր ճանաչած, իսկ ես սէրի մէջ կանաչած  
 Գու մի թրջած սրբած խնձոր, ես երեսից անմաղ տկտր,  
 Ես Էհգարս քեզ տեսնալիս, դու խորհուրդդ ինձ ես տալիս,  
 Միմիանց չբով պար ենք գալիս, էն ո՞վ չասիլ մեզ երանի:

\* \* \*

ՄԵՐ ԳԻՒՂԱՅԻ ԱՂԱՋԱՆ ԱՌՍՏԱՄԵՆՆՅԻ

### ԽՆԴԻՐԸ

Այս քարասիրտ անողորմ աշխարհը  
 Նախանձերով քաղցր վայելչութեանս,  
 Փոխեց շրջանս:

Կտրեց որդուս վարդ կեանքի ոսկի լարը  
 Դառնութիւնի փոխարկեց խրախճանս,  
 Լաց շինեց բանս:

Սիրտս այրեց աշխարհը ինձ ա՜ն տալով  
 Մարգարիտս անարգ հողին սլա՜ն տալով,  
 Տասնամեայ Դանիէլիս մա՜ն տալով  
 Քանդեց տունս քաշեց սիւնս գերանս  
 Կտրեց իրանս:

Աշխարհի չար կամքին բախտն էր համաձայն  
 Երկուը միմեանցից վատթար են ունայն,  
 Որդուս մահը ինձ չէ թւում միմիայն  
 Հրեշտակն է մահով բուն դրեղ տանս  
 Կանգնել դռանս:

Մի պարզե էր նա երկնային տէրութեան,  
 Նախկին պտուղ կնոզական տէրութեան,  
 Աւանդ կորաւ դաւազանս ծերութեան  
 Զեռքից գնաց վերջի օրայ պաշտպանս  
 Փառքը անւանս:

Մաղթեմ տէրից սրտիս միտիթարութիւն  
 Ընկած դրութեանս կրկին յարութիւն,  
 Տացէ և Էհգարին կեանք երկարութիւն  
 Իմ խնդրանօք զիտեմ ես Աղաջանս  
 Գրեց այսքանս:

\* \* \*

1892 ԹԻԻ ԽՕԼԵՐԱՅԻ ԱՌԹԻԻ

Դու իննասուն երկու թիւ, ցաւաբեր նահանջ տարի  
 Տես թէ որքան դու ցաւով վնաս տւիր աշխարհի,  
 Գործով ձեացրիր քեզ մի անգութ մորթարարի,  
 Որքան մարդիկ ջարդեցիր զեդ տաւարի ոչխարի,  
 Կոտորածներիդ թիւը հասաւ քանի քանի հազարի,  
 Այդպէս չար միտք ունէիր պցէիր սարի քարի,  
 Չար գործքդ տեղ է բռնում, անհաշուելի գումարի,  
 Տմարգութիւն ցոյց տւիր, նախ դու վեցին յունվարի,  
 Ջրօրհներին Թիփլիսում կատարեցիր գործ չարի,  
 Երեք հարիւր յիսուն մարդ մէջ ընկան պատահարի:

Խօլերով սկիզբ առար, նախ հոտած Պարսկաստանից  
 Մէշալու մեծ քաղաքէն անմարուր Խորասանից,  
 Դարերով ձեռք չէ վերցնում դա Իրանից Թուրանից,  
 Կարծեմ լազալթ է տեսնում ցաւը կեզտոտ իսանից,  
 Զնայելով որ եկաւ, քիչ էլ հնձեց մեզանից,

Երբ աշխարհը վարակեց, ձեռք վերցրին ամեն բանից,   
 Թանգութիւնով պահպանած, էս օրւայ էժան ջանից,   
 Թողեցին փող ապրուստ կայք, մարդիկը փախան տանից,   
 Շատերը ձեռք վերցրեցին ընտանիքից խիզանից,   
 Փախան դէպի դաշտերը, ընկան քէփերի պարի:

Մահը այնպէս սաստկացաւ, մարդ իր տունը չէր մտնում   
 Եւ մի ժամ իրան վերա ապրելու յոյս չէր դնում,   
 Հարուստը մկան ծակը հազարներով չէր գտնում,   
 Լոյս արեւը բոլորին գլխներին սև մթնում,   
 Մայրը իր մանուկներից, հայրը դիփիցն էր խրթնում,   
 Սողերը մեռածներին, անարգ կերպովին տեսնում,   
 Ով էր իր բարեկամին ընդունում նեղին հասնում,   
 Շատ գիտիներ հէնց իրանց տեղը ընկած էր մնում,   
 Քահանան վախենալով, էլ թաղելու չէր գնում,   
 Մեռածին մարդ էր թաղում, կարգով անասնաւարի:

Երբ Խորասան սկսեց չար հունձը խօլերային   
 Իր մէջի ժողովուրդը դիմեց «Իմամ Միրզային»,   
 Սյնքան ժողովրդի մէջ սուրբ մէշէգիբ չկային,   
 Իմամը վատ տեսնելով, չոքեց թուրքերի վային,   
 Յետոյ ուղարկեց Կովկաս, սուր մանգաղը մահային,   
 Ցաւը առանց երկիւզի հնձեց մարդկանց արխային,   
 Նախ մահմետականներին, Սիւնըւին ու Շիային,   
 Հերթը փոխեց ու ընկաւ, ազգով քրիստոնէային,   
 Յոյներին, Ռուսներին, Վրացիներին, Հային,   
 Ասաց եկել եմ ձեր մէջ, շատ չէ սակաւ պաշարի:

Այն իննասուն երկու թիւ, քեզ կեանքի հաշիւն է զուր   
 Զարութիւնդ յայտնի է, բարութիւնդ ուր է ուր,   
 Ազգս հեղինակներից թողել ես այսօր թափուր,

Ո՛ւր է Գրիգոր Արծրունին, իմաստութեան մի աղբիւր,   
 Որի սրտի մէջին կար ազգասիրութեան վառ հուր,   
 Շատ անձանց մեզ համար եղաւ անբախտութեան լուր,   
 Շէնհեր գիւղում տասն տան, բոլորին կերար մարուր,   
 Գռները փակ թողեցիր, լիբը երեսիդ թո՛ւր ու մուր,   
 Թող անիծեն քեզ չարիդ բերանները ընդ հանուր,   
 Գնաս կորչես յաւիտեան, գերի գառնաս խաւարի:

Գոնեա իննասուն երեք թիւը մաղթենք լաւ լինի   
 Տիրէ առողջութիւնը, աշխարհը անցաւ լինի,   
 Ամեն տեղից մեզ հասնող սղջութեան համբաւ լինի,   
 Ամեն մարդ իզձի հասած, իր վիճակէն բաւ լինի,   
 Մարդը զւարթ իր գործում, սրբնթաց կաքաւ լինի,   
 Մայիսին մի կանաչ տեղ, ուրախութեան թաւ լինի,   
 Մօտը մի Երևանու գինով լիքը կաւ լինի,   
 Բայց խմելու ամանին, չափը գաւաթաւ լինի,   
 Գինին խմելուց յետոյ, մազէն եփած հաւ լինի,   
 Սա առանձին մաղթանք է խնձորկեցի Եհզարի:

Ահա առողջութեան նիւթ   
 Ամեն մի ցաւապարի,

Գու իննասուն երեք թիւ, եթէ կլինես բարի,   
 Իննասուն երկու թիւն աչքերին աղեղ լարի:

\*  
\* \*

ՈՒՄ ԳՈՐԾ ԱՍՏՈՒՆԾ ԵՆՁՈՂԷ ԿԱՍԵՆ ԼԱՒ ՏՂԱԾ Է

Գործը յաջող վատ մարդին լաւ կը գովեն   
 Բախտի բերմամբ ում ցաւ խօսէ «ջան» կասեն,   
 Մարդկանց մէջին ինչ խօսք ասի կընդունեն   
 Սուտ էլ խօսէ ըզրդ շինած հա՛ն կասեն:

Ծոյլ յիմարին, եթէ Աստուած մէկ նայէ  
Ինչ գործ բունէ յաշոյութիւն ընծայէ,  
Կասեն շատ աշխատող «դոչչաղ» տղայ է,  
Սյստեղ, այնտեղ, վերան գովասանք կասեն:

Սովածները չոր քարերին կռներին  
Ռնց կը հասնէ եթէ տեսնէ մեռնելիս,  
Իրա օգտին, մէկ մարդի ձեռք բռներին  
Անողորմին խղճմտանքը տան կասեն:

Էհգար դու քո սիրտդ միշտ անկեղծ պահի  
Լաւ կասեն թէ բախտը, մէկին միշտ շահի,  
Երբ լաւ մարդը ձախտրդութեան պատահի  
Նրա վերա հազար պակաս բան կասեն:

\* \* \*

ԽՄ ՄՕՐՍ ՈՂԲԸ, ԻՐ ՀԱՆԳՈՒՑՅԵԱԼ ՈՐԳՈՒ ՎԵՐԱ

Դու քարասիրտ և անգութ, իննասուն երկու ամ,  
Քու ինձ տւած վէրքովդ, ինչպէս չի ես կսկծամ,  
Ինձ արեյ ես աչքերի արտասունքով արնաքամ,  
Երկու աչքիս գրողն ես, ամեն վայրկեան ամեն ժամ,  
Չար գործքովդ պէտք է քեզ անարգեմ թուք ու մուր տամ:

Դու իմ Խաչատուր որդիս Շամախի մեռացրիր,  
Գերեզմանը հայրենի հողիցը հեռացրիր,  
Տեսնեմ քու նախշդ ծուխ, ինչպէս իմն ծռացրիր,  
Ծերութեան կեռ հասակս կրկնապատիկ կեռացրիր,  
Էլ յոյս չունեմ ուղղեմ նախկին սիրտը ստանամ:

Ծաղկավիթիթ հասակում, ինքը քսանութ ամաց,  
Տարար դրար սև հողում, աշխարհքից կորաւ գնաց,

Խորհուրդները սրտումը, դիւի էլ անկատար մնաց,  
Չարագործութիւնն միշտ քաղցրութիւն է քու կամաց,  
Ամենրի համար չար ես, չունես մի հատ բարեկամ:

Երկիր է շարժեցնում, վայն ու ողբը իր մօրը,  
Ախ Խաչատուր կոչելով թէ գիշերը թէ օրը,  
Քրքրելով երեսը, պատուտելով ողջ շորը,  
Գարձեալ փոքր ինչ լացով է հասկանում սգաւորը,  
Կը գողարեմ կը նընջամ, ու կը զարթնեմ կը ողբամ:

Իմ չորս որդոյս վերայ այնքան չար բարբառեցիր,  
Մինչ գրահս ասպարս յանկարծ ձեռքէս առեցիր,  
Ամբութիւնս քանդեցիր, պարիսպս պատառեցիր,  
Ինչպէս դու սիրտս վրայ ծըծումքի հուր վառեցիր,  
Իմ ցաւս քեզ վիճակի, աչքով տեսնամ հովանամ:

Թիւղ թէ և սրտումս ցաւոց վառարան թողեց,  
Բայց Աստուած մի շառաւիղ սրտիս պահապան թողեց,  
Արմենակը իմ որդուս անւանը նշան թողեց,  
Էհգարի մայր Չառիխ, մխիթարող նրան թողեց,  
Կը նայեմ Արմենակին, կը փոխեմ կուրախանամ:

\* \* \*

Թ Ա Խ Ի Ծ

Ո՛հ այս ինչու լոյս օրերս ամպ պատեց  
Սեով ծածկեց պայծառ արեգակս իմ,  
Գուցէ Աստուած ինձ վատ տեսաւ ու ատեց  
Է՞ր չի նորում յոյսի լուսնեակս իմ:

Չէ՞ որ ես ամենից զեր ի վեր էի  
Ու ամենից զեղեցիկ պատկեր էի,

Այնպէս շքեղ պերճ յատկութեան տէր էի  
Այլ ազգ շունէր փառաց օրինակս իմ:

Կորաւ այն իմ պերճ ու ճոխ յատկութիւնս  
Ստորացաւ փեմափայլ անունս,  
Քանդուեց շքեղաշուք փառաւոր տունս  
Գնաց փառքս, կորաւ ոսկէ դահ ու թագս իմ:

Էհզար, տես ինչ օրի ես պատահեցի  
Սրտի յուսով ինքս ինձի շահեցի,  
Ծաղիկներին բացելուն յոյս պահեցի  
Զմեռ դարձաւ գարնան եղանակս իմ:

\*\*\*

Տ Խ Ր Ա Լ Ի Ե Ր Գ

Յոյց եմ տալիս քեզ սիրելի կեանքս գրութեանս մէջին  
Տես ինչեր են թագաւորում սրտի տէրութեանս մէջին,  
Գառն հոգսերի որդիները կերան սիրտս ու թոքերս  
Առողջ կողմեր չեն թողացել կենսագրութեանս մէջին:

Սրտիս անխիցը բզխում են անհանգչել տաժան հուրեր  
Ճակատագրովս վարում եմ, ես իմ գերութեանս մէջին,  
Գործս է սրտի կրակ, խոր հառաչանք, ցաւ կսկծանք  
Ահա սրանք են զետեղւած իմ համբերութեանս մէջին:

Թուքանքը, անարգանքը, ամօթանքը, ու ծաղրանքը  
Պարում խաղում են ապրուստի բախտի թերութեանս մէջին,  
Թէ ուզում ես տեղեկանաս, դու էհզարիս սև օրերին  
Փշեր տատասկներ են բուսել, դառն գրութեանս մէջին:

Ա Ռ Ա Կ

Ապրեշումի գոյն զգոյն  
Թերերից շքեղ գործած,  
Քսակի մէջ պառլթող  
Գարի կորեկ էր ամած:

Բանը այնպէս պատահեց  
Կռիւ բացեց դրանց մէջ,  
Մէջինները քսակի հետ  
Սկսեցին սաստիկ վէճ:

Մինչև քսակը իրա  
Ագնութիւնը ցոյց տալը,  
Շուտով ականջի հասաւ  
Գարու հպարտ խօսալը:

Ասաց ափսոս շատ ափսոս  
Մեզ պէս ազնիւ ստեղծւած,  
Որ քեզ նման անազնիւ  
Քսակի մէջ ենք ամւած:  
Էհզար:

\*\*\*

ԽՈՏՁ ԱՐՄԱՏԻ ՎԵՐԱ ԿԸ ԲՈՒՄՆԻ

Կասեն թէ բանաստեղծը յայտնի բաց խօսող կ'լինի  
Անկեղծութեամբ մարդի գործը երեսի ասող կ'լինի,  
Խօսքս ում որ կը յարմարւի թող նա իրան ուղղացնի  
Քաջ գիտեմ այս բանի մէջ, ինձնից նեղանող կ'լինի:

Մարդը մանուշակի նման, արմատիցն հոտով պիտի  
Ծայրից ծաղկած հոտով բանը, շուտ հոտից ընկնող կ'լինի.  
Ագնւարմատ ազգի որդին, կտոր հացի կարօտ մնայ  
Գարձեալ նա ագնութեամբ շնորհք ցոյց տուող կ'լինի:

«Հօր արհեստը որդուն կին է», մեր պապեր ասած խօսք է  
Հարբեցող մարդի տղան վերջը հարբեցող կ'լինի,  
Մաղարարի որդին եթէ Սողոմոնեան փառք ստանայ  
Գարձեալ նա հին մաղի խեմքի ման եկող ուզող կ'լինի:



Գղաձարարի որդին եթէ ոսկերիչի աշակերտ տաս  
Կը փախնի անող տալով, սիրելով գոյ կ'լինի,  
Բրուտի որդին եթէ թագաւոր տան մննդեն  
Սյն երջանիկ կեանքը թողած, գործը ցելս ու հոյ կ'լինի:

Սափրիչի որդին եթէ քահանայ ձեռնադրեն  
Կեղծ քաղցրութեամբ ժողովրդին գլխին խուզող կ'լինի,  
Թագաւորի որդին եթէ ցընցոտների մէջ պահպանեն  
Շարժումներից «Արքայազն եմ» հեռուց կանչող կ'լինի:

Տէրտէրների որդիներին շայնքերը շատ են լինում  
Գուցէ թէ հագարից մէկը խելացի շրջող կ'լինի,  
Վաճառականի որդին եթէ հրեշտակների մէջ պահեն  
Նրանց լուսեղէն հանդերձը երգումով խրոյ կ'լինի:

Թէ մէկ հայր է և մէկ «նանի» որդին մէկին կը հմանի  
Յայտնի բան է որ պիճ որդին չար աւաղակ գոյ կ'լինի,  
Անասող ծնունդ չ'լինիլ, ամեն ծնունդ աստղով է  
Բարի աստղում ծնւածը բարիք կամեցող կ'լինի:

Գիտեմ Լուսաւորչին հօրը ասածիս գէմը կ'բերեն  
Միթէ ամենի չար կամքը հրեշտակն օրհնող կ'լինի,  
Էհգար, ով է այս ժամանակ քննում մարդի յատկութիւնը  
Պատուով խելօք մարդը նա է, ում ջիրում նաղդ փող կ'լինի:

\*  
\*\*

**Ա Ռ Ա Կ**

Սարը խելով գաշտի աղջկայ գեղեցկութիւնը,  
Կրթութիւնը համեստ վարքը խելօքութիւնը,  
Քաղեց իրա երկրի պտուղներիցը իբրև ընծայ

Գնաց դաշտի տունը, խնդրեց որ աղջիկը տայ,  
Ուզէ իրա «Մշտացուրտ» անունով տղի համար,  
Որի աղջկայ անունն էր «Տարի նօնօֆար»,  
Գաշտը սարի առաջարկած խնդիրը լսելով  
Քննեց նրան, և էլ իրան, մերժեց ասելով.  
«Սար եղբայր, մեր մէջ թէպէտ հաստութիւն չկայ, միայն  
«Երկուսիս բնութիւնները միմեանց հետ չեն գալ համաձայն»:  
«Էր չեն գալ համաձայն, ասաց սարը, ով սիրելի գաշտ  
«Ի՞նչ արգելք պէտք է անի մեզ միմեանց հետ անհաշտ»:  
«Արգելքը այն է, ասաց գաշտը, և այն է մեզ վատ  
«Յրտին իմ աղջիկս չի դիմանալ, տարին քու տղայ»:  
«Էհգար»

\*  
\*\*

**ԸՍՏՈՒԾՈՅ ԱԳԱՄԻՆ ՏԻՆԾ ՊԸՏՆԵՐԸ**

Հայր Աստուած Ագամին պարգևեց լոյս կեանք  
Պատւիրեց չի ուտիլ պտուղն այն ծառին  
Որը չէ բարին,  
Եթէ Ագամ պահէր այն սուրբ պատւիրանը  
Ու կամքը կատարէր իր բարերարին  
Կանգնէր իզրարին,  
Մենք էլ կբազմէինք արգարոց շարին  
Լուսոյ կամարին:

Բայց ինչ շահ Ագամը Եւային լսաւ  
Ծառերի պտղիցը ուտիլ սկսաւ,  
Երբ որ ամենին ճաշակն էլ տեսաւ  
Բանը դժւարացաւ անմեղ արգարին,  
Սուր խիեց լարին,  
Բայց չեմ ասիլ հեշտը ծախեց դժւարին  
Սյն սիրահարին:

Շնորհեց իրաւունք իշխէ Գրախտին  
Ինչ ասեմ մեր պապի թառամեալ բախտին,  
Սատան և օձը այդ ապերախտին  
Խաբելով արեցին հպատակ չարին,

Թէ կուզ մահով մեռաւ զլուխը քարին  
Գերի Բէլխարին,  
Հասաւ նուբարին:

Գրախտ շքեղակուռ տուն Եղեմական  
Երկիրը աննման կոչուող Հայկական,  
Պարգեցեց երջանիկ կեանք անմահական  
Սակայն չկարեցաւ կատարել բարին,

Մնաց խաւարին,  
Գործը պէտք է այնպէս լինէր աշխարհին  
Ինչպէս որ արին:

Սէրի դժոխք ընկան Ադամն ու Եւան,  
Կեանքը առանց սէրի հաշուցին ունայն,  
Գժոխքի մէջ Ադամ ապրում էր միայն  
Նայելով Եւայի դէմքի նկարին

Սիրովն իր եարին,  
Սէրի պատիժ քաշեց վեց հազար տարին  
Նայիր հնարին:

Կուգեմ նրանց մեզքը ներող Սատուածը  
Հրից հանող կեանք նւիրող Սատուածը,  
Այն երկուսի ներող սիրող Սատուածը  
Ներող լինի և ինձ նման անճարին,

Մի գուցէ զրեն ժառանգ խաւարին:  
Մեղաց գումարին:  
Նւաստ Էհգարին:

Ջ Ա Հ Ե Լ Ի Խ Ն Գ Ի Բ Բ Ը

Թէ գեղեցկութիւնդ գովել սկսեմ  
Մի չ'տեսած նոր նշան ես, Հեղինէ,  
Գէմքիդ արժան մի գովք չունեմ որ ասեմ  
ձիշտն ասած աննման ես, Հեղինէ:

Ոչ դու արուեսակ ես, և ոչ արեգակ  
Ոչ վառ աշտանակ ես, և ոչ լուսնեակ,  
Ոչ Յաւերժահարսն ես, և ոչ հրեշտակ  
Սաիր տեսնեմ դու ինչ բան ես, Հեղինէ:

Ով քեզ տեսնի գործը կ'լինի հեշտացած  
Էլ չ'լինի զբաղմունքում վշտացած,  
Մայիս ամսի շաղի գրից կըշտացած  
Յունիս ամսի Վարդարան ես, Հեղինէ:

Կարօտում են քեզ ամենայն տեսնողքը  
Ուխտ են դալիս համբաւներդ լսողքը,  
Ստտուած շանի եթէ գնաս դժոխքը,  
Խնդրեմ ինձ էլ հետդ տանես, Հեղինէ:

Տեսնում եմ բնական մեծ իմաստուն ես  
Պէտք է որ Էհգարի խօսքը ընդունես,  
Թաղունական գեղեցկութիւն քեզ ունես  
Ափսոս անկիրթ գիւղական ես, Հեղինէ:

\*\*\*

ԼՈՒՍԿ: ԷՅԸ ԵՒ ԱՔԱՂԱՂԸ

Մէկ օր էշը հարցրեց արագալիցը  
«Մի՞թէ չեա ձանձրանում դու քո տաղիցը,

«Թեև քրիստոսը թափ տալով վզիդ ձիգ տալով  
 «Հաւերին նայելով հպարտանալով,  
 «Կանչում ես անդադար «դուզու ծղրըզու»  
 Գրա նոյառակը, եկ ինձ ասիր դու»:

Աքաղաղը ասեց. «Ոյ երկար ահանջ  
 «Ինչու ես նախանձու լինում մտատանջ,  
 «Երբ որ այդպէս է, ես ասեմ իմը  
 «Դու ասիր քոնը, թող լսեն չիմը:» \*)

Եչը ասեց. «Ինչ ժամանակ ես երգեմ  
 «Իմաց ատամներս նորից կը կեռքեմ,  
 «Տիրոջս կը յայտնեմ ես քաջի նման  
 «Ուզելով նրանից ջուր, դարի, դարման»:

Աքաղաղը ասեց. «Անդգայ յիմար  
 «Դու գոռում ես միայն քո փորիդ համար,  
 «Քայց դու լաւ իմանաս որ ես կանչում եմ  
 «Օրւայ ամեն ժամը լաւ ճանանչում եմ,  
 «Յայտնում եմ մարդկանցը քնից վերկենան  
 «Ամենը իրանց գործելու բանին գնան,  
 «Գարձեալ ես յայտնում եմ բոլոր հաւերին  
 «Ինամբ տանեն կազ ու կուզի ցաւերին,  
 «Յայտնում եմ դարձեալ որ զգուշանան  
 «Իրիկունը գան տուն ջսկ տեղ չուշանան,  
 «Աշխատաւոր հաւերիցը ամաչեն  
 «Ամենքն իրանց տէրերին լաւ ճանաչեն,  
 «Չարն ու բարին լաւն ու վատը մտածեն  
 «Եւ միշտ իրանց ձուատելը ձու ամեն,  
 «Խրատում եմ ուտեն օտարի կուտը

«Միայն նրանց չ'տան իրանց օգուտը,  
 «Երկար ահանջ, այդ վրուխդ վկայ է  
 «Իմ երկար կանչելիս պատճառն սա է»:

\*\*\*

### Ա Փ Ս Ո Ո Ա Ն Ք

Ափսոսանքը շատ եմ քաշում, ես քեզ նման հրեշտակին  
 Ողբում եմ, ախ եմ քաշում, վնջ եմ տալիս վատ վիճակին,  
 Որովհետեւ վիճակը քեզ տեղ է մէկ խելքը լսակին,  
 Թանգ սէրդ թշնամութեամբ, ծախել է էժանագին,  
 Խաւարած լուսնի նման մնացել ես ամպի տակին:

Նայելով դրութեանդ, լաւ չեմ տեսնում օր ու կեանքդ  
 Տմարդ սիրականի ձեռքից շատացել է չարչարանքդ,  
 Աղաչանքդ տեղ չի հասնում, չի կատարում սիրտուզանքդ,  
 Վհատութեան մէջ կապւած է ամենայն մէկ հանգամանքդ,  
 Գժւար է թէ կերակուրը յարմար չ'լինի ախորժակին:

Դու կոկոնից նոր վարդ բացած, բախտով խարի ձեռք ես ընկել  
 Մէկ թանգապին Մարգարիտ ես, գիժ յիմարի ձեռք ես ընկել,  
 Գեղեցկութեան թագուհի ես, տգեղ չարի ձեռք ես ընկել,  
 Տէրդ քեզ այնպէս է սիրում, ինչպէս խողը մանուշակին:

Տեսնում եմ քեզ սլատկանեալ վարդ կեանքի պահպանող չունես  
 Նազով ասող, սիրով լսող, սրախ ցաւ հասկանող չունես,  
 Քու սրտովդ, քու մտքովդ, կամքիդ միաբանող չունես,  
 Խնամք տանող, չորեր հանող, փաթաթւող լսող անող չունես,  
 Որ սէրութեան ճաշակները վայելէ իր ժամանակին:

Տէր չունես որ ճաշակի, դրախտ ծոցիդ շամամիցը  
 Հրեշտակը սէրի համար հոգի առաւ Քարամիցը,

\*) Զանգագորի ժողովրդի խօսք է, կը նշանակէ բոլորը, ամենը:

Անհամ մարդը մնց համ զգայ, մեղրի շաքարի համիցը,  
Աւանակին համար իմաց գարին լաւ է բազամիցը,  
Ամեն ստեղծւած արժան է որ պատահի իր խորակին:

Թէ և կասեն կինը պէտք է պահի իր մարդի պատիւը,  
Գիժ մարդը ինչ կիմանայ քեզ նման վարդի պատիւը,  
Սոխակներն կը պահպանեն, վարդերի շարժի պատիւը,  
Տեսնող աչքը կը հասկանայ, գեղեցիկ է վարդի պատիւը,  
Կոյր մարդին ինչին է պէտք լոյս արեւը արեգակին:

Երկու լաւն չեն մխիթարել, ասում եմ հաստատն լաւին  
Մէկն լաւ պիտի, մէկն վատ, որ ամբանայ պատն լաւին,  
Արժանն անարժանին, լաւն վատին, վատն լաւին,  
Համ գեղեցիկութիւնն չեն տալ, համ էլ բախտի շատն լաւին,  
Մի ասիլ ես մէկ չընազ, պատահել եմ գիժ Սահակին:

Գուցէ թէ այդպէս է գրւած, որ դու մարդից չմխիթարես  
Չուրախանաս, ու չ'խնդաս, չ'հագնես, չ'զարդարես,  
Թէ գրանից էլ աւելի, տիրոջդ ձեռքին շարչարես,  
Լաւ կ'ընի Եհզարին լսես, մի կերպ հետը կառավարես,  
Անխախտ օրէնքի ցուրտ ջուրը շաղ տաս նրա թէժ կրակին:

\* \* \*

Ինչ սրտի մէջ որ չի լինի  
Սէրի կրակի տաք ճիւղը,  
Քաղցր ճաշակ չի ունենալ  
Նրանից բուսած պտուղը:

«Եհզար»

Մարդի ճանաչիլ գործով  
Մարդաշայել ըստ փորձով:

Մարդը պէտք է մարդկանց խելքով գնահատի  
Չգայ ամեն մէկին, ինչ գին է պէտքը,  
Այնուհետե գործին նայի նկատի  
Տայ արժէքով սրբան բաժին է պէտքը:

Թող հասկանայ ձիին ու էշին տեղը  
Լաւին վատին, սիրունին գէշին տեղը,  
Գայլին կովին, եղին գոմէշին տեղը  
Որին լաւ տուն, որը գոմին է պէտքը:

Ճամարտութեան ճանփէն չէ երկիւղալի  
Մարդ կայ մարդ չէ, թէ լինի փողալի,  
Համով մարդին խորակ տւէք իւղալի  
Անհամ մարդին շօրւան անխին է պէտքը:

Եհզար, կարճացրու դա բաւական ա  
Շատ աչքերի բարակ շիւղդ գերան ա,  
Խօսքդ այնպէս մարդի ասի հասկանայ  
Լաւ խօսքը յիմարին ինչին է պէտքը:

\* \* \*

Ով կառնի ի մանկութեան  
Ուսման լուսաւորութիւնը,  
Նա կը համնէ երջանկութեան  
Կառնի բախտաւորութիւնը:

\* \* \*

Չեռից բաց մի թողիր, գաւակ Սրամեան  
Սյգ քու պայծառ լայն օրերդ մանկութեան,

Օրերդ ակունք են, մի ծախիլ էժան  
Ապագայում վիճակ ունեն թանգութեան:

Մի լինիր ինձ հման դու էլ անհամեստ  
Սովորիր քեզ համար ուսում ու արեստ,  
Զի մնաս վերջումդ անհաց անզգեստ  
Զի վատնես անունը հօր ժառանգութեան:

Ուսումն է մեր կեանքի լուսածին մայրը  
Սրեստան է քաղցածին հացատու հայրը,  
Ցամաքոզ ջրի պէս չեմ հասնում ծայրը  
Ծովեր եմ ջանք դնում խորամանկութեան:

Զեռիցս թողեցի առիթն հացի  
Ոչ արեստի և ոչ ուսման գնացի,  
Աշխարհի մէջ աննպատակ մնացի  
Զհասայ ես սրտի բարի ցանկութեան:

Էհզարն եմ թանգագին օրերս անցան  
Մնացել եմ ինքս ինձի ապաստան,  
Զի գտայ ես մէկ այնպիսի հայ իշխան  
Որ լինէր ինձ համար յոյս երջանկութեան:

\*  
\*\*

### Ս Ի Ր Ո Յ

Քու այդ գեղեցկագարդ դէմքդ տեսնողը  
Էլ ինչու հաւանի լոյս արեգակին

Ով ազնիւ տիկին,

Կէս ժամի չափ հետդ նստող խօսողը  
Ո՛նց չի հասնիլ իրա սրտի փափագին

Բուն նպատակին:

Քեզ տեսնալիս պար եմ գալիս շքովդ,  
Ի՞նչ կ'լինի իրաւունք տաս գամ քովդ,  
Թողես թիթեռի պէս շուր տամ գլխովդ  
Անձս մատաղ անեմ քեզ պէս ճրագին

Սէրի կրակին:

Եթէ ուզես դու ինձ մէկ մեծ վարձք կանես  
Արժան համարելով մօտդ կը տանես,  
Վառ երեսիդ ծածկող բօղը կը հանես  
Ուխտը կը կատարես սիրոյդ մշակին

Կը ցողւի հողին:

Թող Էհզարիս մօրթէ քեզ պէս շքովը  
Քու ձեռքից կընդունեմ ես մահագեղը,  
Միայն գլուխ դնեմ սրտիդ մէջ տեղը  
Հողիս տամ Աստուծու սուրբ հրեշտակին

Գիր հողի տակին:

\*  
\*\*

### Ա Ռ Ա Կ

Ծառի ինձօրը իրա կարմիր սիրուն գոյնովը  
Բոլորին մօտ պատուով էր քաղցր հոտով համովը:  
Պատուին հպարտացաւ, ասաց գետնախնձորին,  
«Քեզ յայտնի է ես բարձր, դու ինքդ ես ստորին,  
«Ի՞նչու ես իմ անունս իզուր քեզ վերա կրում,  
«Քանի որ համ ու հոտս բեզնից երբէք չէ բուրում:  
«Մանաւանդ ես ծառի եմ, դու ինքդ գետնի տակի,  
«Ես սիրուն եմ դու աղեկ, դու ցրտի ես ես տաքի:  
«Ազգի կողմով իմացիլ, ինձանից հեռուն դու ես,  
«Ես բնութեամբ քաղցր եմ, դու բնութեամբ թըլթու ես:

«Որովհետև հեռի ես ազգով ցեղով ինձանից,  
«Խնդրեմ որ իմ անունս, շուտով վերցնես քեզանից:»  
«Էհգար»

\*  
\*\*

### ՅՈՅՍԸ ԽԱՐԵՐԱՅ Է

Յոյս իմ խարերայ ես, այն պատճառին որ  
Խօստանում ես չես կատարում բաղձանքս,  
Աչխարհ ճանաչելուց մինչև ՚ի այսօր  
Սուտ խոստմունքէդ շահ չ'տեսաւ խեղճ կեանքս:

Մօտիկ քեզ ցոյց ես տամ խելքով թերատին  
Բայց ժամանակը երկար է տևում,  
Աչխարհի փառքերը տամ ես աղբատին  
Մէջ տեղը հինգ կոպէկ բան չի երևում:

Չոր հողում դժւար է բրինձ բուսնելը  
Ջուրն է նրա կենդանութեան պատճառը,  
Մինչև քո օգուտդ մարդի հասնելը  
Չորս ստով կաղ խողը կ'հեծնի ծառը:

Աղբատը քեզանով տունը կը քանդի  
Փէշդ բռնած կամբիդ ապաստանւած է,  
Խեղճը ախ ու վախով հոգին կաւանդի  
Մինչև վերջը կասի «Աստուած ողորմած է»:

Ասում եմ քեզանից իմ տեսած բանս  
Այս օր հարստութեան տէր արեցիր ինձ,  
Ոսկով ու արծաթով լցար գրպանս  
Ման եկի չի գտայ երէք հատ բրինձ:

Ամեն տեղ շրջելիս, դու ինձ հետ էիր  
Քեզանով կանաչած չ'տեսայ ինձի,  
Սիրածներիդ համար հոտաւէտ էիր  
Ինձ համար չես նման վայրենի զինձի:

Յոյս իմ, ես էհգարն եմ Ղարաբաղեցի  
Համարձակ խօսացի խնդրում եմ ներես,  
Բայց ինչ որ ցանեցի այն չի հնձեցի,  
Ամեն տեղ թողեցիր ինձ սևաերես:

\*  
\*\*

### ՅԱՆԿԱՐԹԱԾԻՆ ԲԱՆ

Լաւ է դիպչէ երեսիս քաջ առիւծի ապտակը,  
Քան թէ մտնեմ ազուէսի հովանաւորութեան տակը:  
«Էհգար»

\*  
\*\*

### Ա. Ռ. Ա. Կ ԳՈՂԵՐԸ ԵՒ ՅՆԵՐԸ

Գողերը արեցին խորհրդակցութիւն  
Գնացին գողութեան մի իշխանի տուն:  
Իշխանի դռանը երկու հատ շուն կար  
Նրանց հաշոյնները զսպելու համար:  
Երկու մանր կտոր թաղիք ճարեցին  
Յետոյ թաղիքները իւրոտ արեցին:  
Ու գցեցին այն շների առաջը  
Որպէս զի չ'արձակեն, էլ իրանց հաշը:  
Այլ իւրոտ թաղիքի վերայ պարապեն

Մինչև իրանք իրանց բեռները կապեն:  
 Մէկ շունը լեզելով իրան կորցրեց  
 Միւսը բոլորովին ուշ չ'զարձրեց:  
 Թէ և խաբւեց գողերը ներս գնալիս  
 Բայց միջոց շուեց տանից գուրս գալիս:  
 Հաշելով յայտնեց հարեաններին  
 Հասան ու բռնեցին գող մարդասպաններին:  
 «Էհգար»

\*  
\*\*

### Ա. Ռ. Ա. Կ

Հեծելութեան անսովոր  
 Երիտասարդը նոր նոր,  
 Զխարշաւ էր սովորում  
 Եւ ինքն էր շատ լաւ օրում:  
 Ուրախ ու հպարտ սրտով  
 Բայց խիստ անյարմար կերպով,  
 Նստած նժոյգի մէջքին  
 Նոր լոյս եկած քօռ աչքին:  
 Նա մղում էր դէպ առաջ  
 Ինքը իրան կարծած քաջ,  
 Նժոյգը խրխնջալով  
 Ենչազօր փռչտալով:  
 Կրծելով ոսկեայ սանձը  
 Աշխոյժով վառված անձը,  
 Զւարթութեամբ փայլելով  
 Թռչկոտելով քայլելով:  
 Ենչարդեք չունի սրտին  
 Մէջքի երիտասարդին,  
 Այնպէս է հանգիստ տանում  
 Որ տեսնողներ զարմանում:  
 Բայց ի՞նչ օգուտ տեսնողը  
 Իր խղճին չի համնողը,  
 Ուզիլը խօսելու տեղ  
 Նժոյգին գովելու տեղ:  
 Գովում էր այն հպարտին  
 Այն թոյլ երիտասարդին: \*)  
 «Էհգար»

\*) Հօրից որդու համար մնացած փողն է:

### Ա. Ռ. Ա. Կ

Գեկտեմբերը շարութեամբ  
 Այնպէս շատ տար էր անում,  
 Որ մարդկանց լեզադատառ  
 Ու սրտաճար էր անում:  
 Ա՛րդեօք ով էր կարենում  
 Գուրս գալ դրսումը շրջել,  
 Փախել թագնուել էին  
 Խոր խոր խրճիթներ մտել:  
 Համարեա երկնքիցը  
 Երկրին կրակ էր թափում,  
 Որ շատերը սրտախաղ  
 Եին լինում շտափում:  
 Սակայն իր տաքութիւնը  
 Երկար տանել չ'կարաց,  
 Զար խորհուրդով այն շարը  
 Հէնց դարդակասիրտ մնաց:  
 Կարճ օրերով շատ վռաղ  
 Հանգիպեց ցուրտ Յաւնվարին,  
 Այրով հուրը վերացաւ  
 \*Հով կեանք եկաւ աշխարհին  
 «Էհգար»

\*  
\*\*

### Ա. Ռ. Ա. Կ

Քացախը տեսնում էր գինին  
 Զիմք է եղել մարդկանց դինին,  
 Ու մանաւանդ իշխանաց մօտ  
 Որը ունի լաւ համ ու հոտ:  
 Նրան շատ մեծ պատիւ ունի  
 Իրան երբէք անուն չունի,  
 Նախանձեց գինու վիճակին  
 Հետեց իր շար կրակին:  
 Սաստիկ դառնութեամբ գօ-  
 րացաւ  
 Բորբորեցաւ ու շարացաւ,  
 Այնքան սաստկացրուց ուժը  
 Մինչև կոտրեց իրա կուժը:  
 «Էհգար»

\*  
\*\*

### Ա. Ռ. Ա. Կ

#### ՍՈՍԻ ԵՒ ՍԽՏՈՐԻ ՎԻՃԵԼԸ

Սոխը մէկէլ սխտորը  
 Վիճում էին միմեանց հետ,  
 Մէկ մէկուց ամենք իրանց  
 Կարծում էին հոտաւետ:

Վարդը յանկարծ պատահեց  
Սասց իբոյր էր վիճում,  
Որովհետև լաւ կոյմեր  
Չկայ երկուսից միջում:

Ինչ մարդիք որ ձեզ նման  
Զգուցի հոտի տէր են,  
Նրանք միշտ ձեզ կ'պատուեն  
Ձեզպէսների հետ սէր են:

Գուք միմեանց հետ վիճելիս  
Ձեզ տեղ ես եմ ամաշում,  
Որովհետև երկուսից  
Ս.զգն ու ցեղն եմ ճանաշում:

Սոխին առաց դու սոխ ես  
Բնութիւնդ յետ այսու,  
Ել չես կարող որ փոխես  
Թէ մեզրի մէջ մտնես դու:

Ձեր ցեղերից գոյացած  
Հոտով Բուրաստար չկայ,  
Սյդ մասին գովքի արժան  
Ձեզանից մեկ բան չկայ:

Իսկ սխտորին էլ առաց  
Գիւր զիտում են սխտոր ես,  
Քեզ ուտողին լուսաւոր  
Ս.չքերը կըպատորես:

Պատուով էք դուք թուրքերի  
Մէկ էլ քրդերի մօտը,  
Լաւ մարդկանցը զգւանք է  
Թ'ուում ձեր համ ու հոտը,

Հոտով ծաղիկների մօտ  
Ինձ ասեցէք դուք ինչ էք,  
Համով հոտով երկուսդ  
Ոչինչից էլ ոչինչ էք:

\*\*\*

ԼԵՋՈՎ ԻԹՈՒՆ ԶՂԻՆԻԼ, ԷՌԱՆՅ ԳՈՐԾԻ ԲԱՆ ԶՂԻՆԻԼ

Ինչ հայ իշխան ազգի համար անշահ է  
Սյն իշխանին իշխան ասել պէտք չէ,  
Անօգուտ իշխանը մի հանգւած ջահ է  
Նրա վերա գովքեր խօսել պէտքը չէ:

Ինչ կայ անարատուներ սուտ ողբալումը  
Ծառը պարծանք կառնի պտուղ տարումը,

Լի խուրձերը որոշեցէք կալումը  
Փուշ խուրձերից բերք սպասել պէտքը չէ:

Ս.զգասէր իշխանին գովքով մեծարի  
Վատին տմարդ, բայց լաւին մարդ համարի,  
Յորեն, հաճար, կորեկ, պռութով վարի,  
Գիւր միասին խառն կասել պէտքը չէ:

Էհգար հարկաւոր է ճանաչես բարիդ  
Ս.նկեղծութեամբ փայլես ինչպէս մարգարիտ,  
Գործին նայիր, յետոյ խօսա ճշմարիտ  
Մարդից իբոյր սուտ բամբասել պէտքը չէ:

\*\*\*

## Մ Ե Ղ Ե Տ Ի Ն Ե Ր

Էհգար ողջ ես այս կեանքում, ապշականգ ես զարմանքում  
Ոմանք մերկ են մանգալիս, ոմանք են զարդարանքում:

Էհգար ողջ ես այս կեանքում, ապշականգ ես զարմանքում  
Ոմանք խնդութեան մէջ են, ոմանք են կսկծանքում:

Էհգար ողջ ես այս կեանքում, ապշականգ ես զարմանքում  
Ոմանք ուտում խմում են, ոմանք են կարօտանքում:

Էհգար ողջ ես այս կեանքում, ապշականգ ես զարմանքում  
Ոմանք ապրում են հանգիստ, ոմանք են միշտ տանջանքում:

Էհգար ողջ ես այս կեանքում, ձեռքերդ է յանցանքում  
Թողիր աշխարհի կեանքը, գնա ճգնիր մի վանքում:



### Տ Ե Ս Ի Լ Ք

Լսեցէք, սիրելիք, պատմեմ ձեզ մի բան  
 Որը ինձ պատահեց տեսիլքի նման:  
 Այս գիշեր հանդիստ նստած եմ տունս  
 Մտումս են ընտանիքս խիզանս,  
 Մեր պապերի հին վէպերիցն ենք խօսում,  
 Ամենքս ուրախ ատում ենք լսում:  
 Վաղը շարաթ լուսնին է տասն չորսը  
 Այնպէս պարզ գիշեր է որ կանւի որսը:  
 Հողմը հովիկ օդ է բուրում կենսատու  
 Բու թռչունը անխոնջ ձայն ու «հու հու»  
 Հասել է գիշերուայ տասն մէկ ժամը,  
 Չենք բաց թողնում քաղցր վէպերի համը:  
 Սրտաշարժ վէպերն ջոկ խօսք են բացում  
 Ամեն բանից մեզ տալիս են իմացում:  
 Թէ և մեր մէջումը պարզ ասըլըս կայ,  
 Բայց դրսումը մի ցածր քըսըփոյ կայ:  
 Միայն մանուկներն ոչինչ չեմ ասում,  
 Կարծելով կը վախեն մի բան չեմ խօսում  
 Յետոյ համբերութեան ես չի գիմացայ  
 Դրսի քըսըփոսից երկիւզ ստացայ  
 Խիզանիս ասեցի դուք էլ էք լսում  
 Ականջ գրէք, այն լինչեր են քըսփսում,  
 Երբէք չվախենար, սրտապինդ կացէք,  
 Եթէ գողեր կ'ընեն դուք լաւ իմացէք  
 Ահա խանջարը, ահա հրացան  
 Նրանց բոլորին կանեմ ցիր ու ցան,  
 Չեմ թողիլ նրանց որ մտնեն տունս  
 Տանեն ունեցածս վատնեն անունս,  
 Ես սիրտ եմ տալիս որ ձայն չի հանեն

Որպէս իրանց մի կերպ պահպանեն,  
 Փոխանակ խրատս հաստատ պահելի  
 Լացին դուռնան տւին վախկոտ ջահելի,  
 Վայըն ու ոգբալը մանր խիզանիս  
 Էլ աւել վախ է տամ շփոթւած ջանիս,  
 Մահւան գողգողոցը ընկել է ջանս  
 Հասիր սով սղորմած իմ նեղութեանս,  
 Թէ օձի կծածին աչքին քուն կը գայ,  
 Իմացէք ինձ էլ հանգստութիւն կը գայ  
 Էլի նեղ տեղ քաջ կենալն է հարկաւոր  
 Ինքս ինձ սիրտ տալով յանկարծ լսամ որ,  
 Մէկը շատ սաստիկ պինդ դարպասէն թակեց,  
 Սիրտս արիւն դառաւ պռօշս ճարեց,  
 Այնպէս պինդ ձեծում է դռան տախտակը  
 Կարծես թէ ձեռքին է երկաթեայ թակը,  
 Սրտտուելով կրկին տեղից վերկացայ  
 Վախս փախաւ քաջութեան սիրտ ստացայ,  
 Վեր առի խենջարն ու վեց տրարիչը  
 Ընկերս արեցի Յիսուս փրկիչը,  
 Գնացի կանգնեցի դարպասի յետքին,  
 Գնդակներ գրեցի տարճանակին,  
 Ու կանչեցի, ինչ մարդիկ էք, սով էք դուք  
 Թէ չար էք թէ բարի յայտնեցէք յատուկ:

### ՆՐԱՆՔ ՊՍՏԱՍԻՍՆԵՅԻՆ.

«Մենք բարի մարդիկ ենք միամիտ մ'նաս  
 «Մեղանից բացի օգուտ չի գալ քեզ վնաս»  
 Ինձ ներգործեց սրանց շատ ազաչանքը  
 Տարացաւ սրտիս ցուրտ խզմտանքը,  
 Չար վնէք կսպանեմ նախ իմաց արի

Զէնքերիս յուսարով դուռն բաց արի:  
 Տեսայ չորս մարդիք են հագւած փառաւոր  
 Իւրաքանչիւր մարդը ինչպէս թագաւոր,  
 «Բարի իրիկուն քեզ» «Աստուծու բարի ձեզ»  
 «Խնդրում ենք այս գիշեր հիւր ընդունես մեզ»:  
 Ի՞նչպէս այսպէս մարդկանց հիւր ընդունեմ  
 Սրանց պատւին պատշաճ անկողինք չունեմ,  
 Ես իմ սրտում այսպէս խոր միտք եմ անում  
 Եւ տունս տանելու չեմ սրտովանում:  
 Սրանց հարցին ես պատասխան չ'ուած  
 Մնացել եմ հէնց զարմացած ու կանգնած:  
 Երբոր տեսաւ միջոցը երկարացաւ  
 Ու ինձանից մի պատասխան չստացաւ,  
 Եարունակեց սրանց մէկը բամբասել  
 Տմարդներին փատ կողմերը պարզ ասել,  
 «Մենք այստեղ մէկի հետը ծանօթ էինք լաւ  
 «Այն ծանօթը մեր պատիւը չ'իմացաւ  
 «Մի ժամանակ մենք նրան զարդարեցինք  
 «Բարձր գահի մեծ փառքի տէր արեցինք  
 «Բարգաւաճեց հարստացաւ զօրացաւ  
 «Փարթամացաւ ստորացաւ վերացաւ,  
 «Երբոր գնում էինք մենք նրա տունը  
 «Որդին հօրը կանէր թշնամութիւնը,  
 «Մենք նրան փատ տեսանք շուտով հեռացանք  
 «Քանդեցաւ աղքատացաւ ու՛մ որ մոռացանք,  
 «Այժմ նրա տունը տես աւերակ է  
 «Զի նորոգելի այնպէս հիմնայատակ է,  
 «Հիմայ էլ ուզում ենք քեզ ծանօթանալ  
 «Քեզ համար մեր փառքի դռները բանալ,  
 «Թէ լաւ լինես, քեզ մեծ փառքի տէր կանենք,  
 «Լայնատարած մեծ աշխարհքի տէր կանենք»:

Աչքիս վերայ ձեզ չորսիդ էլ տեղ ունէք  
 Միթէ աշխարհումը ձեզ էլ մեղ ունէք,  
 Բարով հագար բարի, լինի ձեր գալն  
 Իմ տանիցս չ'լինի ձեր գնալն,  
 Ես շատ բախտաւոր եմ որ իմ տան հացը  
 Արժան լինի ձեզ մնան իշխանացը,  
 Ո՞վ չի հիւր ընդունիլ ձեզպէս մարդկանցը,  
 Զեր սիրոյն ցրիւ տայ իր բոլոր գանձը:  
 Մի կողմով ձեզանից ամօթ եմ անում  
 Միայն թէ խնդրելով այս եմ հարցնում,  
 Ո՞վ է ձեր ծանօթը խնդրում եմ ասէք,  
 Կամ թէ ո՞վ էք դուք որ կը բամբասէք:  
 Ասաց «ես եմ մարդկային ազգի բախտը,  
 «Որ ինձ մօտ են գժոխքն ու դրախտը.  
 «Ես եմ թագաւորաց փառաց ասպարը,  
 «Նրանց գահին թագին նախն ու նկարը»:

Համարձակութիւնս խնդրում եմ ներեն  
 Մօտիդ կանգնածները, ապա ուրքեր են:  
 Ասաց «սա է Աստուածարար սուրբ սէրը  
 «Փառք ու վայելչութիւն հաստատող Տէրը:  
 «Իսկ այս մէկն է թագաւորաց տան Փառքը  
 «Սրանում պերճանում ողջ աշխարհքը.  
 «Իսկ այս մէկն է մարդկային ազգի Յոյսը  
 «Սուրբ սրտերի իղձածին արշալոյսը»:

Զքնազգեղ պատկերներիդ ես մատաղ  
 Զեղ ուշ ճանաչեցի, եզրուկ ինձ աւաղ,  
 Զեր ետևից ճրագով եմ ման գալիս  
 Էլ միք թողնիլ ինձ սև օրում ողբալիս.  
 Ազգաչում եմ վերև Աստուած ներքև դուք

Ընդհանուր աշխարհը տալիս է ինձ թուք,  
 Պատճառ այն է տեսնում են շատ աղքատ եմ,  
 Իրանց գրութեանը անհամեմատ եմ,  
 Աղաչում եմ դառն վիճակիս նայէք  
 Խղճաք ինձի ու մի բաժին ընծայէք:  
 Մեր այս տունը ձեզ շատ է հնազանդել  
 Չորս անգամ շինել էք, չորս անգամ քանդել,  
 Հազիւ դուք ձեր կամքով եկել էք մեր տուն  
 Տեսնում էք քանդւած է, չունի պահող սիւն,  
 Խեղճ եմ վարձք արեցէք շինեցէք տունս  
 Գուցէ վերականգնի կենդանութիւնս,  
 Ինչու էք ինձանից սառել սգառել:  
 Բարեկամութեան առուն պատառել:  
 Իրանք ինձ հետ, ես իրանց հետ մի խօսքով  
 Ինձ թուում է որ չենք խօսում հայ լեզուով,  
 Մինչև անգամ չեն էլ գիտում թէ հայ եմ  
 Սյսքան բանին ես ճշմարիտ ներկայ եմ,  
 Մեր մէջ սրանց մինը դառել է թարգման  
 Երկու կողմի պարզ յայտնում է ամեն բան:

Սրանց մինը այժմ հետաքրքրեց  
 Լուրջօրէն քաղցրութեամբ ինձանից հարցրեց,  
 «Ինչ ազգից ես, ինչ է ձեր ազգանունը  
 «Գիտես արդեօք ձեր ազգի յատկութիւնը»:  
 Ասեցի հայ եմ Հայկական ազգ եմ  
 Ազնիւ յատկութիւնս, բեզնից էր ծածկեմ,  
 «Օ, դու հայ ես, էս ինչ շատ սխալել ենք  
 «Հայի ձեռքի համարեան թէ հալւել ենք,  
 «Մենք չենք գալ ձեր տունը, երբոր դու հայ ես  
 «Մէրատեաց ազգիցն ես, դարձեալ դու նա ես,

«Վեր կացէք ընկերներ վնանք այս տեղից  
 Վաղուց ենք համ առել Հայկական ցեղից»:

Երբ որ ուզում էին ինձ հեռանալ  
 Սկսեցի դրանց ոտքերը լեզ տալ,  
 Ինչ աղաչանք, ինչ պաղատանք, ինչ խնդիր,  
 Ողբախառն վայիս եկ դու ահանջ դիր:  
 Մի այսպիսի լուսազարդեալ գիշերը  
 Պինդ բռնել եմ այս չորս մարդկանց փեշերը,  
 Աղաչում եմ որ ինձ մի լաւ բաժին տան  
 Տալուց յետոյ ինչ տեղ ուզում են վնան:  
 Որքան որքան տարիներով դարերով  
 Խեղդել են լարերով, դարկել քարերով,  
 Հազիւ իրանց ոտով եկել են մօտս  
 Ո՞նց չի առնեմ սրանցից իմ կարօտս,  
 Սրանք են խեղճերին անում զերազանց  
 Ես ինչու ձեռքիցս բաց թողնեմ սրանց,  
 Սրանք են պատիւ բարձրացողներ  
 Գառն գրութիւններ քաղցրացնողներ,  
 Բաժին չառած սրանց չեմ թողնիլ ձեռքից  
 Ես ինչպէս գրկեմ հազազիւտ փառքից,  
 Ես իմ սրտում դեռ այսպէս եմ ցել անում  
 Տեսնենք սրանք սերմը ինչպէս են ձանում:

Գիշեր անցել է մենք կանգնած գրտում  
 Պայծառ լուսնի տակին, և շատ ենք մրսում,  
 Պատճառ դարունն նոր էր սկսած  
 Զմեռն էր իրա վախճանին հասած,  
 Սկսեցի դարձեալ համեցէք անել  
 Ուզում եմ մի կերպ դրսից ներս տանել,  
 Մինչև երբ այստեղ կանգնէք դուք ցրտում

Է՞ր չէք գալիս տունս ինչ կայ ձեր սրտում,   
 Չորսդ համեցէք մեր տան նստեցէք   
 Հաց պատրաստեմ կերէք թիչ հանգստացէք,   
 Այնուհետեւ էլ ինչ տեղ կուզէք կերթաք   
 Ես ձեր կամքին չեմ կանգնելու հակառակ,   
 Գիտեմ համեցեքով տունս չեն գալու   
 Սրտիս ուզածները և չեն էլ տալու,   
 Ուզում եմ մի կերպ սրանց ներս տանեմ   
 Գլխներին չըտեսած օյին հանեմ,   
 Հէնց ներս մտած այս կլինի իմ բանս   
 Կը փակեմ դռները կը թողնեմ տանս,   
 Կառնեմ ձեռքս ներսում եղած ժամանակ   
 Շահմարի բերանով քաշած մի մահակ,   
 Առաջ խոնարհելով կուզեմ բաժինս   
 Որ նոր կեանքի զարգերով փոխեն հինս,   
 Եթէ չեն տալ բանին կերպը կիմանամ   
 Փայտի գոռով ես բաժինս կստանամ,   
 Կարծես սրանց հետը եղբայրացել եմ   
 Չորսին վրա մի այնպէս զայրացել եմ,   
 Թէ ի՞նչ եմ մտածում ես էլ չեմ գիտում   
 Նրանք իմ սրտինս շատ լաւ են դիտում:   
 Երրորդ համեցէքը կրկնեցի դարձեալ   
 Նրանք սկսեցին պարզ պատասխան տալ,

«Աւերորդ է աղաչանքդ ու գոռդ   
 «Քեզ պէս տեսանք քու պապիդ ու քու հորդ,   
 «Ինչպէս դու ես խորհուրդ խորհում մեզ վերայ,   
 «Նոյն սրտովը մենք էլ խորհենք քեզ վերայ,   
 «Դուք աշխարհքում բարգաւաճան տուն էիք   
 «Բարձր անուն գովք ու հռչակ ունէիք,   
 «Քանի անգամ որ մտել ենք ձեր տունը

«Լաւ շտեսանք ձերոնցը բնութիւնը,   
 «Թէ և իրանք էին մի հօր զաւակներ   
 «Միմեանց էին հակառակներ ներհակներ,   
 «Թէ պատահէր սէրը մտնէր իրանց մէջ   
 «Կարճ միջոցում փոխարկում էր դառնում վէճ,   
 «Շատ ժամանակ ձերոնք տեսան գերութիւն   
 «Գերողը տեսնում էր չունեն սէրութիւն,   
 «Միանգամայն այն «Սէր» ասած թանգ բանը   
 «Երբէք չկարեցաւ փայլել ձեր տանը,   
 «Մէկսմէկուց բամբասանքներ վատ խօսալ   
 «Իրանց գործը այլոց մօտը շատ խօսալ,   
 «Մերժում էին ամենայն մի սէր քարոզ   
 «Պատճառ իրանք էին հպարտ ու գոռոզ,   
 «Որդիքն էին հօրը շատ անհնազանդ   
 «Անհնազանդութեամբ եղան քարուքանդ,   
 «Եթէ իմանայինք դու ես նրանց ցեղ   
 «Լաւ իմացիր որ չէիք գալ մենք այստեղ,   
 «Սխալմամբ ենք եկել ձեր դուռն թակել   
 «Ձեր պապերի բարքը յիշել գուշակել,   
 «Ումնից բամբասեցինք մենք այս տեղ այսքան   
 «Դու ես նրան ոսկոր, արիւն ազգական,   
 «Երբ որ հայ ես իմաց չենք գալ ձեր տունը   
 «Ձեր տանիցն է բղխում ատելութիւնը,   
 «Ե՞րբ դուք մի տուն միմեանց այդքան անհաշտէք,   
 «Սէրին, բախտին, փարբին, ի՞նչպէս կպաշտէք,   
 «Նախ դուք միմեանց տաք սրտերով սիրեցէք   
 «Յետոյ մեզ ձեր տունը հրաւիրեցէք,   
 «Անսէր տունը մենք չենք մտնիլ ոչ մի ժամ   
 «Անսէր տանը խկի չլինիլ հոտ ու համ,   
 «Մենք չենք գալ ձեր տունը սրտով կեղտոտ էք   
 «Որքան ազով անենք, դարձեալ կը հոտէք:

Գարձեալ հարցրեցի  
Մենք անսէր ենք նախատենք սով էք թաղում,  
Դուք ուրեմն սում սէր տանն էք բնակում:

Նրանք ասեցին,  
«Մեր բնակած տեղը դուք լաւ էք տեսնում  
Թէ ինչպէս են ծլում ճոխակերպ բսնում,  
«Ամեն տեղ փայլում է նրանց նշանը  
«Եւ միշտ ուժ ենք տալիս բարգաւաճմանը,  
«Տեսնում ենք որ նրանց տանը սուրբ սէր կայ  
«Ասիր տեսնեմ անսէր տանը ինչ խէր կայ»:

Գարձեալ ես ասեցի  
Միթէ պապի գործը կանեն պատճառն  
Թոռների օրերը կը շինեն դառն:

Բախտը ասեց  
«Գիտես ինչ կայ, ով սիրելի հայ որդի  
«Ամեն բանի սուրբ սէրը կառաջնորդի,  
«Արմատիցն թէ որդնամ լինի ծառն  
«Բերքը կ'լինի համ որդնարեք համ դառն,  
«Մենք տեսնում ենք որ սէր չկայ ձեզանում  
«Այդ կողմանէ մեզքը չկայ մեզանում,  
«Սէրը ինչ տեղ լինի մենք էլ այն տեղ ենք  
«Չորսը էլ միմիանցից անբաժան ցեղ ենք,  
«Ամենայն ժամանակ մենք սէրի հետն ենք  
«Սէրը ինչ տուն մտնի մենք էլ կը մտնենք,  
«Մեր չորս եղբայրներիս սէրն է մեծ եղբայր  
«Չորս և քանիս Աստուած ինքն է ծնող Հայր»:

Թէ տեսիլք էք թէ երազ էք վերջապէս  
Ինքս եղայ այս բանիս ակնատես,

Ես էհզարս նրանց շատ աղաչեցի  
Եւ չորսին էլ ձեռք ու ոտքը պաշեցի,  
Աղաչանքս բանի տեղ չղրեցին  
Իրանք իրանց խնայածն արեցին,  
Ոչ ինձ բաժին տւին ոչ մտան տունս  
Իգուր էլ կտրեցին այն վիշեր քունս,  
Երբ թողեցին սիրտուզանքից ծարաւ ինձ,  
Նրանց վերջին խօսքը հէնց այս դառաւ ինձ.

«Մենք այն ժամանակը քեզ բաժին կ'տանք,  
«Երբ որ ձեր տան մէջը սուրբ սէր կ'տեսնանք»:

Այս ասելուց յետոյ ինձնից հեռացան  
Չգիտեմ զնացին ում դուռն բացան:

\* \* \*

ինչ տեղից եմ, ինչ ցեղից եմ, ինչ հողից եմ, ինչ գիւղից եմ,  
բուն յատկութիւնս

Չորս տարերբին անայտ բնութիւնից եմ  
Երկու մարտի արեան պարզ իւզէն եմ ես,  
Հօր սիրոյ պահանջին կատարումիցն եմ  
Մօր սիրոյ մորմտի անթեղէն եմ ես:

Թառամական վարդ եմ թէև դարթ եմ  
Ջրային ծաղիկ եմ օդեղէն գարդ եմ,  
Հրանիւթ շինւած եմ հողածին մարդ եմ  
Հողաչէն անօթ եմ, հողեղէն եմ ես:

Հաւատով ճշմարիտ քրիստոնեայ եմ  
Կրօնով իսկ Լուսաւորչեան տղայ եմ,

Արիւնով Հայկազն եմ, անունով հայ եմ,  
Նախազգաց յատուութեանց շքեղէն եմ ես:

Արձագանքով յիշում են ծեր կանայքը,  
Կորաւ Արարատեան տան փառաց կայքը,  
Պապս էր Ներքովթին սպանող Հայկը,  
Գիւցազն Արամի քաջ ցեղէն եմ ես:

Ազնիւ արմատից են իմ թանգագինքս  
Բախտը քանդեց տունս, կտորեց շլինքս,  
Տիրատունկ դրախտին հովիցն եմ ինքս  
Եղեմական երկրի մէջ տեղէն եմ ես:

Հինգ օրւայ կեանք ունիմ սև օրի մէջին  
Կարծես կորած ակ եմ ջրհորի մէջի,  
Զանգագօր գաւառի խոր ձորի մէջի  
Խնծորէսկ անունով մեծ գիւղէն եմ ես:

Անունս Սարգիս է, Սարգսի ծոռն եմ  
Հոտով ծաղկանց մօտը կծւահոտ խոռն եմ,  
Օհանեանց Պետրոսի տղայ թոռն եմ  
Հանգուցեալ Յովսէփի մեծ տղէն եմ ես:

Էհզարն եմ, կենդանի, կեանքից օտար եմ  
Զեռունքի կերակուր հողի պաշար եմ,  
Որքան ապրեմ վերջը մորթւող ոչխար եմ  
Մահւան սուր դանակի մատաղէն եմ ես:

\*  
\*\*

### Հ Ա Յ Ր Ի Կ Ի Ն

Յնծայ, գահդ Լուսաւորչեան, լոյս Լուսաւորչեանն եկաւ  
Հոգևոր տանդ վեհութեան սուրբ պատւին արժանն եկաւ,

Համայն ազգի սիրած կոչած Հայրիկ Խրիմեանն եկաւ,  
Կաթուղիկոս ամենայն հայոց, Հոգևոր իշխանն եկաւ,  
Անգլուխ ցրած հօտին, տոկուն պահապանն եկաւ,  
Հոյակապ գործակառոյց, հմուտ ճարտասանն եկաւ:

Փառք լինի հազար անգամ վերին նախախնամութեանը  
Նա տեսներով որ ընկած է վեհ սիւնը հոգևոր տանը,  
Մանաւանդ խիստ ողբում են, «Հայրիկ կոչելով» խիզանը,  
Այն Հայրիկը այլ Հայրիկ չէ, նա է Հայրիկ Խրիմեանը,  
Էնա Հայրիկին ուղարկեց պահպանէ որք զերգաստանը,  
Քաղցած ու որք գաւակների Տէրը տիրականն եկաւ:

Որ իմանար Աստուածառար, ազգի պարզին է Հայրիկը  
Թորգոմեան խաւար տանը, պայծառ արին է Հայրիկը,  
Նոյեան ազանուն բերանի կանաչ տէրին է Հայրիկը,  
Սեծն Նէրսէս Մեսրոպ Մաշտոց, Սահակ պարթեն է Հայրիկը,  
Մի խօսքով ամբողջ ազգի, պահող աջ թին է Հայրիկը,  
Հայոց ընկած դրութեանը զօրեղ օգնականն եկաւ:

Մեր պաշտելի ու սիրելի Հայրիկը մէկ լոյս է յատուկ  
Շատ վհատած թոյլ սրտերի, ամուր խրախոյս է յատուկ,  
Այրիացեալ անպարզ տանը, նոր պսակման յոյս է յատուկ,  
Եղեմական դրախտի մէջ Աստուածատունկ բոյս է յատուկ,  
Աստուծոյ հարսնացեալն մաքրակենցալ կոյս է յատուկ,  
Հոգևոր փեսայի հարսանեաց արդէն հրամանն եկաւ:

Մինչև օրս մեր սրտերը դողդողում էր ահի վերայ  
Մեր յոյսերը բաղձանքները թռթռում էր մահի վերայ,  
«Փառք ու կեցցէր» դէ թոյլ խաղին Էջմիածնի ջահի վերայ,  
Որով տեսնում ենք Հայրիկին Լուսաւորչեան գահի վերայ,  
Այսուհետև կը մտածէ իր խեղճ ազգի շահի վերայ,  
Ազգային լուծը ստանձնող գործող արիաջանն եկաւ:

ԱՍՏՈՒԸԾ ՄԻ ԶԼՓՈՎ ՄԸՐԴԻ ՏԻՆԷ Է

Գիշեր ցերեկ աշխարհի հետ կոււելով  
Վերջը ինձի մահւան դաւի մէջ գցեց,  
Ես իրան հետ, ինքը ինձ հետ ծուելով  
Բուն բաղձանքից մեծ ծարաւի մէջ գցեց:

Ինձ չ'սիրեց, քարուքանդ արեց տունս  
Խից միանգամայն կենդանութիւնս,  
Մեծահոշակ իմ պատուական անունս  
Աղքատութեան վատ համբաւի մէջ գցեց:

Հաւատացի բախտի նման անտեսին  
Մարդ ուտողին անփող ծախեց ինձ պէսին,  
Ինձ խաբելով անտակ ծովի երեսին  
Կռնէս բռնեց, կոտրած նաւի մէջ գցեց:

Խղճալի Էհզարն եմ, կայ ան ու վուխս,  
Զի հանգչում կրակս, թանձր է ծուխս,  
Հանգիստ ապրած ցաւ չտեսած գլուխս  
Անբուժելի ծանր ցաւի մէջ գցեց:

\* \* \*

Հ Ա Ր Բ Ե Յ Ո Ղ Ի Վ Ե Ր Ը Յ

Արդեօք չափից դուրս խնողին, որ հարբեցող են անւանում  
Մի՞թէ էշէ պատկառ չունի, ինք իրանից ամօթ չանում,  
Որը տեսնում ենք ամեն օր նստած խմիչքի դուքանում,  
Մի քանի իրան նման կեղտոտների վատ շրջանում,  
Լակելով զուգում է, ցոյց տալով թէ քեփ եմ անում,  
Խօսալով ափեղցփեղ, սուսն է տամ ուրախանում:

Լաւ իմացէք, հարբեցողը մարդկութեան նշան չունենալ  
Ամեն ապրուստից զրկելով ջէբը դարդակ բան չունենալ,  
Ինչ տեղ լինի նա կը շնթրնի, յայտնի օթեան չունենալ,  
Նայես տուղ դէմք կունենայ, քննես առողջ ջան չունենալ,  
Հագին շապիկ, փոխան, գլխարկ, գօտի ստնաման չունենալ,  
Իրփ խմիչքի տւած կլնի, ինքը կանգնած մերկ մեղաւնում:

Հարբեցողը իր թշնամուն, իրան բարեկամ կիմանայ  
Աշխարհքի խելօքներին կեանքի մէջին խամ կիմանայ,  
Փիփերթը քաղցը մեղրից, խիտ անուշահամ կիմանայ,  
Տակառին բաժակ կասի, խոր կարասին ջամ կիմանայ,  
Հարամ կուտի հալալի տեղ, հալալին հարամ կիմանայ,  
Թէ կերածից, թէ խմածից, էլ նա ոչինչ չի հասկանում:

Որ տեղ հարբեցողին տեսնես, նրանից շատ հեռու փախի  
Ոչ նա մարդից ամօթ կանի, ոչ Աստուածանից կը վախի,  
Ինքը իրան շատ կը խօսայ, նման ջաղացի շանչախի,  
Կեղտոտ շարժումներով իրան պիղծ մեղքերի կը թաթախի,  
Մարմինը անշոր կը թողնի, հոգին սատանի կը ծախի,  
Ետ ու առաջ պատիժ կառնի, երկու կեանքի դատատանում:

Թէ լաւ նայէք հարբեցողին, գոյնը միշտ թուած կլինի  
Աչքերին տակը փքւած, թուշերը ուռած կլինի,  
Լեխերը հաստ հաստացած, ծայրերը ծռած կլինի,  
Կեանքի ծովից կենդանութեան առուն պատառած կլինի,  
Վայելչութեան տար վատտակից, սիրտ միշտ սառած կլինի,  
Զի հոգալ տան ապրուստի, ծայլ կլինի ամեն բանում:

Հարբեցողին խրատելով, չի փոխիլ իր ընութիւնը  
Քնատեղից դարթնի թէ չէ, միտը կընկնի գինատունը,  
Այնպէս կերթայ գէպի դուքան, ինչպէս մսին սոված շունը,  
Հարբեցողից տանն անգամ լաւ է գոմի անասունը:

Անասունը ճանաչում է իրա գիշերելու տունը,  
Իր ախոռի տակին համեստ նստում է և հանգստանում:

Էհզար, հաստի գին չեն տարու, թէ կուզու շատ բարակ մանես  
Բաւական է երկար խօսես, հարբեցողի զահլէն տանես,  
Գու խօսալով խրատելով գիժւածին ինչ պէտք է անես,  
Զի զգողին միկնոյն է, հազար վատը յանդիմանես,  
Արմատացած բնութիւնը մնց ես կարող մարդից հանես,  
Մինչև որ չ'պատանես, տանես դնես գերեզմանում:

\*  
\*\*

ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆՈՒ ՄԷՀԻՆՆ ԱՌԹԻՒ

Ան հագիր, Մասիս, սև լուր ստացիր  
Սրտամաշ հոգոցով ան քաշիր լացիր,  
Սյսօր մենք կարդեցինք մի նոր լրագիր  
Տեղից շարժեցրուց քո բոլոր երկիր,  
Անն չար թիւ ու չար ամիս չար գուշակ,  
Գրւած է վախճանեց քո որդի «Մշակ»  
Այն «Մշակն» է Արժրունեան Գրիգոր,  
Որի մտքից ազգի ցոլում էր նոր նոր:

Գնաց հարազատդ, աննման որդիդ,  
Որը ինչպէս կասեն մի սիւն էր սրտիդ,  
Արդեօք զգում ես որ տունդ քանդու է,  
Զուրդ կրակների հնազանդու է,  
Այժմ դու նոր նոր ցաւդ զգալով,  
Նախչից ծուած ազգիդ կեանքին վայ տալով,  
Կիմանաս որ նա ինչպիսի ժառանգ էր,  
Բայց հազուադիւտ, նրա գինը շատ թանկ էր:  
Նա էր մի այնպիսի մագնիտի Յեսան,

Որ շատ բութ մտքերի, սրեց և տեսան,  
Նա էր տգիտութեան ամպը հալածող,  
Գիտութեան լոյսը մեր մէջ տարածող,  
Նա էր անդամանդեայ լուսապայծառ ջահ,  
Մտաւոր զարգացմամբ տուող ազգին շահ,  
Նա էր որ քսան հինգ կլորակ տարիք,  
Մատուցուց իր ազգին զանազան բարիք,  
Նա էր որ փոխեց մտաց դրութիւն,  
Մեռած պաղ սրտերի տալով յարութիւն,  
Նա էր այն մաճկալը որ խոփը սրեց,  
Գութանական գործիքները վերցրեց,  
Սկսեց քարքարուտ տեղերը վարել,  
Ցանկել, ջրել, բուսացնել զարգարել,  
Հասացնել, հնձել, պտուղը քաղել,  
Շատ թշնամեաց գլուխները ցած թողել:  
Երբ նա իրան անւանեց ազգի «Մշակ»,  
Մեր ազգը ստացաւ մի քաղցր ճաշակ,  
Ազգի մշակ զարձաւ հաւատարմաբար,  
Տալով ժողովրդին մի նոր պողպատ,  
Նա էր այն ծանրանիստ ահազին վէմը,  
Որ շատ քարահատներ կանգնեցին դէմը,  
Շատ մուրճերով կռաններով խփեցին,  
Բայց իմ խելքով իրանք իրանց չափեցին,  
Այն մուրճերի զարկը նրան չ'թւաց,  
Մինչև վերջը իր տեղը հաստատ մնաց,  
Մահը թէև շատ բաղձանքներ թողեց վիշտ,  
Սերմած պտուղները անմահ կը մնան միշտ,  
Ո՛հ փշօք եմ ծակւում, խղճիւ եմ փակւում,  
Չճարիտն ասած չեմ համարձակւում,  
Որ ես նրան ասեմ մահկանացու մարդ,  
Քանի որ նա էր մի ազգային զարդ:



Այժմից յաւիտեան կայ և անմահ կայ,  
 Ոչ անցեալ ապառնի այլ և միշտ ներկայ,  
 Միայն թէ մեր ազգից յիսունից մինը,  
 Ձիմացաւ նրա յարգանքն ու դինը,  
 Բայց շատ լաւ կլինէր որ իմանային,  
 Թէ ինչ էր ուզում ցոյց տալ իր հային,  
 «Անցեալն էանց» անցաւ ու գնաց,  
 «Յիշատակն արգարոց օրհնութեամբ» մնաց,  
 Էհզարիս հետ յիշեն Աստուած ողորմեան,  
 Ժառանգ է լոյս հոգով դասն աջակողմեան:

\* \*

*Գոռնի չէ բողոքողին Բագասյ իրան տնդն հողը,  
 Գոռնի է իրա մեջի գործերով շարժող փողը:*

Նայեցէք, ով սիրելիք տեսէք, թէ ինչեր են խաղում  
 Սև, սպիտակ նաւթի վրայ, Բազու ինչ փառքեր են խաղում,  
 Ինչ տեսակ վայելչութիւնք, երջանկութիւններ են խաղում,  
 Ինչքան հօր հարստութիւնք, շարժելով գեր են խաղում,  
 Ինչ տեսակ գիտութիւններ, ինչ տեսակ խելքեր են խաղում,  
 Ինչ տեսակ մեքենաներ, ինչ տեսակ գործեր են խաղում,  
 Նաւթային առևտուրում քանի միլիոններ են խաղում:

Նաւթը դուրս գալով աշխարհի ամենահարկաւոր դարձաւ  
 Բոլոր լուսատու իւղերից, ինքը շատ լուսաւոր դարձաւ,  
 Իրան պոչէն բռնող մարդը վերջը մեծ ունեւոր դարձաւ,  
 Ով ունէր հարիւր մանէթ, նա հազարաւոր դարձաւ,  
 Ով ունէր հազար մանէթ, հարիւր հազարաւոր դարձաւ,  
 Ով ունէր տասն հազար, նա էլ միլիոնաւոր դարձաւ,  
 Նաւթի մէջ հեղեղի պէս աշխատանքներ են խաղում:

Ո՞րքան խեղճ ու աղբատ մարդիկ նաւթով մեծ փառքի տէր եղան,  
 Մինչև անգամ փառաց փառքից էլ բարձր գեր ՚ի վեր եղան,  
 Բազումք ազգի բարի կողմին սիրտ կապելով ընկեր եղան,  
 Ընկերութիւնը կազմելով, անունով «մարդասէր» եղան,  
 Մարդասէր ընկերութեամբ ազգի կարիքի խեր եղան,  
 «Աղբատանոցն» շինելով, աղբատաց ինչպէս Հերեզան,  
 Ողորմածութեան առիթիւ շատ լարւած սրտեր են խաղում:»

Նաւթը երբ որ դուրս եկաւ, Բագւայ մօտիկ Բալխանի  
 Խելօքները միտք գցեցին, նաւթի աշխատութեան բանի,  
 Թանկ հողերը համարեան թէ, թուրքերից առան էժանի,  
 Էժան առած այն հողերը, հասաւ շատ թանկ աստիճանի,  
 Սիրիւր Բագւան սև նաւթովը եղաւ հարուստ և անւանի,  
 Այն ո՞ր քաղաք շրջութեամբ այժմ Բագւին կը նմանի,  
 Որի մէջ փառքերով լի հոյակապ տներ են խաղում:

Նաւթը շատ վախտ հրդեհներով աղաներին աճ է տալիս  
 Եւ երբեմն պատահում է, մշակներին մահ է տալիս,  
 Բայց երբեմն մեռածներին, մէկէլ կեանքի պահ է տալիս,  
 Փողը պրծած աղաներին, թագաւորի պահ է տալիս,  
 Յանկարծ հորը նաւթ խփելով, բախտին մի փառ ջահ է տալիս,  
 Յաջողութեամբ դուրս վիժելով, հազարներով շահ է տալիս,  
 Գէ արի տես նրա վերայ, ինչ տեսակ գովքեր են խաղում:

Ինչ մարդ որ իրա հորի, նաւթի սել խփումն տեսաւ  
 Լաւ իմացէք, բախտը նրա գրութիւնը ոսկով հիւսաւ,  
 Տեսնում ես հինգ օրումք, հարստների ետնէն հասաւ,  
 Նաւթի ուժով ջոկ գործերի շարունակելն սկսաւ,  
 Գործը այնպէս շուտ կանգնում է, ասես թէ գետնիցը բուսաւ,  
 Առարկայի մէջ լուծ ես, հարիւր հազարներից խօսաւ,  
 Նաւթերով առիւծների բերանով խօսքեր են խաղում:

Նաւթը փողի աղբիւր եղած, շատ գործերի մակարդ գառաւ  
 Համարեան թէ ուժ առնելով ծերը երիտասարդ գառաւ,  
 Միրգ ու մանրուք ծախողը, տեսանք պատուելի մարդ գառաւ,  
 Բաշմագչին կաշւի հոտում նստած փոխւեց ու վարդ գառաւ,  
 Համբալը բարգաւաճեց, միլիոնչի անւամբ դարդ գառաւ,  
 Կանաչի կծու ծախողը հարստացաւ հպարտ գառաւ,  
 Գիւփ յայտնի հարստութեամբ, այսօր վերի վեր են խաղում:

Խելօք մարդը թեթի փորձով, իր օգուտ շուտ հասկացաւ,  
 Սև նաւթից սպիտակ նաւթ, իւր հանելու ձևն իմացաւ,  
 Սկզբում թանգ ծախելով, այն գաւօտչին իրան լցաւ,  
 Երբոր իրա բեռն բռնեց, փափուկ կերպով հարստացաւ,  
 Նաւթի հորեր քանդել տաւ, և ահագին գաւօտ բացաւ,  
 Հարստութեան աստիճանում նա առաջին տեղն ունեցաւ,  
 Կլուբի մէջ նրա վերա գանազան մտքեր են խաղում:

Նաւթի վերա գործ են ամուռ, գանազան տեսակ իրեղէն,  
 Ինչքան ինչքան երկաթեղէն, պողպատեղէն պղնձեղէն,  
 Ինչքան ինչքան արծաթեղէն, ոսկեղէն ու վարչաբեղէն,  
 Ինչքան երկաթի թերթեղէն, խողովակներ ու լարեղէն,  
 Ինչքան ինչքան կանէփ թոկեր, աղիւս ու կիր ու քարեղէն,  
 Ծուշեղէն, ճրագեղէն, տախտակեղէն ու փայտեղէն,  
 Միայն նաւթի բղխման վերա տես որքան նիւթեր են խաղում:

Էհգարն եմ, գովասանքս գրում եմ աչօք տեսնալով,  
 Նաւթի անհուն աշխատանքին բերմունքներին զարմանալով,  
 Ձեմ կարող նաւթի գովքը տեղ հասցնել շատ խօսալով,  
 Նրա փառաւոր գործերին քսանից մէկը ցոյց տալով,  
 Տէրութիւնը սև ու սպիտակ նաւթերից շահ ստանալով,  
 Յամաքի ու ջրի ճամփով, հետը սերտ կապ ունենալով,  
 Յամաքում երկաթուղիք, ծովերում նաւեր են խաղում:

### Ս Ի Ր Ո Յ

Կեանքի մէջ, սիրական, քեզնից սիրելի  
 Լաւ իմացիր էլ մի ուրիշ բան չունենմ,  
 Հոգիս տամ դեռ քիչ է քեզ նւիրելի  
 Ստեղծողից տալու հրաման չունենմ:

Շապիկդ մանուշակ, օձիքն է վարդից  
 Ես ինչպէս հեռանամ քեզ նման զարդից,  
 Հոգիս պահանջում ինձ պէս խեղճ մարդից  
 Առ ուզածիդ բնդդէմ պատասխան չունենմ:

Սուրբ սէրը ճանաչենք մենք հեղհեղ  
 Սէրից բաժանուողը, շատ մեծ տղէտ է,  
 Մինչև մահս սրտիս սէրը քեզ հետ է,  
 Ուրիշի հետ ինձ սիրոյ պայման չունենմ:

Հօրս, մօրս, եղբայրներիս, քոյրերիս,  
 Ձեմ անիլ քեզ նման մասնակից սէրիս,  
 Փորձել եմ և բոլոր բարեկամներիս,  
 Մի քեզ նման կեանքի օգնական չունենմ:

Ես Էհգարն եմ, քեզ եմ կարծում իմ տունս  
 Գու ես օրս կեանքս, ու սրտի սիւնս,  
 Քեզանից եմ առնում կենդանութիւնս  
 Առանց քեզ ապրելու մի վայրկեան չունենմ:

\*\*\*

### Տ Ն Ա Յ Ի Ն Ս Է Ր Ը

Ինչ տան մէջի դեր չխաղէ սուրբ սէրը  
 Էլ այն տունը կեանք չի տեսնալ փառաւոր  
 Բայց տեսնում ենք որ,

Սէր միութեամբ կապ ունեցող տները  
Վայելում են խաղաղ վիճակ հանդիստ օր,  
Իրանք են հօօր  
Ծաղկում են նոր նոր:

Սէրն է ամեն բանի հաստատութիւնը,  
Սէրն է տանը գերանը պահող սիւնը,  
Շուտ կը քանդուի անսէր և անհաշտ տունը,  
Պարտաւոր եմ սիրեմ ես իմ մեծ եղբոր,  
Ժառանգ ենք մի հօր  
Մի հարազատ մօր:

Սէրը տանը փառքով անուն կը հիմնէ  
Սէրը տանը կենդանութիւն կը հիմնէ,  
Անսէրութեամբ ինչ գործ չի նւի անհիմն է  
Սէրն է ամեն բանը պահող հիմնաւոր,  
Անող զօրաւոր  
Տուն մեր անսովոր:

Մենք տեղեակ չենք մեր սրտերի սէրիցը,  
Բամբաստում ենք, հէնց ճակատագրիցը,  
Խոցոտուել ենք անսէրութեան սրիցը,  
Մնացել ենք արնաշախաղ վիրաւոր,  
Ում գիմենք թէ որ  
Մենք ենք մեղաւոր:

Էհգար, շատ վարար է առաջինդ գետը,  
Սրի մեծիդ լսիր, մի գնալ գէտը,  
Զգուշացիր որ մի օր կեանքիդ հետը  
Կուելու է այդ սէրը աղեղնաւոր,  
Քեզ կըզցէ հօր  
Հազար զաղից խոր:

ՋԱԳԱՅՊԱՆ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԻՐԱՆՔՐԻՈՒՄ Է ԱՅՐԻ ԿԻՆ ԹԱՄԱՄԻ ՎԵՐՔԵ  
ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ասում է

Թամամ, ջանս մատաղ ջանիդ, գլխովը շուռ տամ խիղանիդ,  
Ահա քեզ մի բան եմ տալիս, համարեան նշան եմ տալիս,  
Տանից գրնից ձեռք եմ քաշել, մի լաւ կնկան ման եմ գալիս,  
Պարզ խօսքն է, քեզ ասում եմ, ոչ թէ թագուն բամբասում եմ,  
Ե՛կ ինձ սիրի, ես քեզ առնեմ, սէրս սէրիդ հետը խառնեմ:

Թ Ա Մ Ա Մ Ը

Գլխում ես ինչ կայ, Յարութիւն, պարզ խօսքն է արդարութիւն  
Դէ որ ինձ է ընկել բանըդ, գնա հանգիստ նստի տանըդ,  
Դու մեծ մարդ ես, ես ջահել հարս, ման եկ ճարի քու պատկանդ,  
Դառնաս երկրի Լալազարը, թէկուզ Մելիք Շահնազարը,  
Քեզ սիրելու կամք չունեմ ինձ, քեզ վերա խնամք չունեմ ինձ:

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Վատ մի խօսալ, ես կը մեռնեմ, սիրտս ցաւերով կը բեռնեմ  
Բամբասանքից խուլացել եմ, բան չեմ գնում ծոյլացել եմ,  
Զեմ իմանում սա ինչ գարտ է, ես քեզ վերա պելացել եմ,  
Դժար է բանը սիրածի, քարը գողիցդ վերածի,  
Ե կ ինձ սիրի ես քեզ առնեմ, սէրս սէրիդ հետը խառնեմ:

Թ Ա Մ Ա Մ Ը

Այ մարդ, խեղճ ես, խցնատէր ես, լաւ կ'լինի որ համբերես  
Ում երեսի խալ չի լինիլ, նրան խօսքը տալ չի լինիլ,  
Մուռ սարը տեղից շարժել, ինձանից քեզ գալ չի լինիլ,  
Աղջիկ ունեմ մարդի տալի, խօսքը չունեմ շարժի տալի,  
Քեզ սիրելու կամք չունեմ ինձ, քեզ վերա խնամք չունեմ ինձ:

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Զրնշալիս ջաղաց ունեմ, փափուկ ապրուստ բոլ հաց ունեմ,  
Միշտ ապրում եմ փնջում չայում, ինչու չես ինձ քաղցր նայում,  
Ես կը հագնեմ թափմայ չուխայ, քեզ կը պահեմ մով դարայում,  
Խօսքս մօտդ շարթի կտամ, աղջիկդ էլ մարդի կտամ,  
Եկ ինձ սիրի ես քեզ առնեմ, սէրս սէրիդ խառնեմ:

Թ Ա Մ Ա Մ Ը

Իմ աչքս չէ մուլքի փողի, աչք եմ ածում ջահել տղի,  
Թէկուզ մէրս ինձ սպանի, դահլէս մեծ մարդից կ'տանի,  
Ջիվան ջան չեմ պահել, գնամ մի թօղտուած ջաղացպանի,  
Վեր կաց կորի այս տանիցս, ինչ ես ուզում իմ ջանիցս  
Քեզ սիրելու կամք չունեմ ինձ, քեզ վերա խնամք չունեմ ինձ:

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Գնալու ես դու մի մարդի, չես պատահիլ ինձպէս վարդի  
Բանը ուրիշ ձե մի անիլ, եկ ինձ խելքից խե մի անիլ,  
Չարախօս կանանց լսելով, լոյս օրերդ սե մի անիլ,  
Զուր տեղը ինձ մի չարչարիլ, ինձանից լաւ մարդ չես ճարիլ,  
Եկ ինձ սիրի ես քեզ առնեմ, սէրս սէրիդ հետը խառնեմ:

Թ Ա Մ Ա Մ Ը

Վարդ լինելդ ես կընդունեմ, բայց քեզ գալի միտքը չունեմ,  
Գէշը խելքից քալ չ'սլիտի սիրունը անխաղ չ'սլիտի,  
Իմ սրտի ուզած մարդի բուսնող մաղը չալ չ'սլիտի,  
Յիսուն տարիդ թամամել ա, կեանքիդ վարդը թառամել ա,  
Քեզ սիրելու կամք չունիմ ինձ, քեց վերա խնամք չունեմ ինձ:

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Գեռ երեսուն տարեկան եմ, սրտիդ սէրին սիրական եմ  
Ս.առնց ի քեզ օրս օր չէ, քեզ սիրելն հին է նոր չէ,  
Քեզ չի առնելուցը յետոյ աշխարհը ինձ հարկաւոր չէ,  
Ինձ չի նեկ ես քու տնազդ, էլի ես կը քաշեմ նազդ,  
Եկ ինձ սիրի ես քեզ առնեմ, սէրս սէրիդ հետը խառնեմ:

Թ Ա Մ Ա Մ Ը

Սէրը գօռով միանալ չի, անսէր բանը գոյանալ չի  
Ս.մեն գարուն վարդ չ'աշխատիլ, ամեն գլուխ մարդ չ'աշխատիլ,  
Բաւական ա Ս.ստուած սիրես, գնա գլխիցս ըռատիլ,  
Գլուխս քիչ ցաւացրու, դեզ ունես քեզ լաւացրու,  
Քեզ սիրելու կամք չունիմ ինձ, քեզ վերայ խնամք չունեմ ինձ:

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Վատիւն ասան ազրդ ճար ա, մսխալը շինեց հինգ փարայ  
Վատերիցը հազ ես անում, լաւերին տնազ ես անում,  
Ես գէպի քեզ մօտանալիս, դու ինձ վերա նազ ես անում,  
Խօսքը լսիր դու Եհզարին, արա սրտիս ուզած բարին,  
Եկ ինձ սիրի ես քեզ առնեմ, սիրտս սրտիդ հետը խառնեմ:

Թ Ա Մ Ա Մ Ը

Չանդ մի չոր փետ է դառել, խելքդ գլխից ետ է դառել  
Որ տեղ լինի խելքը կորած, նա չի տեսնիլ լուսին նորած,  
Իշտահ պահեմ, ես ինչ ուտեմ, էփած մզուկ չար սխտորամ,  
Խօսում եմ Եհզարի խօսքով, եթէ ինձ դարգարես ոսկով,  
Քեզ սիրելու կամք չունիմ ինձ, քեզ վերա խնամք չունեմ ինձ:

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Թամամ, տեսնեմ ոչ գորանաս, անիծում եմ որ չորանաս  
Եթէ մի ջոկ մարդ գնաս, տարիներով տեսնես վնաս,  
Դու էլ ինձ պէս քու սիրածիդ ասը քաշես կարօտ մնաս,  
Քեզ կանխեմ մինչև մահս, առուիդ վերա կտորեց բահս,  
Ել չի եկիր որ քեզ առնեմ, սէրս սէրիդ հետը խառնեմ:

\*  
\*\*

ԲԱՆՏԻ ՎԵՐԱՅ

Բանտ, գործերդ պէտք է պարզ արտասանեմ  
Ձեռք չես ընկնում բռնեմ դատաստան անեմ,  
Ծուռ գործերդ երեսիդ յանդիմանեմ,  
Ասեմ միթէ այս օրին արժան եմ,  
Թէ և հոգի ունեմ, մարդ եմ իտան եմ,  
Որքան միտք եմ անում մի ոչինչ բան եմ,  
Գրութիւնով մի տես ինչի նման եմ:

Մէկի վերա ոսկի արծաթ ես ցողում  
Որը գիշեր ցերեկ նստած է փողում,  
Մէկին բոլորովին քաղցած ես թողում,  
Մահացնում, տանում գնում սև հողում,  
Մէկը ձմեռ ծաղկազարդ տաք օթազում,  
Մէկը յուլիս ամսում ցրտից է դողում,  
Անարգար արարքիդ ինչպէս հաւանեմ:

Մէկը մէկի հետն է լեզուով դօստանում  
Հանգիստ նստում լաւ ոտճիկ ստանում,  
Մէկն էլ իր մեծին է ծածուկ դաստ անում,  
Գողանալով հիմնաւորում հաստանում,

Մէկն էլ չեմ իմանում ինչպէս փաստանում,  
Մի այլ կնոջ վոդով է հարստանում,  
Ո՞նց չի բախտին մի քօռ տնտես անւանեմ:

Բախտի գործը տեսած ես եմ ամաչում  
Վիզս ծռում, կռներս սրտիս խաշում,  
Այն որ միշտ օրհնում է «ջան բախտ» ազաչում,  
Նրան վարուցանիսը լաւ չի կանաչում,  
Իսկ որին տալիս է էլ չի ճանաչում,  
Նրան ամեն բանն է բնում ու աճում,  
Քանի այսպէս գործեր աշխարայ հանեմ:

Ի՞նչպէս չի ես իմ բախտիցս բամբասեմ,  
Հրէս երեսուն չորս տարիքի հաս եմ,  
Քաղցր կեանքից ուրախ օրերից պաս եմ,  
Ուզում խորհուրդս ուրիշի չասեմ,  
Վախենում եմ դարտ անեմ ինձ վնասեմ,  
Որովհետեւ ամեն բանով պակաս եմ,  
Աշխարհի մէջ էս նամուրը մնց տանեմ:

Խղճալի Եհզարն եմ, ձեռքումս թակը  
Շատ եմ թակում բախտի դռան տախտակը,  
Բայց չի լսում խղճալոյս աղաղակը,  
Փոխանակ լսելի ընդհակառակը,  
Ետեիցը պնդացնում է փակը,  
Միթէ այս է բախտ իմ բաժին վիճակը,  
Քու տւած բաժինդ գլխիդ սև անեմ:

\*  
\*\*

ՆՐԳ Ի ՎԵՐՆՅ ԱՍՏՈՒԸԾԵՄՕՐ

Ծաղիկ անմահութեան Աստուածամայր Կոյս,  
Քեզնից ծագեց փրկութեան ջանք մեզ համար,

Առար հրեշտակից Սրբոյ Հոգոյ Լոյս  
Լոյսն էր հեռաւոր Յոյս բաղձանք մեզ համար:

Քոյացաւ քեզանում Լոյսն անեղ էից  
Որ էր հաստատապէս Արքան Հրէից,  
Նա էր գուշակումն Սուրբ Մարգարէից  
Որը ծնար կենաց բերկրանք մեզ համար:

Բանասրկուն զի ինքը էր արքան չարի,  
Կնքել տւեց Աղամայ հինգ մտոր քարի,  
Խարեց հոգիքն առաւ վեց հազար տարի  
Մինչև որդիդ չեղաւ փրկանք մեզ համար:

Ծնար Աստուածային կենարար Զէնքը,  
Քանդեց անիծեալ հրահնոց շէնքը,  
Լցրեց Մովսիսական թերի օրէնքը,  
Կրկին կազմեց սուրբ պատւիրանք մեզ համար:

Նախահօր տունն էր տարտարոսեայ բանտ  
Տանջում կրակում, նա մեղօք հիւանդ,  
Հոգին սուրբ Եակը մտաւ քո արգանդ  
Ծնար օծեալ Փրկիչ նոր կեանք մեզ համար:

Ցաւն Աղամայ որդիդ առաւ սուրբ սէրով,  
Խաչւեցաւ թաղւեցաւ բազում վշտերով,  
Ազատեց Աղամին իր սերունդներով,  
Կրեց անտանելի տանջանք մեզ համար:

Զգեց Սաթայէլին հրոյն անդունդը  
Երգեց երանութիւն փառք սրբոյ գունդը,  
Ստեղծմանէն մինչև որդուդ ծնունդը  
Խաւար վիճակ մենք ունեցանք մեզ համար:

Տուր, Սրբուհի, խեղճ Եհզարին սուրբ սէրից,  
Զը հեռանայ Յիսուսի լոյս պատկերից,  
Մեզ ազատիր ամեն տեսակ մեղքերից  
Որ չգործենք հոգու յանցանք մեզ համար:

\*  
\*\*

ԲԵՅԱԹԻՆԵՐ ՀԱՅԵՐԷՆ ԶԱՆԱԶԱՆ ՄՏՔԵՐՈՎ ԱՍԻՆԸ

Եհզար, մարդ ես խօ՞ տուն ես, ձեռքեր գլուխ ոտ ունես,  
Թող կայ քննեն խօսքերդ, տեսնեն համ ու հոտ ունես:

Եհզար, այսօր մեռնող կայ, կեանքից մահը թճնող կայ,  
Փախնելով չի ազատւիլ, հրամայող բռնող կայ:

Եհզար, սրտումդ դարտ կայ, ո՞ր քօլի անփուշ վարդ կայ,  
Ինչ որ գործում ես թաղուն, նրան տեսնող մի մարդ կայ:

Եհզար, դու ազգով հայ ես. և էլ քրիստոնեայ ես,  
Ինչ աչքով քեզ, նոյն աչքով պէտք է ընկերիդ նայես:

Եհզար, վատին յուսալ մի, մեռնի էլ ափսոսալ մի,  
Հարբեցողից հեռու կայ, գող մարդի հետ խօսալ մի:

Եհզար, խօսքս լաւ լսես, լաւ խրատը բաւ լսես,  
Ոչ խուլ մարդին բարե տուր, ոչ նա խօսէ ցաւ լսես:

Եհզար, ման եկ բարութեան, ազբիւրն է արդարութեան,  
Խմիչքները պատճառ են ամեն տեսակ չարութեան:

Եհզար, չեն տամ քեզ բարով, ուզում են խրփեն քարով,  
Ի՞նչ բարուն փէշը բռնիր, չարը կործանւի չարով:

Ս Է Ր Ի Զ Գ Ը Յ Մ Ո Ւ Ն Ք

Գիտես ինչ կայ, ով սիրելի Մարգարիտ  
 Արդէն լրանում է տասն վեց տարիդ,  
 Եթէ ինձ սիրում սրտանց ճշմարիտ,  
 Հանիր մատանիքդ նշան տուր եարիդ,  
 Առ հայելին մի լաւ նայիր նկարիդ,  
 Սիրելին ես ստեղծող բարերարիդ:  
 Մահը դիպչէ քեզ չկամեցող չարիդ,  
 Ես ՚ի սրտանց ցանկացող եմ քու բարիդ:

Զգացմունքդ քաղցր սէրով քեզ լցաւ,  
 Սէր բառիցը սիրտդ մի բան հասկացաւ,  
 Այս աշխարհի սիրոյ կեանքը իմացաւ,  
 Ով իմացաւ նա փափազից լիացաւ,  
 Բուրաստանդ գոյնը փառաւոր բացաւ,  
 Տասն չորսում մանկութիւնդ անցկացաւ,  
 Տասնուհինգում ծաղիկդ հոտ ստացաւ,  
 Տասն վեցում բացւեց վարդը նուբարիդ:

Անմեղութեան քնից արթնացար արդէն  
 Մտքիդ ծածուկ փակ դուռն բացար արդէն,  
 Հասար կամքի, կարծիք ստացար արդէն,  
 Սէրի ճաշակին ծանօթացար արդէն,  
 Հեռը հաստատ բարեկամացար արդէն,  
 Մանկական արարքը մոռացար արդէն,  
 Օրը կեանքը փառքը հասկացար արդէն,  
 Ասածներս պէտք է ազդէ հանճարիդ:

Գիտես արդեօր սէրը ինչ ազնիւ բան է,  
 Կամ թէ սէրի սուրբ պատիւը որքան է,  
 Սէրը հոգոյ մարմնոյ, վկայական է,  
 Երկու կեանքում, անմահութեան նշան է,  
 Սէրը մարդի դրախտի ժառանգ կանէ,  
 Սէրը մարդի դժուրքի մէջ կը տանէ,  
 Սէրը վախճան շունի, առանց վախճան է,  
 Եթէ ուղիղ պահես լուծը նժարիդ:

Մոլորւած եմ ջուխտ աչքերով արնոտս  
 Իրիկուն առաւօտ խնդրեմ գաս մօտս,  
 Խօսեմ հետդ, առնեմ փոքր ինչ կարօտս,  
 Ուզում է վերջանայ ողջութեան հոտս,  
 Բայց քու սիրով դեռ չհանգել մօրմօտս,  
 Բօյլիդ շւարովը ես խեղճ դարտոտս,  
 Այնքան պար եմ եկել, կտորել է ոտս,  
 Խնամք արա փոքր ինչ սիրահարիդ:

Ես քսան եմ, դու տասն վեց տարեկան  
 Ինձ արել ես քաղցր սէրիդ պարտական,  
 Դու սիրոյ վարդ, ես վարդասէր բնական,  
 Աչք ու ունքիդ ով մատաղ է ամսեկան,  
 Բայց թէ լի՛նես կարօտողիս սիրական,  
 Ու ինձ սիրես հաստատ սրտով մշտական,  
 Գլուխ մատաղ կանեմ քու ճանապարհիդ:

Ես էհպարն եմ, ինքս բուն խնձորկեցի  
 Սէրիդ կրակի դէմ ես ինձ մրկեցի,  
 Շատ դէպքերում քու մասին ինձ զրկեցի,  
 Մանկութիւնից ես սէր բառը գրկեցի,  
 Եւ կեղծ սէրը սրտիս մէջէն խրկեցի,

Մարութ բարբղ բարի մտքով երգեցի,  
Արժան տեսայ երգս վրադ սարբեցի,  
Մի յիշատակ աստղանման մարգարիտ:

\*  
\* \*

### Ա Ռ Ա Կ

#### ՆՈՐ ԳՆՐՆԸՆԸ ԷՅԻ Զ՛ՀԸՆԸՆԻԼՆ

Գնաց փետրվարը, զնաց և մարտը  
Թեթևացաւ մի փոքր մարդկանց դարտը,  
Մարտին էլ յաջորդեց սպրիլ ամիսը,  
Ապրիլն էլ պրծաւ, մտաւ մայիսը,  
Փառահեղ մայիսը, ամսոց ընտիրը,  
Որի մէջ յլի է Յոյսի խնդիրը,  
Զուգամ զարդարամ հազար մի տեսակ  
Դրած իր գլխին ծաղկեայ գեղ պսակ.  
Եկաւ այս չքնաղ մայիս թագուհին,  
Նորոգեց համարեան կեանքեր նոր և հին,  
Եկաւ ցնծութեան դռները բացաւ  
Բոլոր շնչաւորաց բաղձանքը լցաւ:  
Նայած երկրի նոր կանաչագարգութեան,  
Մարդ ընկնում է զմայրական զարթութեան,  
Դաշտ գուրս գալիս տես թէ ինչեր ես տեսնում  
Բիւրաւոր կանաչամ բոյսեր ես տեսնում:  
Մէջ արած ու գոխ քշած կռքթնուկը  
Շեպուն ու շիշերթը, տուպն ու կըժղուկը,  
Թարթանջուկը, կերմանձուկը, ճպուկը  
Խըրթուկը, տըտպաշարը, ճոճուկը.  
Կենադոխը կըկուն կըծու խստուփուն  
Որը ունի ճիշտ սխտորի բնութիւն,

Աւերուկը, մտիտեղնը, շուշանը,  
Որ շուշանն է գարնան յայտնի նշանը:  
Սրանց նման ուրիշ շատ և շատ բոյսեր  
Հանդիպողին ընծայում են կեանք ու սէր:  
Դեռ չեմ յիշում գոյն զգոյն ծաղիկները,  
Որոնց վերա մեղունների խմբերը,  
Տղվալով թերթերը քըժքըժում են,  
Թէ հիւթերը թէ նիւթերը ծըծում են,  
Դէ յետոյ ականջ գիր ինչեր կը լսես,  
Ինչ աղմուկներ աղաղակներ կը լսես:  
Հովիւների բայաթիւների կանչը,  
Ոչխարների, տաւարների բառանչը,  
Չաղակատաղ ցուլերի բըզբոցը  
Տաւարածի, հորթարածի ճըզճոցը:  
Թռչունների ներդաշնակ ծրվոցը  
Ուլիկների, գառնուկների կլաւոցը,  
Գետերի ու աղբիւրների բըշքոցը  
Քամիների ու թփերի վըշոցը,  
Լսողներին տանում են կեանքի ծոցը:  
Հարիւրաւոր վար անող գութանները,  
Մշակների հոռովոյի ձայները,  
Խառնած իրար մի ընդհանուր աղաղակ,  
Յոյց են տալիս իբրև գարնան օրինակ.  
Ծաղիկը ծաղկի հետ խօսում է նազով,  
Սոխակները ողջ լսում են մեծ հազով.  
Բռնակեւրով խիտ խոտերը հարւում են,  
Հարողները հոտից մխիթարում են,  
Այսքան սրանչելի արարածներով,  
Բնութեան ձեռքի զարգարածներով  
Շնչաւորքը բոլորը ուրախացան,  
Ա. Աստուած գոհութեան բերաններ բացան:



Անասնոց մէջ միայն էշը չ'պահացաւ,  
 Բոլորի վերան սաստիկ բարկացաւ,  
 Առաց թռչունների երգելն զուր է,  
 Բոլոր ծաղիկների բացելն զուր է  
 Բոլոր տաւարների բառանչը զուր է,  
 Հովիւների բայաթականչը զուր է,  
 Ես պէտք է զրուամ որ վարունանայ,  
 Իմ ձայնիցս ամեն բան սիրունանայ,  
 Բայց ինձ համար ձեր վարունը սիրուն չէ,  
 Չեմ զուացել, իմացէք դեռ վարուն չէ:

«Էհզար»

\*  
\*\*

*Կեղծաւորութեան իռոն ջոռներ՝  
 Երբ անկեղծ եմ, երկիրդ ջոռներ:*

Բերանի սանձ չունի ձգմարտութիւնը,  
 ձգմարտութեամբ ես ամեն բան գրող եմ  
 Եւ պարզ խօսող եմ:

Ձգմարտութիւն է պահանջում մարդութիւնը  
 ձգմարտութեամբ վարչապարի խիող եմ  
 Թոյնս թափող եմ:

Խօսքս քեզ եմ ասում, պատուելի հարուստ,  
 Կերել ես, խմել ես, ձգել ես գրուստ,  
 Իսկ ազգդ աղքատ է, ուզում է ապրուստ  
 Ապրուստը ուտում է, տուր ուսանող եմ,  
 Չէ որ անխող եմ:

Փրւած համբաւիցդ ինչ շահով տղէտ  
 Երբ ազգիդ մէջ չունես մի գործ շահաւէտ,

Երկիր ուսումնարան և բեր վարժապետ  
 Ուսման բեռը դիր շալակիս տանող եմ,  
 Վարող ցանող եմ:

Ասում են կայ հայից փողով միլիօնչի  
 Բայց ինչ օգուտ որ նա սրտով Սիմէօն չի,  
 Աղքատ մարդը թէն հարուստ պարոն չի  
 Անշահ գանձը ինչիս է որ սովող եմ,  
 Կողքից նայող եմ:

Ես էհզարն եմ, կտրւած է իմ սանձս,  
 Բարի կողմում խաղ է անում նախանձս,  
 Շահատու իշխանաց մատաղ իմ անձս  
 Անշահ իշխանների գլխին հողեմ,  
 Այնպէս էլ թողեմ:

\*\*

«ՉԱՐԿԱՅԵՐԻ» ԽԱՂԻ ՀԱՆԿԵՊԸ «ՈՎ ՈՔ ԿԱՄԻ ԻՆՉ ԴԱՆԱԳԵԼ»

Ով կարօտ է իմ գրութեանս, մեծ թշուառականն ես եմ  
 Անթիւ ցաւերի համբերող, տոկուն դիմացկանն ես եմ,  
 Թող «ով կուզէ ինձ ճանաչել» տիրոջ այս անւանն ես եմ  
 Մականունով «Աւուր օլլի» Սարգիս Յովսէփեանն ես եմ,  
 Կոշտաբարբառ ու կոպտախօս, անկիրթ ճարտասանն ես եմ:

Ոչ կատարեալ ինքնաուս եմ, ոչ կրթւած եմ վարժարանում,  
 Բնական շնորհքով եմ վերջ ի վերջոյ երգեր հանում,  
 Ունիմ փոքր ինչ խեղք ու միտքը, որ ինձ դէպի լոյսն է տանում,  
 Թմրութեան թանձր քնից դեռ աչքերս նոր եմ բանում,  
 Այսուհետեւ չեմ մրափիլ, լոյսի հարևանն ես եմ:

Նախ յայտնում եմ հայ եղբորցս օրս կեանքս գրութիւնս  
 Որ աշխարհի կեանքիս հոգսը ճնշում է իմ սէրութիւնս,  
 Չի թողում ծաղկացնեմ, հարստանայ գրութիւնս,  
 Սխալներս ինձ բախշելով, պէտք է ներքն թերութիւնս,  
 Գիտութեանս հափ եմ խօսում, ոչ թէ գիտնականն ես եմ:

Այժմ Բագու ծառայում եմ մեծ Ազամեանց նաւթահանրում,  
 Պաշտօնով ինչ եմ, կաշեգար, որ ծածկում եմ ամօթանքում,  
 Ո՛վ տեսել է նա կիմանայ, եմ մահացու շար տանջանքում,  
 Համարեա թէ ոչ կեանքում եմ և ոչ մի մեծ աշխատանքում,  
 Օրեկան վաթսուճն կոպէկ ստանող վարձկանն ես եմ:

Բարուայ հայոց իշխաններին ձեռքը ոտքը շատեմ լիզել,  
 Մինչ օձիքս արտասուճքով թաց եմ արել յետոյ մզել,  
 Աղաչելով ու խնդրելով ամենքից էլ գործ եմ ուզել,  
 Ո՛ւմն է ազդել աղաչանքս, ո՞վ է իմ ծուռ վիզս դզել,  
 Այժմ Սիմէօն Արզումեանին գիմած ապաստանն ես եմ:

Թող ներեն, բաց եմ ասում, անհամբեր եմ խնայելում,  
 Մեր ազգի Շայիրներին սերմերը դժար են ծլում,  
 Չուն իշխանաց լաւ հայացքին արժանիքը չեն վայելում,  
 Բայց պատրաստ են «օյիւնների», ցիրկերի փող ընծալելում,  
 Պարզ խօսալով չեմ ամաշիլ, ճշմարտութեան տանն ես եմ:

Թէ հայ իշխանաց մօտը դայ մի թունաւոր օձ պարածող  
 Պարացնողը թուրք լինի, ինքը օձից սաստիկ կծող,  
 Այնքան նրան փող կբախշեն, կը շինեն ոսկի արածող  
 Բայց հայ երգիչը խօսալիս կը դառնան գլխին քարածող,  
 Բամբասանքս լաւ ընենցէք, գուցէ անպիտանն ես եմ:

Եթէ ինձ շատ չեմ ասում քիչ կարութիւն ունենամ  
 Այնքան որ ես ինձ ու ինձ հանգիստ ապրել կարողանամ,

Կարող եմ էլ աւելի, լաւ մտքերի դռներ բանամ  
 Պակասութեան աչքը դուրս գայ, չթողում ինձ հանգստանամ,  
 Չարչարանքի ծառայելով գերի խեղճութեանն ես եմ:


Աղգային երգեր շատ ունեմ, թոյլ չի տալիս ժամանակը  
 Որ մամուլի տակ ընկնելով, կատարի իմ նպատակը,  
 Ի՞նչից պէտք է հոտ ստանայ վիզը ծռած մանիշակը  
 Որ երկինքը ամպ պատել է, կորցրել է եղանակը,  
 Ծաղկաբեր գարնան կարօտ թառամ բուրաստանն ես եմ:

Երգչական ոգին թէև ինձանում չհանգստանում  
 Սակայն ապրուստի միջոցով, յաջողութիւն չխոստանում,  
 Մանաւանդ ինձ խեղճիս հետ ժամանակն է թշնամանում  
 Եւ այդ մասին վախենալով, իմ սերմերս ու չեմ ցանում,  
 Թէ կանաչ է բացւած բախտի իմացէք արժանն ես եմ:

Մի ազգասէր իշխան չկայ, որ սրտիս ցաւը հասկանայ  
 Իր Աստուածը միտ գցելով վէրքս բուժել տալ խոստանայ,  
 Հայ երգիչը իր հայ ազգէն ո՞նց է կարող շահ ստանայ  
 Կուչտ հարուստ սոված խեղճին իրան նման կուչտ կիմանայ,  
 Ինչ մարդ նեղութիւն չտեսել, կասի երկրի խանն ես եմ:

Եհզար, անբեօք որ խօսում ես, խօսքիդ գլին դնողն ո՞վ է  
 Քո հարազատ հայ ազգի մէջ, քեզի ընդունողն ո՞վ է,  
 Նպատակիդ քանդւած տունը, վարձք անող շինողն ո՞վ է  
 Գժօխքական տաժան կեանքից քեզ խղճող հանողն ո՞վ է,  
 Ով քեզ կասի հողագործ եմ, դու ասիր տափանն ես եմ:

Վ Ե Ր Զ:



Բ Ա Լ Ա Խ Ա Ն Ո Ւ Յ

	Քանի օրինակ		Քանի օրինակ
Յովսէփ Գ. Սարգիսեանց	1	Մարգարայ Մ. Սարգիսեանց	1
Հայկազ Ա. Շաքարեանց	1	Պօղոս Գալուստեանց զգլարցի	1
Ալէքսան Թարխանեանց խնծորկ.	1	Յովհաննէս Խաչատրեանց շուշ.	1
Միրզաջան Ղազարեանց	1	Բախչի Մարտիրոսեան խնծորկ.	1
Աստուածատուր Մալունցեանց	1	Մանուշար Բաղդակիւլեան	1
Խաչատուր Իսր. Բարսէղեանց	1	Հայրապետ Պողոսեան ավանա- չէնացի	1
Սիմոն Յ. Պետրոսեանց	1	Գրիգոր Յ. Թումանեանց պառա- ւաթումբեցի	1
Ալէքսան Ա. Սարուխանեանց խնծոր.	1	Դաւիթ Համբարձումեան շուշեց.	1
Ծատուր Հ. Յակոբեան	1	Յովհաննէս Կ. Ղարախանեանց Շամախեցի	1
Զիլփիղար Խաչատուրեան	1	Գրիգոր Սարգսեանց	1
Ալէքսանգր Պէտրոսեանց նու- լեցի	1	Իշխան Պողոսեան Աշանցի	1
Աղաջան Մ. Առստամեանց խնծորկ.	1	Իսրայէլ Տէր-Մատթէոսեանց պառաւաթ.	1
Յովհաննէս Մ. Արրահամեանց ճալեթ.	1	Յակոբ Նալբանդեանց շուշեցի	1
Սմբատ Ա. Մեղքումեանց ճալեթ.	1	Մովսէս Կանջալեանց շուշեցի	1
Մկրտիչ Ղազարեանց ճալեթ.	1	Ասկանդար Բալասանեան խնծ.	1
Յովհաննէս Սարուխանեանց	2	Նիկողայ Տէր-Ներսէսեանց բա- զուրեցի	1
Սիմոն Աւետեան	1	Թիւոս Մ. Գրիգորեանց խնծոր.	1
Արշակ Դաւթեանց	1	Գրիգոր Հարաթեանց տեղբցի	1
Միսակ Տէր Ղազարեանց	1	Բուզաղ Անդրէասեանո՞ քարա- հունչեցի	1
Յովհաննէս Աղաջանեանց	1	Գէորգ Տէր-Սարգիսեանց քարահ.	1
Մատթէոս Կարապետեանց	1	Գալուստ Վարդանեանց լրբեցի	1
Դաւիթ Դաւիթեանց	1	Համբարձում Շաքարեանց կօրի- սեցի	1
Մեսրոպ Հ. Յարութիւնեան նորաչէնք.	1	Յովսէփ Աւագեան	1
Գրիգոր Գարրիէլեանց նորաչէնք.	1	Բախչի Հայրապետեան Սեւարան.	1
Սարգիս Սարգսեանց նորաչէնք.	1	Անդրէաս Բէգլարեան քարաչ.	1
Լեւոն Մարտիրոսեանց դաւրէթ.	1	Սէրգէյ Արզումանեան շամախ.	1
Մարգարայ Միքայէլեանց ճալեթ.	1	Վարսափեր Յարութիւն Բարա- եան կողնծոր.	1
Պատուական Տէր Յարութիւն- եանց մալլղեցի	1	Խաչատուր Բալասանեանց կողնծ.	1
Առաքել Յարութիւնեանց ենգիքենդ.	1		

Խաչատուր Յարութիւնեանց	1	Մնացական Սարգիսեան տա- թեացի	1
Գրիգոր Կարապետեան	1	Մովսէս Բարսեղեան բաքուցի	1
Գէորգ Յարութիւնեանց լրբեցի	1	Պողոս Շաքարեանց	1
Սամսոն Ղազարեանց խնծորկ.	1	Գալուստ Բէգլարեան	1
Ալէքսան Առաքելեան խնածախ.	1	Արխատակէս Առստամեանց	2
Առստամ Վ. Փարսիեանց խնծ.	1	Դանիէլ Դաւթեան	4
Շափաղաթ Աթարէղեանց	1	Տիգրան Ստեփանեան	1
Խաչատուր Թունիեան	3	Խաչատուր Խաչիեանց շուշեցի	1
Ասլան Գրիգորեան	1	Հայրապետ Բէգնաղարեանց նուլեցի	1
Աղաջան Աբր. Գասպարեանց	1	Նիկողայ Զարբարեանց	1
Անդրէաս Հայրապետեան տա- թեացի	1	Բագրատ Զալիեանց զանձակ.	1
Վարդազար Արզումանդան խնծ.	1	Լևոն Տէր-Բաղդասարեան շուշ.	1
Բախչի Առստամեան	1	Իսակ Տէր-Սարգիսեանց	1
Հայրապետ Ստեփանեան տա- թեացի	1	Արշակ Մարգարեան	1
Բախչի Սարգիսեան քարաչ.	1	Մովսէս Անանեան	1
Մկրտիչ Բօջարեան Ղալիեանց աշանցի	1	Խոսրով Սարգիսեանց	1
Իշխան Մուսայելեան Ղալիեանց աշանցի	1	Շափաղաթ Հայրապետեան	1
Աւետ Յարութիւնեանց	1	Մեղքում Բաղդասարեան	1
Բախչի Ն. Մանուկեանց	1	Ալէքսան Հայրապետեան	1
Զիլփիղար Յովսէփեանց շէնհեր	1	Աւանէս Ղեւոնդեանց	1
Բախչի Խաչիեան շէնհեր.	1	Միքայէլ Գրիգորեան	1
Յովսէփ Բարխուղարեան խնծ.	1	Նիկողայ Աղիլարեանց	1
Համբարձում Սար. Բուզաղեանց խնծոր.	1	Թաղէոս Հասան Զալարեանց	1
Մատթէոս Տէր-Մարտիրոսեանց զանձակեցի	1	Աւետիս Գրիգորեանց	1
Յարութիւն Աղաջանեան խնծ.	1	Վ. Ժամակոչեանց	1
Կափի Գրիգորեան Մանկասար- եանց	1	Գրիգոր Աղեկեանց	1
Արշակ Խ. Հայրապետեան	1	Անուշաւան Հայրապետեան	1
Օսէփ Յակոբջանեան քարահունջ.	1	Իսահակ Տէր-Անտօնեանց	1
Մկրտիչ Միրզաեան Փիփեցի	1	Առաքել Տէր-Գրիգորեանց	1
Սամուէլ Յակոբեանց ուշտալցի	1	Ասրի Գրիգորեանց	1
Բախչի Իսրայէլեան պառաւաթ	1	Վարդազար Խալափեանց խնծ.	1
Ալէքսան Յ. Մուրատեանց նուլ.	1	Կարապետ Յակոբեանց մէհտիչէն	1
Եսայի Եսայիեանց արաչեցի	1	Խաչանէս Արզումանեանց քեչիս.	1
Սողոմոն Աղաբ. Առստամեանց	1	Բուզաղ Յարիեանց	1
Համբարձում Պետրոսեան կօրվ.	1	Մկրտիչ Մկրտիչեան ագուլեցի	1
Խուրի Խ. Ասկանեանց կալերեցի	1	Գէորգ Աղաջանեան	1
		Հայրապետ Մարտիրոսեան ուր- դուն.	1
		Զաւատ Պարունեանց ուրդուն	1
		Գալուստ Առստամեանց	1
		Իսրայէլ Տէր-Յովհաննէսեան	1

Գէորգ Փանիրեանց 1  
Թէոդորոս Մանկասարեանց քա-  
ջարանցի 1  
Աւետիս Շամխալեանց 1  
Պողոս Մարտիրոսեան 1  
Բաղդասար Մանուչարեան 1  
Իսակ Գ. Գրիգորեանց 1  
Միխայէլ Գ. Սահակեանց 1  
Ջհանգիր Սողոմոնեան շուշեցի 1  
Սողոմոն Բալասանեան խնձորկ. 1  
Սամուէլ Աթաբէկեանց քոլլրանդ. 1  
Մովսէս Մանասեանց 1  
Սարգիս Յակոբեանց զիրքեցի 1  
Աւագ Պետրոսեանց շուքուրչեցի 1  
Էյվազ Հ. Տօնիրեանց զիւզրանցի 1  
Մանուէլ Աթաբէկեանց քարլոյ. 1  
Կարապետ Աւանեսեան նոր շէ-  
նացի 1  
Յարութիւն Սարգիսեանց շէնհ. 1  
Լիօն Միրզահանց խրխանցի 1  
Յակոբ Դանիէլեանց դաշուշէն. 1  
Կոստանդ Բնաթուրեանց 1  
Արսէն Ա. Վարդանեանց 1  
Նիկողայ Տէր-Յակոբեանց տաթև. 1  
Լիօն Զորաբեանց 1  
Յակոբ Սարգիսեան ուշանուշէն. 1  
Իվան Նաջարեանց 1  
Դանիէլ Արզումանեանց խնա-  
ծախ. 1  
Իսրայէլ Տէր Բաղդասարեան շուշ. 1  
Գէորգ Զաքիեանց զանդ. խնած. 1  
Աւագ Մէլիք Ղարաիօղիանց 1  
Իսահակ Ա. Գրիգորեանց 1  
Ոսկան Ղահրամանեանց շուշեցի 1  
Իվան Վարդանեանց շուշեցի 1  
Յարութիւն Թարիփեանց ուշան. 1  
Գրիգոր Մանուչարեան 1  
Խոսրով Նաջաբեանց շուշեցի 1  
Աղաբէկ Ղուկասեան քարաշէն. 1  
Բէնմուղ Արզումանեանց 1  
Թիւոս Գէորգեան խնձորկ. 1  
Միմոն Տէր-Դաւթեան կօրիս. 1  
Միրզաջան Գ. Ասրիանց կոռնձ. 1

Մեսրոպ Գ. Ասրիեանց կոռնձ. 1  
Միրզայ Դիլ. Ղամաթեանց խնձ. 1  
Սարգիս Թունիրեանց 1  
Իսակ Ղարաիօղիանց 1  
Բարայ Առաքելեան խնձորկ. 1  
Յարութիւն Բ. Էյվազեանց 1  
Յարութիւն Մեղքումեան շիկա-  
հողեցի 1  
Մարտիրոս Բ. Թամրազեանց 1  
Յակոբ Ս. Աղամեանց Տէրնա-  
վարձեցի 1  
Նիկողայ Մէլիք Յակոբճանեանց  
խնձորկեցի 1  
Սարգիս Մակրատումեան շուշեցի 1  
Յարութիւն Հ. Միրզահանց 1  
Նիկողայ Ար. Բարսեղեանց զանդ.  
խնածախ. 1  
Մեսրոպ Օլչիեանց 1  
Պողոս Տարէկանեանց 1  
Աթանէս Աղարաբեանց Խաչնու-  
Առաջանոր 1  
Ջումշուղ Ջումշուղեանց 1  
Արշակ Յովհաննէսեանց 1  
Մկրտիչ Ղարաիօղիանց խնձ. 1  
Արել ուստայ Բաղամեան խնձ. 1  
Մովսէս Սարգսեան 1  
Բալասան Մատուրեան Բնունի-  
սեցի 1  
Ռուստամ Տէր-Վահանեանց  
կարճեանցի 1  
Բալասան Թումանեանց ճրկրտ. 1  
Մկրտիչ Ասրիեանց Գալբանդ. 1  
Հայրապետ Ղազարիեանց ուր-  
դնչ. 1  
Ղևոն Անախանեանց Ազարագ. 1  
Նիկողայ Գրիգորեանց հացեցի 1  
Լալազար Աղախանեանց ազա-  
րագ. 1  
Ավանէս Մարգարեանց ազար. 1  
Մարտիրոս Տէր-Մինասեանց. 1  
Միրզայ Ղազարիանց. 1  
Աղաբէկ մէլիք Գարամեանց Տանձ-  
թափեցի. 1

Արշակ բէկ Մէլիք Գարամեանց  
Տանձաթափեցի. 1  
Աղէքսանդր Մէլիք Կարախան-  
եանց Խժաբերդ. 1  
Սարուխան Բաղդասարեանց Բե-  
խցի. 1  
Դաւիթ Դաւիթեանց Բեխցի. 1  
Սիմէօն Գրիգորեանց. 1  
Աղաջան Գրիգորեանց Խնձոր. 1  
Գրիգոր Հայրապետեան. 1  
Սարգիս Աղաջանեան. 1  
Ասլան Բուրչիեանց. 1  
Արմենակ Նեօբեանց 1  
Աւագ Յարութիւնեան. 1  
Իվան Միրզաբէկեանց. 1  
Սողոմոն Գատաեանց. 1  
Միկիտ Լալաեանց. 1  
Մանաս Աղաջանեան. խնձոր. 1  
Օսէփ Իւզդաշիեանց խնձոր. 1  
Աւագ Պետրոսեանց 1  
Յարութիւն Յովս. Ղազարեանց 1  
Մանասան Շահկարտիեան 1  
Վարդազար Յարութիւնեան 1  
Թամրազ Դաւիթեանց շիկահող. 1  
Իվան Գր. Կարապետեան շիկ. 1  
Արսէն Աւագեան 1  
Միխայել Աթաբէկեանց 1  
Համբարձում Սարգսեան 1  
Ներսէս Բալաչանեան 1  
Սարգիս Գր. Սուրբաբեանց խնձ. 1  
Թիւոս Արզումանեան 1  
Ասլան Գրիգորեան 1  
Խաչատուր Թունիրեան 3  
Ալէքսան Առաքելեան խնածախ. 1  
Յովսէփ Աւագեան քարահունջ. 1  
Ներսէս Խաչատուրեան 1  
Խաչատուր Մէլիք Յակոբճանեանց 1  
Տանուտէր Յովակիմ Գիւլնազա-  
րեանց խնձորկ. 1  
Աղէքսանդր Տէր-Յակովբեանց  
տաթևեցի 1  
Աւետիս Բարսեղեանց քարահ. 1  
Գրիգոր Տէր-Յակոբեանց շուշ. 1

Արշակ Մախմուրեանց շուշեցի 1  
Բախշի Առստամեան թաղլ. 1  
Արմաստ Տէր-Գրիգորեանց իս-  
պահանցի 1  
Աւետիս Ղուկասեանց աշանցի 1  
Յակոբ Սարգիս Սարգիսեանց  
Տէր-Օհանեանց 1  
Ներսէս Գրիգորեան Յովակիմ-  
եանց 1  
Իսրայել Ա. Ստեփանեանց 1  
Գրիգոր Ղազարեան ուրդանչ. 1  
Աթանէս Ա. Մէթուումեանց 1  
Միրզայ Աւետեան խնձորկ. 1  
Գրիգոր Մէհրաբեանց Ղըշլաղ. 1  
Յարութիւն Յ. Ալէքսանեանց  
Կրիցթումբեցի 1  
Յակոբ Ավանէսեան կալերեցի 1  
Միխայել Դաւիթեան քարահ. 1  
Գրիգոր Անտօնեանց զանձակ. 1  
Ջհանգիր Տէր-Դաւիթեանց շէնհ. 1  
Արտեմ Տէր-Մկրտիչեան աշանցի 1  
Բաղդասար Բէլլարեան խնձ. 1  
Յակոբ Զաքիեան խնձորկ. 1  
Իշխան Միրզահան մերիչ. 1  
Ավանէս Միրզահան աւղոռ. 1  
Խաչատուր Բաղդասարեան խնձ. 1  
Ալէքսան Գրիգորեան ալղոռ. 1  
Համբարձում Ալլահիերդեան խնձ. 1  
Ավանէս Յակոբեան շէնհ. 1  
Խոսրով Դանիէլեանց Փիրջամ. 1  
Արգար Տէր-Դաւթեանց շէնհ. 1  
Խաչատուր Մ. Մանուցեանց  
Կրիցթումբեցի 1  
Աւետիս Տէր-Դաւթեանց 1  
Թեան Բ. Պետրոսեանց պառ. 1  
Բախշի Արամեանց քաթուկ. 1  
Աստուածատուր Խաչատուրեան  
մաղանջ. 1  
Զաքարայ Աւագեանց կուտղում. 1  
Կոստանդ Յակոբեանց շէնհ. 1  
Աղալոյ Տէր-Յարութիւնեանց  
վանանցի 1  
Օսէփ Բէկլարեան 1

Վարդապար Ավանեսան ուժան.	1	Կարասիմ Ոսկանեանց սիւնեցի	1
Աղաջան Իւզբաշեանց խնծ.	1	երգիչ	1
Նիկողայ Գալստեան	1	Ներսէս Սազանդարեանց երգիչ	1
Բաղդասար Ատիրեանց	1	Իլիան Անդրէասեան	2
Հասրաթ Օհանջանեան խնծ.	1	Արշակ Բ. Աթարէկեանց շուշեցի	1
Առստամ Գասպարեան բուժոնց.	1	Միխայիլ Թ. Գրիգորեանց	1
Իսաջան Հասրաթեան շէնաթ.	1	Դանիէլ Քեասիեան	1
Մանասան Յակոբջ. Խաչատուրեանց	1	Թէոփորոս Նաղուբ Բէկեանց	1
Աւագ Մ. Միրզախանեան փռճակոթ.	1	Աղալոյ Տէր-Սարգիսեանց	1
Շափաղաթ Զիլփիղարեան	1	Մովսէս Յովսէփեան	1
Խաչատուր Զ. Տէր-Աստուածաբան	1	Թադէոս Յովսէփեանց քալախ.	1
Աւանէս Աղ. Յակոբեանց	1	Միխայիլ Մխիթարեանց մեղ.	1
Համբարձում Բալեանց քալբ.	1	Ավանէս Մելքումեան քարագլխ.	1
Բարսեղ Ուհանեանց մեղրեցի	1	Յովհաննէս Յովսէփեան	1
Առաքել Բազումեանց խնծ.	1	Գարեգին Տէր Սող. Տէր-Անտոնեանց զափանեցի	2
Անդրէաս Յ. Նգանեանց նորաշէնք.	1	Սարգիս Թումանեանց փիփեցի	1
Դանիէլ Մկրտումեան մեղրեցի	1	Սայազ Գուլնազարեանց խնծ.	1
Ղուկաս Մովսէսեան գրքեցի	1	Արշակ Մ. Սարգսեանց խնծ.	1
		Բալարէկ Բէկլարեան փրնակ.	1
		Յարութիւն Պետրոսեանց մէհարիչ.	1



Հայաստանի Ազգային գրադարան



NL0432440

59.600